

ԱՄ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՂԱԶԱՐՈՍ  
ԱՂԱՅԱՆ

891.99.092 Աղայան

Ա-73

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1940

US

ՀԵՍՈՒ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092 Աղայը

Ա-73

Ա.Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

# ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

## ԿՅԱՆՔՆ

### ՈՒ

## ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ի՞նչքան տխուր է հնչում, թե 'Լազարը, կամ ընդհանուրին հասկանալի ձևով ասենք' 'Լազարու Աղայանը մեռավ, և ինչ զվարթ տրամադրությամբ է առաջ գալիս, յերբ մտածում ես, թե ուր կայր»:

«Ղ. Աղայանը մի հայակապ մարդ էր ու խոշոր մտածող, յերազող, գրող: Բայց նրա կյանքը անզիր անցկացավ»:

«... Նրա բոլորը շատ էին, տարածն ու կորածը - անազին»:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ




ՀՅ-ԻՅԵԾ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՊՈՒԾԻՆԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ



60384-67



Դ. ԱՂԱՅԱՆ



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչ խորհրդային շրջանի հայ նոր գրականություն և մանկավարժության պատմության մեջ Ղազարոս Աղայանը նըշանակալից տեղ է գրավում: Նրա գրական, կուլտուր-լուսավորական ու մանկավարժական գործունեությունը և անունը սերտորեն կապված են հայ հասարակական-գրական կյանքի վարդապետ անցյալ դարի հեռու-ուեփորմյան դարաշրջանի ամբողջ պատմության հետ:

Աղայանը խոշոր դեմք է և՛ վորպես մանկավարժ, և՛ վորպես գրող, և՛ վորպես հասարակական գործիչ: Ամբողջ 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի հայ դեմոկրատական կուլտուրայի անմահ ներկայացուցիչների շարքում Աղայանի անունը միանում է մի կողմից հայ նոր գրականության նախահոր՝ Ս. Աբովյանի ու մեծ հեղափոխական-դեմոկրատ լուսավորիչ Մ. Նալբանդյանի, մյուս կողմից՝ հայ ժողովրդի մեծագույն բանաստեղծ Հովհ. Թումանյանի անվան հետ:

Աղայանի կյանքն ու գրական և հասարակական գործունեությունը սկզբնավորվում է անցյալ դարի 60-ական թվականների սկզբից, հասնելով մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը ներառյալ:

Աղայանի գրաված այդ տեղը նշանակալից է և ինքնուրույն: Այդ հանգամանքը ժամանակին նշել է մեր ժողովրդի անցյալ շրջանի մեծագույն բանաստեղծը՝ Հ. Թումանյանը: Աղայանի գրական գործունեության 40-ամյակի առթիվ գրած իր հոդվածում <sup>1)</sup> Թումանյանը գրել է, վոր Աղայանն «իր շրջանում և իր սերունդի մեջ բաճում է մի շատ պատվավոր և առանձին տեղ: Նա նման չէ մեր գրագետից վաչ մեկին: Նա ամեն նյութի մեջ էլ ցույց է տվել ինքնուրույն մաշակ և յերբեք չի յեղել յերկրորդը»<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Հ. Թումանյան - «40 տարի», «Տարադ», 1902 թ. № 12:

Թուժանյանը նկատում է նաև, վոր չնայած Աղայանի գրական մեծութեանն ու ինքնատիպութեանը, ամբողջ «40 տարի հայոց մամուլը յերբեք չի գրադրել նրա գրական գործերով», արժանի գնահատական չի տվել նրա գործունեութեանը:

Յեւ իրօք, Աղայանի գրական գործունեութեանը հայ կղերական ու լիբերալ բուրժուական մամուլում հաճախ արհամարհանքի, յերբեմն ել հայտնաբերի (նույնիսկ փողոցային բառերով) յի արժանացել:

Աղայանի արժանիքները, նրա կյանքի ու գործունեութեան նշանակութեանը հայ գրականութեան, հայ մանկավարժութեան, հայ ժողովրդի լուսավորութեան դործի համար շատ բարձր են գնահատել անցյալում մեր կուլտուրայի ու գրականութեան դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները՝ հանձինս Հ. Թումանյանի, Վ. Փափագյանի, ինչպես և հայ ժողովրդի մեծ զավակներից մեկը, բոցաշունչ բողոքիկ Ստ. Շահումյանը:

Սակայն պետք է նշել, վոր Աղայանի անչափ հետաքրքրական կյանքի ու բազմակողմանի, բազմախոստակ գործունեութեան ամբողջական նկարագրերը, պատկերը դեռևս չի տրված թե անցյալում և թե նույնիսկ հեղափոխութեանից հետո, մինչեւ այսօր:

Աղայանը հետաքրքրական և ուշագրավ է վոչ միայն իր ստեղծագործութեամբ, իր լուսավորական ու մանկավարժական բազմակողմանի լայն գործունեութեամբ, այլև վորպես մարդ, վորպես քաղաքացի: Նա մեծ է վոչ միայն վորպես գրող, մանկավարժ-լուսավորիչ, այլև միաժամանակ վորպես բարոյական մեծութեան, մարդու, քաղաքացու, հասարակական գործչի բարոյական տիպար: Ինչ չի գրվել Աղայանի ամբողջական կենսագրութեանը, իսկ յերբ գրվի, ապա նրա՝ իբրեւ մարդու, քաղաքացու բարոյական դեմքի նկարագրութեանը պետք է առանձին ուշադրութեան առնվի:

Իր մի հոգավածում, անդրադառնալով նշանավոր գերասան Դեվորդ Չմշկյանի «Գաբրիել Սունդուկյանց» կենսագրական հոգավածին, Աղայանը նկատում է.

«Ափսոս, վոր նկարագրված չե, թե բնավորութեամբ ինչպիսի մարդ է Սունդուկյանցը: Յես չգիտեմ ինչու փախս են պալիս մեր կենսագրողները բնավորութեան նկարագրից, մինչև

դեռ կենսագրութեան աղն ու համեմբ հենց այդ ես<sup>1)</sup>: Աղայանի այս պահանջը հայ նշանավոր գրողներից, առաջին հերթին անհրաժեշտ է կիրառել հենց իր—Աղայանի նկատմամբ: Յեւ մենք անհրաժեշտ ենք համարում նախ պարզել նրա կյանքի ու բնավորութեան մի քանի եյական, բնութագրական գծերը և ապա կանգ առնել նրա ստեղծագործութեան վրա՝ ցույց տալու նրա տեղն ու դերը հայ նոր գրականութեան ու հասարակական կյանքի պատմութեան մեջ:

Կյանքի ու ստեղծագործութեան և հասարակական պայքարի ինչպիսի՞ ճանապարհ է անցել Աղայանը:

Այս հարցին պատասխանելու համար, նախքան նրա կյանքին ու գործունեութեանն անցնելը, այստեղ հիշենք այն, թե ինչքը, Աղայանն իսկական ազնիվ գրողի համար ինչպիսի՞ ճանապարհն էր անհրաժեշտ համարում:

1887 թվին, Հովհ. Հովհաննիսյանի «Բանաստեղծութեանների» առաջին ժողովածուին նվիրված իր քննադատական հոգավածում Աղայանը յերիտասարդ բանաստեղծին կոչ է անում ընտրել նրա նշած «յերկու ճանապարհներից» դժվարագույնը, հիշեցնելով հունական միֆոլոգիայից Հերկուլեսի որինակը: Պաշապանելով այն գաղափարը, վոր կյանքում յեղած «յերկու ճանապարհներից» (հեշտը և դժվարագույնը) դժվարագույնն ընտրելը գրողի ժրնական կոչումն» է, Աղայանն այդ գաղափարը հաստատում է Հերկուլեսի մասին յեղած հետեվյալ ավանդութեամբ:

Հերկուլեսն իրեն հանդիպած դիցուհիներից հետեվում է նրան, վորը Հերկուլեսի՝ «իսկ դու թեր կտանես ինձ» հարցին այսպես է պատասխանում.

«Յես չեմ կարող խոստանալ քեզ աշխարհային վայելչութեան, փափկութեան: Յես քեզ կտանեմ դեպի նեղութեան, տառապանք, դու կենթարկվես հազար ու մի վտանգների, բայց քո վարձը կլինի այն, վոր դու կընկնես դուրսգանանց կարգը և կանմահանաս:

—Տար ինձ քո հետեվից,—բացականչեց Հերկուլեսը, և գնաց քաջութեան ու առաքինութեան ճանապարհով:

<sup>1)</sup> Դ. Աղայան—«Խորհրդածութեան «Թուրճ» ամսագրի ընթերցումից հետո» («Աղբյուր», 1889 թ., № 2):

Բերելով այս որինակը, Աղայանն ավելացնում է.

«... Հովհաննիսյանն իբրև մեր բանաստեղծներից կրտսերագույնը, պարտական է դժվարագույն ճանապարհն ընտրել, վորպեսզի կարողանա ձեռք բերել այն, վորին յուր նախորդները հասնել չկարողացան»<sup>1)</sup>: Բանաստեղծը, գրողը, վորն էր «բնական կոչումով» «ժողովրդի լեզուն է, նրա սրտի հայտարարը և թարգմանը» պետք է հետեվի ճշմարտին, պիղծեցիկն է բարվոյն: Գրողները, բանաստեղծները — պետք է լինեն «բարոյապես ուժեղ մարդիկ, ճշմարիտ առաքյալներ, անկեղծ հայրենասերներ» և «գնան ազնիվ ճանապարհով, անվեհերությամբ, քաջի պես»<sup>2)</sup> — ստում և Աղայանը մի այլ հոգեվածում:

Ուշադիր նայելով Աղայանի անցած ավելի քան 70-ամյա ճանապարհին, ակնբախ է դառնում, վոր նրա վողջ կյանքն ու ստեղծագործությունը, նրա վողջ գրական, լուսավորական մանկավարժական ու հասարակական գործունեությունը սուգոված է յեղի «ճշմարիտ առաքելությամբ», «անկեղծ հայրենասիրությամբ» ու ժողովրդասիրությամբ, հերկուլեսյան անվեհերությամբ ու քաջությամբ, ժողովրդի լուսավորության ու ազատագրական գործին անձնագոհությամբ ծառայելու բուն ձգտումով: Այն, ինչ պահանջում էր Աղայանը գրական նոր սերնդից, ինքն այդպիսին էր հենց, նա ևս իր յերկու մեծ նախորդներին՝ Աբովյանի ու Նալբանդյանի որինակով՝ կյանքի ու գործունեության համար ընտրելով «յերկու ճանապարհներից» դժվարագույնը, հանդիսացել է «բարոյապես ուժեղ մարդու, ճշմարիտ առաքյալի և անկեղծ հայրենասերի» հիանալի փայլար, նա ևս իր ընտրած ճանապարհն անցել է «անվեհերությամբ, քաջի պես» ճիշտ այնպես, ինչպես իր հեքիաթների լիզախ, «անվեհեր» հերոսներն են անցել առասպելական աշխարհի դեպիլորով, վիշապներով ու քաջքերով լի ուղիներով, նրանց հաղթելու և վոհնչացնելու փճաականությամբ: Իր բարոյական դեմքի մի շարք հիմնական գծերով Աղայանը կարող է համեմատվել ամենից առաջ Մ. Նալբանդյանի հետ, վորից, ինչպես կտեսնենք իր սեղում, վոչ միայն ազդվել էր գաղափարապես,

1) «Աղբյուր», 1887 թ., № 10, էջ 94-95:

2) «Աղբյուր», 1887 թ., № 9 էջ 80:

այլև հասարակականորեն ժառանգել էր նրա բարոյական դեմքի հիմնական գծերը, տարբերվելով նրանից ընամբողջյան տարերայնությամբ, անմիջականությամբ, փոքր ինչ մասնական սոմանտիկ պարզությամբ: Անկեղծություն, շխտակություն, անհաշտ ասելություն գեղի իր գաղափարական հակառակորդները, իր գաղափարները նրանցից անգիշում ու կրքոտ պաշտպանելու՝ մարտնչող կուսակցականությամբ, հասնող հաստատականությամբ, պայքարում խիզախությամբ ու համարձակությամբ, կյանքի դժվարությունները կրելու տոկունությամբ և հաղթահարելու կամք, սոցիալական վառ ուղիով իմ և նպատակասլացություն, բայց նաև մանկական պարզամտություն, ուսուցիական սովորատիվ, ահա այն հիմնական գծերը, վոր աչքի յեն ընկնում Աղայանի կյանքում, դեռ, վորոնք իրենց վառ արտահայտություններն են ստացել նաև նրա աշխարհայացքի ու ստեղծագործություն մեջ:

Աղայանը ծնվել է 1840 թվի ապրիլի 4-ին և իր գրական գործունեությունն սկսել է 60-ական թվականների սկզբից (առաջին տպագիր գործը՝ «Հարկավոր է ոգնել չքավորներին» վոտանավորը «Մեղու Հայաստանի»-ում, 1862 թվականի մայիսին, № 19): Նրա հարուստ կյանքն ու գործունեությունն ընդհատվում է 1911 թվի հունիսի 20-ին, հանկարծական ցնցող մահով:

Այսպիսով, Աղայանի գրական-հասարակական գործունեությունը կես դարի պատմություն ունի, մի պատմություն, վորի ստեղծագործությունն անշափ հետաքրքրական է գրական-մանկավարժական ու հասարակական-քաղաքական մտքի զարգացման տեսակետից: Աղայանը ուշադրավ ու որիզինալ դեմք է, և այդ վոչ միայն իր ստեղծագործություններով ու աշխարհայացքով, այլև նրանով, վոր նա 19-րդ դարում առաջին և գրեթե միակ ինքնուս՝ բանվորի դրությունից բարձրացած էլիտն ու մանկավարժն է, «հայ գրաշարների նախահայրը» — ինչպես նշված է յեղի «Քիֆլիսի տպարանական գործի հայ բանվորներին» անունից Աղայանի գաղափր վրա գրված ծաղկեպսակի մակագրության մեջ<sup>3)</sup>: Աննշան ու անկարելիոր չէ այն փաստը, վոր Աղայանը ծնվելով բուն ժողովրդի ծոցում, կյանքի ամենազաժան պայմաններն ու խոչընդոտները հաղթահարելով, համա-

3) «Հորիզոն», 1911 № 139:

ըյա ամբողջովին ինքնակրթութեան ճանապարհով, հասարակ գրա-  
շարի դրութեանից բարձրացած և դարձած հայ դեմոկրատական  
կուլտուրայի ամենակարկառուն ղեմքերից մեկը 19-րդ դարում՝ Խ.  
Արովյանից ու Մ. Նալբանդյանից հետո և Հ. Թումանյանից առաջ:

Ազգայնի պրական ու հասարակական գործունեություն մեջ,  
նրա աշխարհայացքի մեջ ցայտուն արասցուում և գտել հայ  
հասարակական կյանքի զարգացումը սկսած Արովյանին ունեւի-  
շապես հոշորդոց շրջանից (19-րդ դարի 50—60-ական թվա-  
կաններից) մինչև 20-րդ դարի սկիզբը: Այդ գործունեությունն ու  
աշխարհայացքը հասկանալի կլինեն միայն այն դեպքում, յեթե  
յեւակեա ունենանք հասարակական հարաբերութեաների զար-  
գացումը հեռուներումս ամբողջ ժամանակաշրջանում վոչ  
միայն հայերի կյանքում, այլև վոչ Ռուսաստանում, վորով-  
հետև հայ ժողովրդի պատմական բազը, 19-րդ դարի սկիզբից  
սկսած, սերտորեն կապված և Ռուսաստանի կյանքի, նրա  
ազատագրական շարժման, հեղափոխական պայքարի պատ-  
մութեան հետ:

Ռուսաստանի պատմական իրադարձութեաները, նրա հասա-  
րակական-քաղաքական կյանքի ընթացքի ուղղութեանը, հասարա-  
կական-քաղաքական մտքի հոսանքները, վոչև կուլտուրան՝  
իրենց անմիջական ազդեցութեանն են ունեցել հայերի կյան-  
քում: Ավելին. անգամ արեւմտա-յեւրոպական կուլտուրայի ու  
զրականութեան ազդեցութեանը հայերի կյանքում պերական-  
ցապես յիղել և ուսական կուլտուրայի ու գրականութեան  
միջոցով:

Կենինը Ռուսաստանի համար 1861—1905 թվերի ժամա-  
նակաշրջանը բնութագրում և վորպես մի ամբողջական դարա-  
շրջան, վորի հիմնական բովանդակութեանն այն պայքարն էր,  
վոր մղվում էր ճորտատիրական իրավունքի—ֆեոդալիզմի  
մնացորդների դեմ, հոգուա Ռուսաստանի յեւրոպականացման,  
հոգուա կապիտալիզմի զարգացման: Այդ ժամանակաշրջանի  
համար 1861 թվականը յիւակեաային մոմենտ և հանդիսանում  
է՝ տնտեսական կյանքի զարգացման համար, և հասարակական-  
քաղաքական մտքի հոսանքների համար:

Իր նշանավոր հոդվածներից մեկում («Ինչպիսի՞ ժառանգու-  
թեանից ենք մենք հրաժարվում») Կենինը նարողնիկութեան

հայացքների բնութագրութեանն ու քննադատութեանն սկսում  
և հենց այսպես կոչված «գյուղացիական» սեփորմից, վորպես  
յիւակեաային գրութեանից, մի «յեւակեա»,—նկատում և Կենինը,—  
պեղի վորը մինչև վ այժմ էլ անխուսափելիորեն պետք է  
վերննխանա ամեն վոք, սվ ուղում և շարադրել իր ընդհանուր  
հայացքները անտեսագիտական և հրապարակախոսական հար-  
ցերի վերաբերյալ»: (Ленин, Соч. т. II, стр. 306):

Բայց նկատի ունենալով այդ յեւակեա, հարկավոր և հասա-  
րակական մտքի զարգացումը քննել հեռուներումս դարաշրջանի  
վոչև ընթացքի սերտ ասքնչութեամբ, մի զարաշրջան, վորի բո-  
վանդակութեանը Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման  
ուղիների համար մղվող պայքարն է: Կենինն իր «Սոցիալ-  
դեմոկրատիայի ազրարային ծրագիրը 1905—1907 թվերի ուսական  
առաջին հեղափոխութեան մեջ» աշխատութեանում առանձնա-  
պես նշում և, վոր «Ռուսաստանի ամբողջ հեռուներումս պատ-  
մաբան միջով կայմիր քիլի պես անցնող գյուղացիական և կա-  
վածատիրական շահերի կոնվն և, վոր կազմում և մեր հեղա-  
փոխութեան տնտեսական կարեւորագույն հիմքը, մի կոնվ, վոր  
մղվում է բարձրական ազրարային եվոլյուցիայի այս կամ այն  
տիպի համար:

Այս տիպերի տարբերութեանը և յերկուսի յել բարձուա-  
կան բնույթը հստակութեամբ բնութագրելով միայն, մենք կարող  
ենք նիշտ բացատրել հողային հարցը ուսական հեղափոխու-  
թեան մեջ և հստակապ գանագան կուսակցութեանների ցուցա-  
դրած ազրարային գանագան ծրագրերի դասակարգային տար-  
բերութեանը» (Ленин, Соч. том. XI, стр. 350—351):

Կենինի այդ մտքերը վերաբերում են նաև հայ հասարակա-  
կան կյանքին: Մեզանում էլ նույնն էր տեղի ունենում, կոն-  
սերվատիզմի, լիբերալիզմի և դեմոկրատիզմի միջև մղվող  
պայքարը պատվում էր ֆեոդալական-ճորտատիրական կարգերի  
ուղրանց մնացորդների շուրջը, ցարիզմի ազգային ճնշման  
թի և նրա հովանավորութեամբ տիրապետող կղերական-կրոնա-  
կամ իդեոլոգիայի ու յեկեղեցու տիրապետութեան դեմ:

Ահա այդ բնութանուր պայքարի զարգացման շրջանակի  
մեջ և կազմակերպվել նաև Դ. Ազգայնի աշխարհայացքը, ընթա-  
ցել նրա կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը:

# I. Կ Յ Ա Ն Ք Ը

Անչափ հարուստ ու հետաքրքրահան և Աղայանի կյանքի պատմութեանը, վորն ընդգրկում է անցյալ դարի 40-ական թվականներից սկսած մինչևի՛մ ներկա՝ 20-րդ դարի առաջին տասնամյակը ներառյալ: Դա մի շատ հարուստ ու նշանակալից ժամանակաշրջան է հայ ժողովրդի պատմութեան և հայ հասարակական մտքի ու գրականութեան զարգացման համար, վորին սերտորեն կապված է Զ. Աղայանի անունը, նրա կյանքն ու գործունեությունը:

«Յեթն մեկի կենսագրությունը կրթական վաշինչ չի պարունակում իր մեջ, չարժե գրել»<sup>1)</sup>—նկատել է Աղայանն իր ինքնակենսագրականում և այդ առթիվ ել հայտնել այն միտքը, վոր «կյանքից ստացած փորձառությունն ևս մի հարստություն է հետնորդներին կտակելու արժանի»<sup>2)</sup>: Յեվ հենց ինքը՝ Աղայանը մեր ժողովրդի վերջին հարյուրամյակի այն նշանավոր գործիչներից մեկն է, վորի վոչ միայն թողած գրական ժառանգությունը, այլև բազմամյա կյանքը կրթական շատ բան է պարունակում «հետնորդներին կտակելու արժանի»:

Այստեղ, սակայն, հնարավոր չէ նրա ամբողջ կենսագրությունը շատ հանգամանորեն տալ, մենք փորձում ենք այն ներկայացնել ամենահիմնական և ընդհանուր դեքրով:

Իր մանկությունն ու պատանեկությունը, մինչևի՛մ 13 տարեկան հասակը, նա անց է կացնում հայրենի գյուղում: Այստեղ և այս մերձակա Շամշուղի գյուղի քահանայի մոտ սովորել է գրագիտություն՝ արտակարգ ընդունակությամբ և ընթերցասիրությունը զարմացնելով թե իր ուսուցչին և թե շրջապատին:

Յնտանդուն և ուսումնասիրալ պատանին տեղ Պետրոսի մոտ 2—3 տարում ավարտեց այն ժամանակվա գյուղական կրթության ամբողջ դասընթացը—ստորինից մինչևի՛մ «բարձրագույնը», անցնե-

լով «Աստվածաշունչը, Շարական, քրիստոնեական վարդապետություն, քերականություն, անգամ Ալեքրոտի աստվածաբանությունը»: Երևի ազատ կարգալու գրքերից՝ Հարանց վարք, Այսմավուրբ, Պղնձե քաղաքի պատմություն, Յոթն իմաստասիրաց դիրքը, Տաթևիայու հատարները և ուրիշ զանազան բարոյական բովանդակություն ունեցող գրքեր»: Այս ամենը կարդալ տալուց հետո, յերբ Աղայանը 13 տարեկան եր, գյուղի «գիտունը» համարվող տեղ Պետրոս քահանան հայտնում է իր աշակերտին, «վոր ել բան չի թողել, բոլորն ել սովորեցրել եմ» նրան: Բայց ուսումնասիրալ ու հարցասեր պատանին, վոր իր գիտելիքներով արդեն յետ եր թողել գյուղական «ժողովրդի աչքում գիտնական» յերեկացու իր այդ ուսուցչին, չեր կարող բավականանալ նրա տվածով:

Յեվ ահա 1852 թվին պատանի Աղայանն արդեն Թիֆլիսումն եր: 1853 թ. նա ընգտնվում է Ներսիսյան դպրոցի նախավերջին դասարանը. «...բայց ինչ վոր ավանդվում եր այդտեղ, յես արդեն գիտելի, այնքան վողորմելի բան եր այդ ուսումնարանը, թեև Շամշուղն եր տեսուչը»—նկատում է Աղայանն իր ինքնակենսագրականում<sup>1)</sup>: Այդ պաճառով ել անհանգիստ պատանին թողնում է Ներսիսյան դպրոցը և վերադառնում հայրենի գյուղը, ծնողների մոտ:

Ինչքան ել շատ գիտելիքներ տված չլինեք Ներսիսյան դպրոցը պատանի Աղայանին, այնուամենայնիվ այդ դպրոցն իր միջավայրով և Թիֆլիս քաղաքը՝ գյուղական պատանու համար նոր, հետաքրքրահան կյանքով, շատ բան փոխում են այնքան արտնայնորդ ու զգայուն պատանու մեջ: Յեվ յեթե մինչևի՛մ առաջին անգամ Թիֆլիս գնալը պատանի Աղայանը տարված, կլանված եր իր դասընկերուհու—Մայիկոյի խելացի սիրով, այս, ինչպես ինքը՝ Աղայանն է գրել, Թիֆլիսում յեղած միջոցին «այդ սիրո տեղ իմ մեջ զարթնեց մի նոր սեր—սեր առ ուսումն և սա ել նույնքան ազիտալի դարձավ ինձ համար, ինչքան առաջինը: Տագրվելով նոր գաղափարներով, ուղափոխվով շատ նախապաշարմունքներից, սկսեցի անխնա հարձակվել այդ նախապաշարմունքների դեմ, վորով զայրացրի հորս...»:

<sup>1)</sup> «Իմ կյանքի պատմությունը գեպրերը», 1893 թ., էջ՝ 7:

<sup>1)</sup> Զ. Աղայան — «Իմ կյանքի պատմությունը գեպրերը», 1893 թ., էջ՝ 24:  
<sup>2)</sup> Նույն տեղ, էջ՝ 5:

Աղայանը Թիֆլիսից գլուզ վերադառնալով, հույս ունի, վոր հայրը հոգ կտանի իր վորդու հետագա կրթութեան մասին: Բայց,—ասում է Աղայանը,—«նա վոր միայն չողնեց ինձ, վոր յես շարունակեմ ուսումս, այլ կրկին անգամ դուրս արով ինձ տանից, իբրեւ ասածս ծրից դուրս յեկած անտուակ վորդուս»<sup>1)</sup>:

Հարածված իր նախապաշարված ու կոպիտ հորից, պատանի Աղայանը «նոր սիրով» վառված ու «տոգորված նոր պաշտօնները» առաջին շողերով, վեց-յոթ տարի Թաիստուական կյանք է անց կացնում ազատ գյուղական բնութեան սրբուհի և գյուղական ժողովրդի ծոցում:

«Յոթը տարուց հետո յես ընկա տպարանական ձուլարանն իբրեւ աշակերտ, վոր այդ արհեստը սովորեմ...»<sup>2)</sup>, — գրում է Աղայանը: Այդ Թիֆլիսում Համբարձում Ենֆիաճյանի տպարանն էր, ուր Աղայանն ընդունվեց 1859 թվին:

Թեև ստակալի ծանր էր գրաշարական աշխատանքը, բայց, չնայած դրան, Ենֆիաճյանի տպարանը պատանի յերիտասարդի համար առաջին լուրջ դպրոցը հանգիստացավ, վորտեղ դրվեց նույն հետագա կյանքի ու գործունեության հաստատուն սիկրըր Աղայանը հետագայում անհուն յերախոտալիտական գրացմունքով է հիշում և գրում այն տարիների մասին, յերբ նա գրաշարութեան սովորեց, դարձավ հմուտ գրաշար և շատ գլուխ չափով քվեկացրեց իր գրադիտութեանը ազատ ինքնակրթութեան, յետանգուն ընթերցանութեան միջոցով: Ենֆիաճյանը հոգատար վերաբերմունք հանդես բերեց իր աշխատասեղ, ընթերցասեր գրաշարի նկատմամբ, այնպես վոր կարճ ժամանակամիջոցում աշակերտից նա դարձավ վարպետ, հնարավորութեան ունենալով ընթերցանութեամբ տպարակելու:

Այստեղ Աղայանը շարունակ էր «Կուռնիկ» ամսագիրը, արժանանալով նաև նրա խմբագրի՝ Մարկոս Աղաբեկյանի սիրուն «Գրաշար էյի, այո, բայց սրինավոր գրաշար. հեղինակներն ինձ էյին հանձնում իրանց գրքերի սրբագրութեանը: «Կուռնիկ»-ի սրբագրողը Պոտյանցն էր, բայց նա հիվանդանում էր ոտեպ, և այն ժամանակ յես ու Համբարձում աղան էյինք սրբագրում միասին նույնիսկ Աղաբեկյանի գրածները, վոր նոր էր

1) «Իմ կյանքի քլիտավոր դեպքերը», 1893 թ., էջ՝ 8:

2) Նույն տեղ, էջ՝ 9:

սկսել արեվելյան բարբոտով գրելը<sup>1)</sup>: Աղայանն այնուհետև նենց վորպես բանիմաց և ընթերցասեր պատանի, ուշադրութեան ու հետաքրքրութեան առարկա յե դառնում Թիֆլիսի այն ժամանակվա հայ ինտելիգենցիայի շրջանում, ուր ձեկավորվում են նրա հայացքները, կանխանշվում հետագա գործունեության հեռանկարները:

Թե ինչքան վճռական էր համարում ինքը՝ Աղայանը գրաշարական աշխատանքը Հ. Ենֆիաճյանի տպարանում, այդ յերկվում է նրա հետեվյալ խոսքերից, վոր գրել է նա շատ տարիներ հետո, 1888 թվին: Յերախոտալիտական խորը գգացմունքով հիշելով իր մեծ բարերարին, «այն ժամանակ առաջին անգամ» իրեն «նրատանած միակ լավ մարդուն»<sup>2)</sup>, Աղայանը գրել է, վոր յեթե ինքը հետագայում «միշտ գրաշար չի մնացել», այլ կարողացել է նշանակալից դեր խաղալ կուլտուրա-լուսավորական, գրական ու հրատարակատեսական ասպարեզներում, հանդես գալ վորպես «ուղևորան-խմբագիր, անոգնական խմբագիր, ուսուցիչ, տեսուչ, Թեմական վերատեսուչ, հեղինակ, Թարգմանիչ և այլն, անա այս ամենը ծնունդ էն առել իմ գրաշարութեանից»<sup>3)</sup>: Յեկ «գլխեք արդյոք, վոր յեթե Աղայանը գրաշար յեղած չլիներ, արհեստի սիրահար չլիներ, «Անահիտ» չեր գրել»<sup>4)</sup>:

Ենֆիաճյանի տպարանում աշխատելու և Մարկոս Աղաբեկյանի անմիջական ազդեցության շնորհիվ, մանավանդ Մոսկրվայեց ստացվող «Հյուսիսափայլ»-ի հուզող ազդեցութեան շնորհիվ յերիտասարդ Աղայանն ազդեց ճանաչել հետաքրքրութեան և հանդես բերում այն ժամանակ Թիֆլիսում ծավալվող հայ հասարակական մտավոր շարժման նկատմամբ: Նա հանդիսատես էր հասարակական հոսանքների սուր պայքարին, վորը շատ սրվեց հատկապես «Հյուսիսափայլ»-ի հրատարակումով: «Հյուսիսափայլ»-ը դարձավ այդ պայքարի ներշնչողն ու գրողակալիրը: Թիֆլիսում հայ յերիտասարդութեանն իր հիմնական մասայով, Աղայանի իսկ վկայութեամբ, հետեվում էր «Հյուսիսափայլ»-ին, վորոշ չափով նաև «Կուռնիկ»-ին: Յերիտասարդութեանն ստաջավոր ինտելիգենցիայի ղեկավարութեամբ կատարվի հակա-

1) «Իմ կյանքի քլիտավոր դեպքերը», էջ՝ 11:

2) Նույն տեղ, էջ՝ 11:

3) «Աղբյուր», 1888 թ., № 12:

4) Նույն տեղ:

ուսուցիչան մեջ էր կղերականացանողական սերնդի հետ Աղայանը պատմում է այն «մեծ դժտութեան», այսինքն պատահածան ու կռիւ մասին, վոր այդ շրջանում «բնկալ ծերերի ու յերիտասարգների մեջ»:

«Իմ հեղած ժամանակ Կերսիայան գարոցի նորավարտ աշակերտները բոլորն էլ «Հյուսիսափայլ»-ին էյին համակրում և սրտատարոսի սպասում էյին Կոմս Եմմանովիկ գրվածքներին»<sup>1)</sup>:

Համարձուժում Եմմանովիկի տպարանում աշխատելիս Աղայանի համար ստեղծված միջավայրը նրան մղում էր առիտ, սկսելով հետաքրքրութեամբ դարձեցնում նրա մեջ դեպի հասարակական-քաղաքական իշխանքը, խորհելու և ակտիվութեամբ մասնակցելու «ձերերի և յերիտասարգների» միջև սկսված ու բորբոքվող պայքարին, վորին սկանառես էր նա:

Յերիտասարգ Աղայանի հասարակական-քաղաքական այդ ակտիվութեան և ըմբռնութեան ատաղին գրական արտահայտութեանը նրա այն վտանավորն է, վոր տպվել է «Մեղու Հայաստանի»-ի 1862 թվի № 19-ում:

Այդ վտանավորը գրական թոթովանք է և արվեստի սեփականից առանձին ուշադրութեան արժանի չէ: Բայց Աղայանի աշխարհայացքի ատաղին, ավելի ճիշտ է ասել՝ նախնական շրջանի բնութագրման համար, շատ կարևոր դոկումենտ է դա և այստեղ ակտիվոր չենք համարում դրա վրա մի փոքր կանգ առնել:

Ինչ է ներկայացնում այդ վտանավորը

Սկանակ բանաստեղծ Աղայանը նախ նկարագրում է բնութեան գեղեցիկութեանը— «անուշիկ գարնան զվարթ որերը» և հայտնում իր տպավորութեանները: Նա «մենակ, անընկեր» շրջում է ազատ բնութեան գրիում, յեղում բարձր բլուրների վրա և գիտում իր չորս կողմը՝ հիանալով բնութեան գեղեցիկութեաններով այնուհետև:

«Լցված ցնծութեամբ իջա վերելից,  
Զբանում էյի նորա ստորոտում,  
Նոգան բարութեանց վայելողների  
Տեսութեանն էյի միայն փափագում»:

<sup>1)</sup> «Մի յերես մեր նորագույն պատմութեանից», 1891 թ., էջ 39:

60384-67

Բայց Աղայանն անպատկեր տխուր պատկեր է տեսնում բլուրների «ստորոտում»: Նա տեսնում է, վոր աշխատավոր մարդը, մասնավորապես հայ գյուղացին, բնութեան այնքան առատ «բարութեանց վայելողը» չէ:


Ահա նա հանդիպում է մի ծեր մարդու, վոր ման էր գալիս գլուխը քարը գցած, ունեք հագին հին, մաշված շորեր և իր ձեռքին գավաղան բռնած: Յերիտասարգ բանաստեղծը, վոր քիչ առաջ բնութեան սքանչելի գեղեցիկութեաններից «լցված էր ցնծութեամբ», ծերունուն տեսնելով հիասթափվում է և հետաքրքրութեամբ մտանում ու հարցնում.

«Ինչպե՞ս էք այստեղ դուք կոտավարվում,  
Ունե՞ք կայք, կարված և հանգիստ կեցցադ,  
Թե՞ միշտ եմ այդպես ստոր վիհակում»:

Ծերունին հուսահատ և տխուր պատասխան է տալիս: Նա պատմում է, վոր իրենք՝ իրենց շրջապատող բնութեան «եսքան բարութեանց վայելողներիցը» չեն, վոր իրենք դրված են բնութեան բարիքները վայելելու հնարավորութեանից ու իրավունքից և վոր իրենք շատ խեղճ ու դուրի ին տպրում անորեն կարգերի ճընշման տակ.

«Տեսնում ես դու այս սիրուն գաշտկոր,  
Վորոնք գրավում են շատերի հողին,  
Չկարծես թե, գրանց մենք ենք վայելում...  
Արհեստ, գիր, լեզու, որենք ասած բանդ  
Չգիտենք, թե ինչ է նշանակում,  
Թե կամիս բոլոր մեր պահասութեան  
Յեկ մեր նեղութեան գառն պատճառներն  
Իմանալ վորդյակի այդ գովարին է,  
Վասնզի լուռ են մեր լեզուները»:

Ազատ բանաստեղծը հրաժեշտ ապով ծերունուն, դառն, ճնշող տպավորութեամբ, վերադառնում է իր «խեղճ բնակարանը և հաշիվ տալիս իր տեսածի մասին», խորհում դրանց պատճառների ու վերացման միջոցների մասին. նա մտահոգվում է այն հարցով, թե «ի՞նչ է պատկառը, վոր նրանք (այսինքն հայ աշխատավոր ժողովուրդը, գյուղացիութեանը — Ա. Ա.) կարող են մնում արհեստի, ուսման» և «ի՞նչ միջոցով» կարելի յի ողնել



նշանց, վորպեսզի նրանք իրենց աշխատանքի և ընտելյան բարիքների ազատ տերերն ու վայելողները գտնանան:

Մեր կարծիքով Աղայանի այս վտտանավորի մեջ, գյուղացիական դեմոկրատիզմի դիրքերից, թող վոր նայիվ ու թույլ զարգացած ձեւով՝ գրված են 60-ական թվականների հայ հասարակական կյանքի համար ախտուալ հարցեր: Յերիտասարդ գրաշար բանաստեղծը հասարակական ուշադրութեան առարկայի դարձնում հայ գյուղական ժողովրդի աղքատ ու խավար կյանքը՝ բնութեան բարիքներն ազատորեն վայելելու պահանջով: Սոցիալական-քաղաքական անհավասարութեան, ազգային ճնշում, գյուղական ժողովրդի նյութական և իրավական թշվառ ու անոգնական վիճակն ու կուլտուրական տեսակետից հետամնաց լինելը, «որենքի» բացակայութեան, — ահա այս հարցերն են զբաղեցնում Աղայանին:

«Յերբ տպվեց, — գրում է Աղայանն իր այս վտտանավորի մասին, — ցույց տվի սր Աղաբեկյանին. նա. հավանեց և ասաց. «Աշխատիր չհուսահատվես, դու ապագա ունես. միայն այստեղ չմնաս, դնա Ռուսաստան: Կսկի եմ արդեն մտադրութեան ունես դնալու, դնա, մի վախենար, ձեռքիդ արվեստ ունես, քաղցած չես մնար: Բա դնալով մենք կը զրկվինք քեզ պես մի շնորհքով գրաշարից, բայց հոգ չե, քո բախտավորութեանը չպիտի դո՛հենք մեր ոգտին: Ժամանակին դու կարող ես ավելի մեծ ոգուաներ տալ, յես այս հույան ունեմ քեզանից: Այդ գրածիդ նշանակութեան մի տար, աշխատիր ուսումդ կատարելագործել, յես քեզ գրանով չեմ չափում: այլ քո ընդունակութեամբդ, վորի չափն ու գինը գուցե դու ինքը չզիտես»<sup>1)</sup>:

Դյուրագոգաց և խանդավառ յերիտասարդին անհուն վերելորութեան պատճառեցին այդ խրախուսական խոսքերը՝ ասված այն ժամանակվա կովկասյան հայ ինտելիգենցիայի մի շատ պատկառելի ու անվանի ներկայացուցչի կողմից:

Յերիտասարդ Աղայանն այդ ժամանակ տոգորված էր վոչ միայն ուսմամբ, գիտութեամբ, այլև մանավանդ իր ճնշված ու անչափ խավար, հետամնաց հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ ունեցած սիրով:

1) «Իմ կյանքի գլխ. գեպը», էջ 21:

Նա արդեն անվանի և խելացի յերիտասարդի համբավ էր վայելում իր շրջապատում. «որը մեկ միջնորդ էր դալիս մասս և մեծ ոճիտով սիրուն աղջիկ առաջարկում», առտպելական խոստումներ անում — բախտ, յերջանկութեան, անկախ դիրք, փաստվոր ապագա»<sup>1)</sup>:

Այդ մասին հիշելով, Աղայանը նկատում է. «Այս գայթակղական հանդամանքից կնվաճվեր իմ ուսման սերը, յեթե այդ սիրո վրա ավելացած և աճած չլիներ իմ մեջ և հայրենիքի սերը»:

Հայրենիքի, ժողովրդի սերն էր, վոր մղում էր յերիտասարդին կանոնավոր ուսում ստանալ, ձեռք բերել բարձր կրթութեան, վորով կարելի կլիներ ծառայել նրա լուսավորութեան գործին, նպաստել նրա ազատագրական ձգտումներին:

1861 թվին, Մկրտիչ վարդապետ Թրեմյանի համձնարարութեամբ, Թիֆլիս էր յեկել Գարեգին Մովսեսյանը: Նա առաջարկում է Աղայանին իր հետ գնալ Վերսալա վանքը, այստեղ հիմնված սուրբանը կարդավորելու: Բայց Աղայանը հրաժարվում է, չի ուղում գնալ:

«Յես չհամաձայնվեցի և իրան համոզեցի, վոր վարագ գնալուց առաջ ինձ հարկավոր է յերթալ ուսումս և արձեստս կատարելագործել, այժմյան ունեցածովս սղտակար լինել չեմ կարող...»<sup>2)</sup>:

«Կուռնկ»-ի խմբագիր Մարկոս Աղաբեկյանը շարունակում է խրախուսել իր շնորհալի, ուսումնասեր ու հայրենասեր բանաստեղծ-գրաշարին՝ Ռուսաստան գնալու միտքը չխոցնել:

Յեկ նա չթողեց այդ գեղեցիկ ու կոխարդիչ միտքը: Իր գրաշար ընկերոջ, Միքայելի հետ միասին, 1862 թ. ամռան մի օր, Աղայանը հրաժեշտ և տալիս Թիֆլիսին և ուղեվորվում գեպի Մոսկվա, անցնելով յերկարածից, գծվար և արկածալից մի ճանապարհ գորը շատ կենդանի կերպով նկարագրված և նրա ինքնակենսագրականում («Իմ կյանքի գլխավոր գեպերը», 1893 թ.):

1862 թվի նոյեմբերին Աղայանն իբր սիրելի գրաշար ընկերակց հետ վերջապես յերագած քաղաքումն է, Մոսկվայում: Այդ սրվանից մի նոր, շատ հետաքրքրական և նշանակալից շրջան

1) «Իմ կյանքի գլխավոր գեպերը», էջ 24:  
2) Նույն տեղ, էջ 24:

և սկսվում Աղայանի կյանքում, մի շրջան, յերբ հաստատապես կազմակերպվեց, ձեկավորվեց հետագա մեծ գրողի, մանկավարժի ու հասարակական գործչի աշխարհայացքը, վորոշվեց նրա անցնելիք ուղին:

Հինգ տարի մնաց Ռուսաստանում Աղայանը. աշխատանքի անապահովության պատճառով այդ ժամանակամիջոցում նա մերթ Մոսկվայում է լինում, մերթ Պետերբուրգում և ամենամեծ լարվածությամբ հետեւում ու կլանում է 60-ական թվականների մտավոր ու հասարակական շարժումների առաջավոր գաղափարները:

Առաջին տարին նրան չի հաջողվում աշխատանք գտնել Մոսկվայում: Նա դիմում է Նազարյանին, բայց անսպասելիորեն վոչ միայն մերժվում, այլև շատ կոպիտ, անգույժ վերաբերմունքի հանդիպում՝ «Հյուսիսափայլ»-ի համբավվոր խմբագրի կողմից:

Ստիպված մեկնում է Պետերբուրգ, ուր ընդունվում է աշխատանքի՝ Գիտությունների Ակադեմիայի տպարանում, իբրև վ գրաշար արեվելյան լեզուների: Բայց 1863 թվի սկզբներում նա տեղափոխվում է Հովհաննես Պատկանյանի (Ռաֆայել Պատկանյանի յեղբայրը) նոր հիմնած տպարանը, ուր Աղայանն սկսեց շարել նաև «Հյուսիս» շաբաթաթերթը: Սակայն Պատկանյանների (մանավանդ Ռաֆայելի) գաժաճ վերաբերմունքը չկարողանալով տանել, Աղայանը ատելուծյամբ թողնում, հեռանում է նրանցից:

Նույն թվի վերջերին, յերբ մոտ մի տարվա գաղաբից հետո վերսկսվում է «Հյուսիսափայլ»-ի հրատարակությունը, նազարյանը գրում է Մարտիրոս Սիմոնյանին, վոր իր համար մի հայ գրաշար գտնի և ուղարկի Մոսկվա: Առաջարկված պայմանը ձեռնտու չէր. Աղայանը համաձայնվում է գալ և մի ամբողջ տարի աշխատում է վորպես «Հյուսիսափայլ»-ի գրաշար: Մ. Շահադիդի «Լեվոնի վիշտ»-ն էլ Աղայանն է շարում: Շարելով «Հյուսիսափայլ»-ի վերջին տարվա գրքույկները, Աղայանը կենդանի վկա յե յեղև և հետագայում գրել է, վոր Նազարյանի ստորագրությամբ տպված «Ազգային թշվառությունը» հոդվածը

պատկանում էր Միք. Նալբանդյանին, գրված Պետրոպոլիսյան բերդում, ուր փակված էր նա 1862 թվի հուլիսի 29-ից:

Աղայանն իր զարգացման համար շատ նշանակալից ու վճռական է համարում Մոսկվայում անցկացրած այդ մեկ տարին: «Մոսկվայում մնացի յես 63 թվականի վերջերից մինչև 64-ի վերջերը և այդ վոքք ժամանակամիջոցը կարելի յե համարել իմ մտավոր զարգացման վտակգարը»: Յեվ այդ այն բանի շնորհիվ, վոր «Հյուսիսափայլ»-ի տպարանում աշխատելիս, — պատմում է Աղայանը, — «յես ժամանակ ունեցա իմ ինքնակրթությունս մի սխտեմի տակ ձգել, պարապել վորոշ ծբագրով, գիտությունների տարերք ստանալով»<sup>1)</sup>: Թեև Համալսարան մանելը և սխտեմատիկ բարձր կրթություն ստանալը հաջողվեց, այնուամենայնիվ ուսումնատենչ և աշխատասեր, յեռանդուն յերիտասարգը յետ չմնաց շատ համալսարանականներից, այլ նույնիսկ առաջ անցավ նրանցից շատերից: Նա ինքը ինքնագարգացման «համալսարանն» անցավ Մոսկվայի համալսարանի մի խումբ ուսուսանողների ոգնությունը:

«Ուսանողներն ինձ վրա առանձին ուշադրություն էյին դարձնում և զարմացած էյին մնացել, վոր քսանչորս տարեկան մի յերիտասարգ, վոր նոր էր սկսում սովորել, այսչափ դյուրաթեք, ձկուն ու գյուրըմբունող միտք ունի», — պատմում է Աղայանը:

Բայց նա վոչ միայն սոսկ գիտություն էր սովորում իր ուսանող-ուսուցիչներից, այլև մտերմանում է նրանց շատերի հետ և մտնում նրանց միջավայրը, մտտիկից հաղորդակից լինում մասնավորապես լեհ ուսանողներին հուզող հարցերին ու գաղափարներին՝ կրելով նրանց ազդեցությունը:

Աղայանի հասարակական-քաղաքական դեմքի բնութագրման համար շատ կարեվոր է մեջ բերել այն, ինչ գրել է ինքն այդ մասին: «Աղայանը Մոսկվայում ավելի շատ մոտ է յեղև լեհ և ուսուսանողներին ուսանողությունը, քան թե հայերին:

«Մոսկվայում, — գրում է Աղայանը, — իմ հարաբերությունը ուսուսանողների հետ էր, հայ ուսանողներին ճանաչում էյի միայն հեռվից, տեսնելով սրանց թղթամուս-

<sup>1)</sup> Ընդ կյանքի գլխավոր դեպքերը, էջ 51:

թյունը և բուլվարներում քաջ գալն անանուն աղջկերանց հեծ, յես տածում էյի դեպի գրանց խորին արհամարհանք»<sup>1)</sup> Քիչ հետո Աղայանն ավելացնում և. «Իմ ծանոթությունս այդ ժամանակ լեհացոյ հետ եր: Աղբերով Սոկուրիս հետ, իմ ուսանող վարժապետի, վոր ծայրահեղ ազդուներ եր, այնպիսի սրտածմլիկ պատմությաններ էյի յեղ նրա սոգգի վերջին պատմությանից<sup>1)</sup>, վոր լոյս էյի յեղի հետս միասին: Յես ինչս էլ իմ աչքովս քիչ աղեկատու բաներ հետես: Այս հանգամանքն ահա ինձ մոտեցրեց լեհերին»<sup>2)</sup>:

Վոչ միայն Մոսկվայում, այլև Պետերբուրգում, ուր նորից գնաց 1864 թվի վերջերին, Աղայանը շարունակում էր լինել հեղափոխական հայրենասիրությամբ ապստամբ լեհերի շրջանում:

«Պետերբուրգ վոր հասա, իմ սենյակս մի լեհացու բնակարանում վարձեցի... Ըճկեր գրաշարներս նույնպես լեհացիք էյին: Իմ և սրանց մեջ այնքան սեր ու մտերմություն կար, վոր համոզում եր մինչեզ հոգեկցության»<sup>3)</sup>:

Աղայանը այնուհետև վրադարձնում է իր ունեցած սրտառուչ մտերմական հանդիպումների մասին լեհ ուսանողների հետ, վորոնց շրջանում նա շատ սիրված և յեղի:

Իր ինքնակրթությունը Աղայանը մեծ յեռանգով շարունակեց Պետերբուրգում: Այստեղ էլ նրան չհաջողվեց համարարան մտնել, բայց գրա փոխարեն նա մեծ յարգածությամբ ու հետաքրքրությամբ կորցրաց այն հարուստ գրականությունը, ինչ ինքնուրույն և ինչ թարգմանական, վոր լույս եր տեսնում հատկապես 60-ական թվերին: մտանավորապես այն ասորիներին, յերբ Աղայանը բաղդ ուներ աղբերու Ռուսաստանի հասարակական-քաղաքական ու մտավոր շարժման կենտրոններում:

«1864 թվականի վերջին և 1865 թվականի սկզբի ամիսներին Պետերբուրգի մտավոր կյանքի վերածնության ամենաթունոգ ժամանակն եր:

1) Աղայանը «նրա սոգգի վերջին պատմություն» անելով անշուշտ նկատի ունի լեհերի 1873 թվի նշանավոր հերոսական ապստամբությունը, վոր Ալեքսանդր Զ-րդը արյան մեջ խեղդեց, կախազան բարձրացնելով նրա անվանի դեկավարներին:

2) «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ 59:

3) Նույն տեղ, էջ 24:

Հնությունն ու նորությունը պատերազմ էյին հայանել իրար դեմ, անինս հարձակվում էյին միմյանց վրա, ամեն ինչ քննադատում, ամեն խավար վարագույր յես քաշում: Արեվմայան Յեվրոպայի լուսավոր մտքերի առջև դրված թուժըը քանդվելով՝ այդ քաղաքը հեղեղվեց նորանոր գաղափարներով: Դա յեր առավելապես թարգմանական գրականությունը, վոր յուրաքանչյուր որ տասնյակ հասարակություն եր դուրս գալիս: Մարդ շղկվում եր, չգիտեր վորը կարգա և վորը թողնի, քանի վոր մեկը մյուսից դարգացուցիչ եր, մեկը մյուսից գրավիչ»<sup>1)</sup>:

Ահա հենց «Պետերբուրգի մտավոր վերածնության» այդ «թունոգ ժամանակն» էլ դարձավ Աղայանի ինքնակրթության համարարանի «դարգացուցիչ և գրավիչ» լսարանը, ուր ուսումնասանչ, ուսումնասիրավ յերիտասարդը ավելի շատ բան սովորեց, քան իր ժամանակի շատ յերիտասարդներ ուսուսկան ու յեվրոպական համարարաններում:

«Ինքնակրթության ակտով յես արդեն վարակված էյի բնականից, հարկավոր չեր, վոր այդ բանը սովորեցներ ինձ Բոքը կամ Մմայլը, բայց դրանցով յես ավելի վողի առա, չկորցնելով իմ ինքնուրույնությունը: Այդ պայմաններում ահա,— շարունակում է Աղայանը,— «Իմ համարարանս դարձավ Պետերբուրգի հասարակաց գրադարանը, վորի մշտական ընթերցողը դարձա»<sup>2)</sup>: Նոր ու թարմ գրականությունը և հասարակական-քաղաքական յեռանդուն ու բոքբոքուն կյանքը միասնաբար կենսարար աղբյուր են հանդիսացել Աղայանի մտավոր գաղափարական զարգացման համար:

«Իմ ինքնակրթության համար մենակ իմ ընդունակությանը չեմ պարտական, այլ Պետերբուրգի մտավոր վերածնության շրջանին, այն բոքբոքող և յեռանդոտ կյանքին, վորի մեջ չեյի կարող չեփվել»<sup>3)</sup>,— գրում է Աղայանը:

Պետերբուրգյան շրջանում Աղայանի հասարակական-քաղաքական ու մտավոր զարգացման համար, ինչպես և նրա գրական գործունեյության համար, վճռական նշանակություն է

1) «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ 72:

2) Նույն տեղ, էջ 72, 74:

3) Նույն տեղ, էջ 74:

ուննեցել նրա մասնակցութիւնը Պետերբուրգի հայ ուսանողական «Ժողովի» հովաքուչթներին:

Նախ մի քանի խոսք այդ «Ժողովի» մասին: Ինչպես Մոսկվայում, նույնպես և Պետերբուրգում, մասնավոր 60-ական թվականներին, մեծ քանակութեամբ հայ ուսանողութիւն կար: Թիֆլիսից ավելի Մոսկվայ և Պետերբուրգն էին առաջ հայ հասարակական-մտավոր շարժման հիմնական կենտրոնները՝ թե պրոպրետարի և թե աեակցիոն պահպանողական հոսանքների համար: Այդ քաղաքներում չեղած հայկական ինտելիգենցիան չէր կարող անտարբեր լինել ժամանակակից շարժումների նկատմամբ: «Արեւմտյան Յեկրուպայի ըւստավոր գաղափարներին» հեղեղային ներխուժումը սուսական մտավոր շարժման օղղեցութեամբ, շարժման մեջ էր դրել նաև մոսկովյան-պետերբուրգյան հայ ինտելիգենցիային, վորի իշխող խավի (Մանասարջանների ու Լազարյանների զատակարգերի հետ կապված) մասնաբաժնի ասարկան էր գործել հայերի շրջանում սկսված շարժումը սանձելու: «Ճայրահեղ հետևութիւնները» կանխելու և այն ցանկացած օղղային-սահմանափակ ուղղութեամբ տանելու հարցը:

Պետերբուրգի 1853—1854 թվերին կազմակերպված հայ ուսանողական «Ժողովը», ահա, վոր ինքնագարգացման ծրագրով էր գործում, հասարակական գաղափարական վորոշ նպատակ էր հետադնդում հենց այդ տեսակեայց: «Ժողովի» կազմակերպիչը և իգեական ղեկավարը՝ նացիոնալ-պահպանողական Կարապետ Յեղյանն էր, վորի բնակարանումն էլ տեղի էլին ունենում «Ժողովի» հովաքուչթները:

Սոսկով այս «Ժողովի» գործունեութեան մասին, նրա անդամներից մեկը, հետագայում նշանավոր հրատարակախոս, պատմաբան Ալ. Յերիցյանն առանձնապես շեշտում է այն, վոր այդ կազմակերպութիւնը «կարողացավ շատերին յետ պահել այն նորագույն ուղղութիւններից և խլրատմներից, վորոնց յենթակա յեղան նույն ժամանակվա ուրիշ օղղութիւնների ուսանողները: Յեա չմտալով բոլորովին գիտութիւններից և ուրիշներից վոր պակաս ծանոթ լինելով Բոկլի, Դարվինի, Բյուխների, Մոլեշտտի և այլոց, ինչպես նաև սուսաց Պիսարևի և հետեվողների գրվածքների հետ, հայոց շրջանը կարողացավ

իրեն դալի վորեն հափշտակութիւնից և հետո մնաց այդ ժամանակ տիրապետող շարժումներից»<sup>1)</sup>:

«Ժողովն» գրադվում էր հայոց լեզվի, գրականութեան և պատմութեան հարցերով, քննութեան էլին առնվում նաև մանկավարժութեան և բնական գիտութեան հարցերը: Հովաքուչթներին «Ժողովի» անդամները կարգում էին իրենց ինքնուրույն կամ թարգմանական յերկերը, վորոնք քննվում էին հեղինակի կամ իտրգմանչի գերծը գնահատելու առումով:

Ահա ուսանողական այս «Ժողովն» և ընկնում նաև Աղայանը 1865 թվի սկզբներին, սուսանքն ուղղութեան արժանաւորվորի կողմից: Աղայանն իր մեմուարներում պատմում է, վոր «մի փառավոր յերեկու... պ. Կ. Յեղյանի տանը, պ. Ռուբին Զալալյանը կարգաց մի ալպիսի արձանագրութեան»:

«Պարոն Դաղարոս Աղայանցը միաձայն ընտրվեցավ անդամ հայ ուսանողական Ժողովի»:

...Ներկա էլին ժամանակակից բոլոր ուսանողները—Արծրունիք՝ Գրիգոր, Անդրեաս և Մենեքերիտ, Բարայան Ավետիք, Մարգարյան Զհան, Գրիգորյան Զաքարյա, Մարտիրոսյան Սիմոն, Քալանթարյան Նիկողայոս, Յեկանդուլյան Գեվորգ և շատ ուրիշներ»<sup>2)</sup>:

Պետերբուրգի այդ ուսանողական «Ժողովին» Աղայանի մասնակցութեանը հայտնի յե գտնում նրանով, վոր, ինչպես ինքն և պատմում, իր ընդունելութեան «գեպքից յերկու շաբաթ անց՝ յես կարգացի նույն ժողովում իմ «Արութեան և Մանկի» առաջին դուխները... Մյս գեպքից հետո, — ավելացնում է Աղայանը, — յես նոր հոգի ստացա, նոր թեմ առա: Ինձ ընտրեցին ուսանողական յերկերի լեզվի մշակող: Յես սկսեցի մի սխտեմի տակ ձգել իմ ինքնակրթութեան ազատ պարապմունքը, վոր մտնեմ համալսարան, բայց ճակատագիրը ուրիշ կերպ տնորինեց, գուցե ավելի լավ»<sup>3)</sup>:

1) Ալ. Յերիցյան «Նյութեր հայոց պատմութեան համար», Ա., Թիֆլիս, 1890 թ., էջ 38:

2) Դ. Աղայան «Մի թեթեմ հրահանգ մեր լեզվի ուղղութեան մասին», Աղբյուր, 1888 թ., № 12:

3) Նույն տեք

Այստեղ, այդ ուսանողական շրջանում շատ յեռանդուն գրողվում էին նաև դիվանագրական բնագիտությունից, մանկավարժությունից դպրոցական ձևերովներ թարգմանելու գործով: Աղայանն էլ իր առաջին վեպը գրելու հետ միաժամանակ թարգմանեց Եղուարդ Կարույեյի «Աղային կրթութուն» վերնագրով աշխատությունը՝ Միքայիլ Միանասրյանի հանձնարարությունով<sup>1)</sup>:

Բայց ուսանողական «ժողովի» շրջանում Աղայանը վոչ միայն ընդունելություն աշխատեցավ, այլև կատարածա հսկողություն յեռնթարկվեց «ժողովի» ղեկավարի՝ պահպանողական Յ. Յեղյանի կողմից: Հակառակ Յեղյանի աջակցը հսկողությունը, այնուամենայնիվ յերիտասարդ Աղայանը դուրս եր գալիս «ժողովի» համար նախատեսված ազգային-կրթական սահմանափակ շրջաններին: Այդ մասին պատմում է ինքը, Աղայանը:

«Չեմ կարող ուրանալ և թագցնել մեզքս: Յես վարակվեցա իմ շրջանի ընդհանուր ախտով, վորով և ընկա պ. Յեղյանի աչքից: Ինձ դուր չէին գալիս նրա կրթական գաղափարները, նրա կերակրական ձգտումները: Ինձ առաջարկում էր, վոր յես թարգմանեմ Ներսես Շնորհալու Ընդհանրականը: Յես չհամաձայնվեցի, առարկելով, վոր մեր ժողովուրդն այդ տեսակ գրքերի կարտություն չունի, նրա մեջ պետք է տարածել բնական պատվությունների տարիքը, վոր նա բացատրել կարողանա բնության յերեվույթները և ազատվի դարավոր նախապաշարմունքներից: Սրանից պ. Յեղյանը յեզրակացրեց, վոր իբր թե յես յեռնթարկվել եմ գանազան իզմերի և իստերի կարգն եմ ընկել...»<sup>2)</sup>:

Աղայանի կյանքի Պետերբուրգյան շրջանում շատ նշանակալից մոմենտ է նրա հանդիպումը Միքայիլ Նալբանդյանին, յերբ վերջինս, ինչպես Աղայանն է վկայում, նոր եր «ազատություն ստացել գեներալ Սուլթանյանի յերաշխարհում»<sup>3)</sup>:

Կարեվոր է հիշել, թե ինչպիսի պայմաններում է տեղի

ունեցել այդ հանդիպումը. մանրամասնությունները չկան, բայց կա միայն իր՝ Աղայանի հիշողությունը շատ ընդհանուր ձևով: Նա վկայում է, վոր 1865 թվի կեսերից հետո աժեղանում է սեռակցիան. «Պետերբուրգի մասվոր վերահասարակական հեղեղի առաջն սկսեցին տանել և սկսվեց մի յեռաշարժ ուղղությամբ»: Բայց չհասած այս պայմաններին, գրում է Աղայանը, — «այնուամենայնիվ ծանոթացա Միքայիլ Նալբանդյանին... Այս մարդուն առաջին տեսքում յես տեսել էյի թիֆլիս, ուր յեկել եր Եջմիածին գնալու համար: Այն ժամանակ մենք հափշտակվեցանք նրա ճարտար հայախոսություն վրա» (վստահում ասենք, վոր Աղայանը նկատի ունի 1860 թ. սոստոսի վերջերին՝ Նալբանդյանի հետ ունեցած հանդիպումը թիֆլիսում, ուր նա ժամանել էր աստ-տասնհինգ որով՝ Եջմիածին գնալու և հետո այնտեղից էլ արտասահման): Բայց յեթե այդ առաջին հանդիպմանը Աղայանի վրա խորը տպավորություն է թողել Նալբանդյանի «ճարտար հայախոսությունը», ապա այս յերկրորդ հանդիպմանը՝ Նալբանդյանը նրա աչքի առաջ յերեվում է վորպես հասարակական-քաղաքական գործիչ իր բարոյական-գաղափարական կախարհիչ գեմքով: Աղայանին գրավում է այն, վոր Նալբանդյանն իր՝ թե «մտավոր զարգացումով» և թե մանավանդ հասարակական-քաղաքական ուղղությունը հիմնովին տարբերվում էր Մ. Նալբանդյանից և նրան շատ «յետ թողել իրանից», «համարելով յեռամնաց և պահպանողական»<sup>1)</sup>: Նշանակալից է այն, վոր Նալբանդյանն այս հանդիպմանը Աղայանին խորհուրդ է տալիս հիմնական ինդիք համարել ժողովրդի կրթությունը, լուսավորությունը, ըստ վորում շոտոման, վոր «մեր ազգին հարկավոր է գիտական գարգացում», վոր նրա առաջադիմությունը «հարկավոր են նոր ու թարժ ուժեր, ժամանակակից սոցիալական գիտություններին քաջ հմուտ» մարդիկ, գործողներ<sup>2)</sup>:

Նախադավառ հայրենասեր յերիտասարդի համար մեծ հեղափոխական-գեմավորաթի հետ ունեցած այդ հանդիպումը

1) «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ՝ 77:

2) Նույն տեղ, էջ՝ 73-74:

3) Նույն տեղ, էջ՝ 76:

1) «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ՝ 76:

2) Նույն տեղ, էջ՝ 102:

բախտորոշ նշանակութիւնն ունեցաւ: Նալքանդեանի իրեակումն ազգեցութիւնը նրա վրա ավելի խորացաւ և, ինչպէս կ'տեսնենք, այդ ազգեցութիւնը լուսավորեց ավնիվ դեմոկրատ գրողի, մանկավարժի ու հասարակական գործչի փառալուր ուղին միջնեվ նրա կյանքի վերջը:

Մոսկովյան ու պետերբուրգյան 5-ամյա շրջանի բարերար ազգեցութեան շնորհիվ Աղայանը հաղորդակից է լինում 50—60-ական թվականներէ ուսու դեմոկրատական մտքի ներկայացուցիչներէ գաղափարներին ու գործունեութեանը մինչև Ռոբրոլյուբովը և Չերնիշևսկին ներառյալ: Հաստատ կարելի չե՞սանք, վոր Մ. Նալքանդեանից հետո 19-րդ դարի 2-րդ կիսի հայ գրողներէ և հրատարակախոսներէ թերևս վոչ վոք այնքան լայն ու խորը հետաքրքրութիւն չի ունեցել ուսու առաջավոր դեմոկրատական մտքի ներկայացուցիչներէ նկատմամբ, ինչքան Աղայանը: Ժամանակակիցները վկայում են, վոր Ղ. Աղայանը, գլխավորապէս Պետերբուրգում յեղած տարիներին (յերբ նա գրաշար էր), իր իսկ պատմելով կարգացել է ուսու մեծ դեմոկրատներին ու հեղափոխականներին—Չերնիշևսկուն, Դոբրոլյուբովին, Բելինսկուն, Նեկրասովին, Ն. Վ. Շելլունովին, Պրասարեվին, Գիբբ Ուսպենսկուն և այլն: Ահա ինչու Աղայանի կյանքի մոսկովյան-պետերբուրգյան 5 տարիները նրա աշխարհայացքի ձևավորման և ստեղծագործական դեմքի դժագրման վճռական շրջան հանդիսացան: Յեվ յերբ 1867 թվի աշնանը վերադարձաւ Կովկաս, նա արդէն վորոշել էր իր գործունեութեան ուղին թե՛ գրականութեան բնագավառում, ուր հաստատուեց վոք գրեց նա Պետերբուրգում գրած իր վեպով, և թե՛ մանկավարժութեան, դպրոցական գործի բնագավառում, վորովհետեւ նա, ինչպէս ասացինք՝ դարձյալ Պետերբուրգում՝ թարգմանել էր Եդ. Լաբուլեյի դասախոսութիւնները դպրոցական գործի—կրթութեան մասին՝ «Ազգային-կրթութիւն» վերնագրով, վոր, լույս աեսաւ 1867 թվին:

Ռուսաստանից Աղայանը վերադարձաւ, տողորված 60-ական թվականներէ ուսու մեծ լուսավորիչ-դեմոկրատներէ՝ Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Պրասարեվի և Ուշինսկու լուսավորական-մանկավարժական ու հասարակական

իշխաներով, հայ ժողովրդի ազգային ազատագրման գաղափարով և տողորված՝ անձնագործ, անկեղծ հայրենասիրութեան ու ճողովրդասիրութեան վոգով:

Վերադառնալով հայրենիք, Աղայանն սկսեց է յետանդուն ու Յամառ պայքարով լի մի գործունեութիւն, վորն անխղելորին կարված է 19-րդ դարի վերջին 30-ամյակի և 20-րդի առաջին 10-ամյակի հայ հասարակական կյանքի և հայ գրականութեան ու մանկավարժական մտքի զարգացման պատմութեան հետ:

## II. ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Աղայանն իր՝ մոտ 50-ամյա գործունեյությամբ, իր ստեղծագործական դեմքով շատ բազմազան և ու բազմակողմանի նա հանդես է յեկել վորպես վիպագիր, բանաստեղծ, հեքիաթագիր, վորպես գեղարվեստական թարգմանիչ, վորպես գրական քննադատ, հրատարակախոս, խմբագիր, լեզվաբան, վերջապես իբրև մանկավարժ՝ գործունեյության մի շարք ճյուղերով:

Այստեղ անհնար է Աղայանի գործունեյության այդ բոլոր կողմերն ամբողջությամբ ու լրիվ բնութիւնը, գործունեյությունը, վարով մեր առաջ կանգնում է Աղայանն իր ինքնատիպ ու վեհ կերպարանքով, իր սաղանդի անունը կարելիություններով:

Իր գործունեյության այդ բոլոր սաղանդներումն էլ Աղայանը կանգնած է յեղել առաջադր դիրքերում և նշանակալից հետք է թողել նոր խնդր և ասել, հանդես բերելով վաղ միայն անհուն յեռանդ, այլև սակզագործելու ու գործելու մեծ կարողություն, վոր նա, ինչպես տեսանք, ձեռք էր բերել ամբողջովին ինքնագարգացման ճանապարհով, հետևելով աշխարհահրահակ մեծ ինքնուսնեքի (Բենիամին Ֆրանկլին, Ֆարադեյ և այլն) սրինակին:

Աղայանի գրական գործունեյությունը հաստատորեն սկսուած է վեպով: Նա ամենից առաջ հանդես է գալիս վորպես վիպագիր՝ նախ իր ինքնակենսագրական բնույթի «Արություն և Մանվել» հայտնի աշխատությամբ, վորն իր իղիական սոցիալական բովանդակությամբ մամանակի պրոպեդեալով պահանջների արտահայտությունն է, իսկ իր գեղարվեստական վորակով ու արժեքով՝ մի քայլ առաջ Պարոյանի առաջին վեպի համեմատությամբ:

Նայենք, թե ինչ է ներկայացնում իրենից Աղայանի առաջին վեպը և գրական ու հասարակական ինչ արժեք ունի նա: Բայց Աղայանի այդ առաջին վիպական աշխատության արժեքն ու պատմագրական նշանակությունը վորոշելու համար, նախ անհրաժեշտ է գոնե շատ համաոտակի նշել, թե զարգացման ինչ աստիճանի վրա յեր հայկական վիպագրությունը մինչև Աղայանի «Արություն ու Մանվել»-ը: Վիպական ինչ գործեր կային գրական հրատարակում նախորդ տասնամյակներին:

Հայտնի յե, վոր հայկական նոր, աշխարհիկ ու աշխարհաբառ վիպագրությունը, և ընդհանուր առմամբ հայ նոր գրականությունն սկսվում է Ս. Արությանի հուշակավոր «Վերք Հայաստանի»-յով, վորը տպագրվել է գրվելուց տասնուութ տարի հետո՝ 1858 թվին: «Վերք»-ից հետո, մինչև նրա տպագրությունը, գրվել ու հրատարակվել են Մեսրոպ Թաղիադյանի յերկու վեպերը՝ «Վեպ Վարդգեսի»՝ 1846 թվին և «Վեպ Վարսենիկա»-ն՝ 1847 թվին, յերկուսն էլ՝ թեև աշխարհիկ բովանդակությամբ, բայց գրաբառ լեզվով: Սակայն Թաղիադյանի առ յերկու վեպական գործերն էլ չեյին կարող մեծ նշանակություն ունենալ հայ ինքնուրույն նոր վիպագրության զարգացման համար, նախ վոր գրաբառ են, յերկրորդ՝ ինքնուրույն աշխատություններ չեն, այլ գրեթե ամբողջությամբ թարգմանություն կամ փոխադրություն են, ինչպես իր ժամանակինցուցց և տվել Աղայանը<sup>1)</sup> հատկապես զբաղվելով այդ վեպերի ծագման ուսումնասիրության հարցով:

50-ական թվականներին տանձին նշանակալից վիպական գործեր չունեցանք, յեղածներից կարելի յե հիշատակել Վիեննայի Միխիլայաններից Հ. Թունյանի «Արտաշեսյան Արտաժողոպ բարքն ու վախճանը» և Հ. Սիսիլյանի «Տրդատա առանձնանալը, վերջին որերն ու մեռնելը»՝ 1851—1852 թվերին, Մ. Հիսարյանի «Մուսրով և Մաքրուհի» թյուրքահայ առաջին աշխարհաբար վեպը՝ ասված «Բանասեր» ամսագրում, 1851 թ. (Կ. Պոլսում): Այնուհետև հիշատակելի գործեր են՝ Մ. Նալբանդ-

<sup>1)</sup> Մենք նկատի ունենք Աղայանի մի հոդվածը («Մ. Թաղիադյանցի «Վարդգես» վեպի ծագումը») «Հորիզոն»-ում, 1910 թ. № 93, և Հովհ. Թումանյանի հոդվածը՝ Գ. Աղայանի «Անտիպո»-ի մասին, գաղթյալ «Հորիզոնում», 1912 թ. № 205:

յանի ինքնուրույն վիպական փորձերը՝ «Մինին խոսք, մյուսին հարա»-ը, վերջ տպագրվել է 1857 թվին, բայց չի տարածվել, և «Մեսիականացու» անավարտ գործը՝ տպագրված «Հյուսիսափայլ»-ում, 1859 թվին՝ 50-ական թվականներին և լույս տեսել նաև Ստեփան Վոսկանի «Հայ դուցադնունի մը» փոքրիկ վիպական գրույցը (1857 թ.):

60-ական թվականների սկզբին հրատարակի վրա յերևացին յերկու նշանակալից գործեր՝ Պ. Պոռչյանի «Սոս և Վարդիթեր»-ը՝ 1860 թվին և Գարբրիել Տեր-Հովհաննիսյանի անավարտ հակակղերական «Տեր-Սարգիս» վիպակը (1861 թ. «Հյուսիսափայլ»-ում):

Ահա այդ յերկերն էլին ներկայացնում հայ նոր վիպագրությունը 40—50 և 60-ական թվերին. մինչև Աղայանի «Արուսթյուն և Մանվել»-ը: Բացառութեամբ Արովյանի «Վերք»-ի և Պոռչյանի «Սոս և Վարդիթեր»-ի, մասամբ էլ «Տեր Սարգիս», վերահիշյալ մյուս բոլոր գործերը համեմատաբար շատ թույլ էլին՝ վերջին գեղարվեստական վիպական ստեղծագործություններ: Անշուշտ Մ. Նալբանդյանին հայանի էլին բոլոր այդ յերկերը, բայց նա ուշագրութեան օրժանի և նշանակալից և համարում գրանցից միայն յերեքը՝ Արովյանի, Պոռչյանի և Գ. Տ. Հովհաննիսյանի հիշյալ վեպերը, վորոնցից առաջին յերկուսը՝ «Վերք Հայաստանի»-ն և «Սոս և Վարդիթեր»-ը՝ հիմք դրին սրբյան ազգային վիպասանութեան»,—ինչպես գրել է Նալբանդյանը<sup>1)</sup>: Իսկ Պոռչյանի վեպից հետո առաջին նշանակալից վիպական աշխատութեանը՝ Ղ. Աղայանի «Արուսթյուն և Մանվել»-ն և, առաջին անգամ տպագրված 1867 թվին: «Սոսի» ու «Տեր Սարգիս» և «Արուսթյուն»-ի միջև ընկած վեց-յոթ ասարիների ընթացքում հայ վիպագրութեանը չափից վորեւ ալ նշանակալից գործ: Ահա թե ինչու «Արուսթյուն և Մանվել»-ի թե ընթերցումը՝ Պեսերբուրգի ուսանողական «Ժողով»-ում<sup>2)</sup> և թե նրա առաջին տպագրութեանը շատ մեծ տպավորութեան թողից ժամանակակից ընթերցող հասարակութեան վրա:

«Մեղու Հայաստանի»-ն, վորի խմբագրին (Պարոտ Սիմոնյան) այն ժամանակ խորը ցավով նշել էր Միք. Նալբանդյանի

1) Մ. Նալբանդյան — Ջրխիկա, 1940 թ., էջ՝ 8:

2) Տես՝ Ղ. Աղայան — Իմ կյանքի գլխ. դեպքերը, էջ՝ 66—67:

վորերդական մահը: համակրանքով վոջունից Աղայանի վեպը դեռ ձեռագիր վիճակում, իսկ լույս տեսնելուց հետո տպագրից նրա մասին գրախոսութեան՝ գրական գնահատական տալով նրան<sup>1)</sup>:

Ի հարկե «Արուսթյուն և Մանվել»-ը շատ կատարյալ դեղարվեստական գործ է և վորպես վեպ շատ թերութեաններ ունի թե կոմպոզիցիայի, թե սյուժեի և թե տիպերի կերաման տեսակետից: Սակայն կանկրետ պատմական առումով՝ յինչևից հայկական վիպագրութեան զարգացման տվյալ մակարդակից, համեմատութեան մեջ գնելով այն՝ իրեն Ուլտրադոլ հայ վիպագրական մեղ հայտնի (քիչ առաջ թվարկված) գործերի հետ, ակընհայտ և դառնում, վոր «Արուսթյուն և Մանվել»-ը մի շատ նշանակալից յերևույթ էր, մանավանդ 60-ական թվականներին: Իր վորոշ կողմերով հիշեցնելով Արովյանի «Վերք»-ը և Պոռչյանի «Սոս և Վարդիթեր»-ը, Աղայանի այս անդրանիկ ծավալուն յերկը միանգամայն ինքնուրույն ստեղծագործութեան էր և վորպես այդպիսին, անկասկած, մի քայլ առաջ և հայ վիպագրութեան զարգացման նախորդ շրջանի համեմատութեամբ:

Ճիշտ և նկատելի է, մի «մեր գրականութեան մեջ՝ գա իսկ վոր բացառիկ թարմութեան ու ինքնուրույնութեան ներկայացնող մի յերևույթ էր»<sup>2)</sup>: Բայց իհարկե միտմամանակ անարգարացի չե և հակասում է իր այդ գնահատականին, յերբ գեղարվեստական տեսակետից չափազանց թույլ գործ է համարում «Արուսթյուն և Մանվել»-ը: Իրափայցի չե իհարկե պնդումը, թե այս յերկում «բացակայում է հեղինակի ստեղծագործական կարողութեանը», թե բոլորովին լավ գծագրված տիպեր չկան», թե «հղայանը չի կարողացել» վիպական տիպեր կերտել, «վորովհետև վիպագրողի կոչումը չէր նրան տրված»<sup>3)</sup>: Անհիմն չի լինի գրա հակասակը պնդել՝ վոր Աղայանի այս առաջին ծավալուն աշխատութեանը վկայում և հեղինակի վիպական ստեղծագործական կարողութեան մասին: Նախ պետք է նկատի ունենալ, վոր այս վեպն ևս, ինչպես Արովյանի «Վերք»-ը, բուն

1) «Մեղու Հայաստանի», 1867 թ. № 4, և № 27, 1881 թ. № 140, 147:

2) Լեռ. — Ղաղարոս Աղայան (պատմական-գրական ուսումնասիր. և թեմ.), «Հարիզն», 1911 թ., № 149:

3) Նույն տեղ:

ստեղծագործական ներշնչմամբ գրված մի գործ է, բնական ստեղծագործական մի ժայթքում հեղինակի սրտից-հոգուց: Թե «Վերք»-ը և թե «Արություն»-ը գրված են հեղինակների հերքին, միանրման ստեղծագործական խանդավառությամբ, միանման վազմությամբ, համարյա մի շնչով: Թե հոգեկան ինչպիսի լարվածությամբ, ինչպիսի ինքնամոռացմամբ և գրվել «Արություն և Մանվիլ»-ը, այդ մասին պատմում և Աղայանն իր ինքնակենսագրականում<sup>1)</sup>:

Կարևոր է հիշել, թե ինչպես և գնահատել ինքը՝ հեղինակն իր յերկր, վորին նա շատ մեծ նշանակություն է ավել թե վորպես ինքնակենսագրական դոկումենտի և թե վորպես ազգային-ժողովրդական կյանքի նկարագրություն:

«Արություն և Մանվիլ»-ը համեմատելով իր մեծ նախորդի՝ Ս. Աբովյանի նշանավոր «Վերք Հայաստանի»-ի հետ, Աղայանը գրել է. «Վումանք»<sup>2)</sup> այն միտքը տարածեցին ընթերցող հասարակության մեջ, վոր իբր թե իմ աշխատությունը մի հետևություն է անմահ Աբովյանի վեպի: Այդպես չե. նրա «Վերք Հայաստանի»-ն մի վողք է, վողք հայրենիքի թշվառության վրա, վողք հայրենասերի՝ բղխած մի զգայուն սրտից, զարգացած ուղեղից: «Արություն և Մանվիլ»-ը բերում է մի բոլորովին նոր ուղղություն, բոլորովին ինքնուրույն: Սա մի պատերազմ է հայտնում հին գաղափարների, հին դաստիարակության դեմ, վորոնց վրա չի վողբում, այլ հարձակվում է անխնա և նրանց տեղը տարածում նորը և լավագույնը»<sup>3)</sup>: Աղայանը հայտնում է նաև, վոր իր վեպի գլխավոր հերոսի՝ Արությունի կերպարով պատկերել է ինքն իրեն և նրա մեջ էլ մարմնացրել է իր ասած «պատերազմը... հին գաղափարների, հին դաստիարակության դեմ»: «Չը գրեցի «Հարություն», այլ «Արություն», իբր արևություն, այրություն, քաջություն, այդ հասկությունները դանդաղով հերոսիս մեջ»<sup>4)</sup>:

1) Տես «Իմ կյանքի գլխ. դեպքերը», էջ՝ 65-66:

2) Աղայանն անշուշտ նկատի ունի մասնավորապես Բաֆֆու այն կարծիքը, ըստ վորի Աղայանն իր վեպով Աբովյանի «Վերք»-ի անշուրթը հետևություններից մեկն է: Ըստ Բաֆֆու՝ մյուս անշուրթը հետևողն էլ Պ. Պրուշյանն էր:

3) Ղ Աղայան—«Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ՝ 70:

4) Նույն տեղ, էջ՝ 65:

Ի հարկե հենց ճիշտ առաջինի նշանակությունն ու գիր և ունեցել նաև անմահ Աբովյանի «Վերք»-ը, վորի հջերը Աղայանի հերոսներից մեկի՝ Ովակիմի արտահայտություններն ասած՝ «հեղինակի սրտի արյունովն և գրված»: Անշուշտ «Վերք»-ն էլ իր կյանքյամբ միայն վողբ չի, ինչպես կարծել և Աղայանը, այլև պատերազմ հնություն դեմ,՝ «հին գաղափարների ու հին դաստիարակության դեմ»: Յեղ այդ կողմից էլ «Վերք»-ի թողած ազդեցությունը վճռական նշանակություն և ունեցել Աղայանի համար՝ «Արություն և Մանվիլ»-ը գրելիս, թե գրական-ստեղծագործական և թե գաղափարական տեսակետից «Վերք»-ի ու «Արություն»-ի նմանություններն ակնհայտ են:

Բայց կարևոր է նշանակություն այն է, վոր Աղայանն իր այս առաջին մեծ աշխատությունը հանդես է յեկել վոչ վորպես Աբովյանի «անշուրթը հետևող», ինչպես կարծել և Ռաֆֆին և վոչ վորպես սոսկ հետևող, այլ հենց սկզբից իր սեփական ճանապարհը գտած շնորհալի վիպագիր, վորը կարողացել է ասլ ինքնատիպ վիպական մի աշխատություն, սեպիստորեն արտացոլելով իր ժամանակաշրջանի կյանքը բազմազան կողմերով: Ինքը, Աղայանն իր վեպը միանգամայն ճիշտ և գնահատելով «Այդ վեպով,—գրել է նա,—ժողովուրդը ծանրացավ նոր սերնդի առաջադեմ մտքի կետ, իսկ նոր սերունդը ժողովրդի մտավոր ու բարոյական կողմերի հետ»<sup>1)</sup>:

Իսկ արանից ավելին,—չարտեսակում և Աղայանը,—թող դատի կրիտիկոսը, վոր անշուշտ ի նկատի կունենա և մեր վիպագրության զարգացման պատմությունը, սկսած Թադևոսյանից, ցույց տալով, թե ով ինչ նորություն է ներս յերում, վորն է հետևություն և վորը ինքնուրույն»<sup>2)</sup>:

Աղայանի վեպում «հետևություն» ի հարկե կա, և չեր կարող չլինել, բայց Աղայանի արժանիքն այն է, վոր նա չի սահմանափակվել իր մեծ նախորդին հետևելով, նա հայ վիպական արձակը մի քայլ առաջ է մղում թե գրական լեզվի հտազա զարգացման և թե սոցիալական-քաղաքական հարցերի ու գաղափարների ուղծարժան տեսակետից:

1) «Իմ կյանքի գլխ. դեպքերը», էջ՝ 71:

2) Նույն տեղ, էջ՝ 71-72:

Աղայանի վեպում հիմնականը—կենտրոնականը՝ ժողովրդի մտավոր-կուլտուրական հեղաշրջման պահանջն է և պայքարը միջնադարականության դեմ: Վեպի գլխավոր հերոսը՝ Արուսթյունը՝ արհամարհանքով ու պարծանքով է խոսում այն մասին, վոր իր շրջապատն իրեն «գիժ» ու «հերետիկոս» է անվանում: Նա մերժում է կրոնի միջնադարյան ծիսակատարությունները, կատաղի հարձակվում է ամեն տեսակի նախապաշարմունքների վրա: Նա սուր, անխնա կերպով քննադատում է դյուզի հետամնացությունը, անկուլտուրականությունը, կեղտոտությունը, վոր պահպանվում է արգարացվում է կրոնի, յեկեղեցու և նրա սպասավորների կողմից:

Արուսթյունը, վորի կերպարի մեջ Աղայանն ինքն իրեն է ներկայացնում, «ճշմարիտ աստվածապաշտություն» և քարոզում: Բայց ըստ էություն նրա այդ քարոզի մեջ քրիստոնեական աստվածապաշտություն չկա: Արուսթյունն իր այդ քարոզով ժխտում է նույնիսկ կրոնական հատուկ հիմնարկի—յեկեղեցու գոյություն անհրաժեշտությունը, իսկ չէ՞ վոր յեկեղեցին շահագործողների ձեռքին կրոնի, հավատի պահպանման յերկրային ամբողջ և, առանց վորի աշխատավորական մասսաները, ժողովուրդն ազատ կլինեյին կրոնի՝ հասարակականորեն կազմակերպված ազդեցությունից:

Ճիշտ է, ի հարկե, վոր Արուսթյուն-Աղայանը ժխտելով յեկեղեցու միջոցով յեղած աստվածապաշտությունը, այնուամենայնիվ բացարձակապես չի ժխտում աստու գազափարը: Այս առթիվ պետք է նկատել, սակայն, վոր 60—80-ական թվականներին հայ հասարակական այնքան հետամնաց պայմաններում գրեթե անհնար էր բացարձակ աթեիզմի քարոզ: Այդ ժամանակի մեր դեմոկրատական մտավոր շարժման ամենատաշաղեն ներկայացուցիչները (Մ. Նալբանդյան, ապա Դ. Աղաջադեն ներկայացուցիչները (Մ. Նալբանդյան, ապա Դ. Աղաջադեն), անկախ իրենց անձնական համոզմունքներից, հաշվի էյին առնում կրոնի-յեկեղեցու բացարձակ տիրապետությունը հասարակական կյանքում, բայց հաշվի էյին առնում այդ փաստը՝ հենց նրա դեմ ավելի հաջող պայքարելու համար, կրոնի, յեկեղեցու տիրապետությունը հիմնովին խորտակելու համար, հանուն գիտություն, հանուն ժողովրդի լուսավորություն:

Մնա այդ պայմաններում, յերբ, ինչպես գրել է Աղայանը, «խավար էր մեր աշխարհը, շատ էր խավար», յերբ «լուսավոր

մարդուն պետք էր լսեցանքով փնտռել»,— դեմոկրատ լուսավորիչները՝ գիտություն համար, ժողովրդի լուսավորություն համար, տիրապետող այդ խավարի դեմ մղած պայքարը, հաճախ, Փր. Ենգելի մտածանայությունը ասած, տարվում էր «աստվածաբանական շղթայով», բայց ըստ էություն, իրականում ուղղված էր հենց կրոնի հիմքերի դեմ, ամեն տեսակի աստվածաբանություն դեմ:

Շատ հիմքեր կան պնդելու, վոր Աղայանը, հենց իր այս վեպում, չէր հավատում աստծուն, այլ հանդես է գալիս վորպես «բնութենապաշտ», պոլիթեիստ: Բայց այն ժամանակվա պայմաններում մղվող քաղաքական և լուսավորական պայքարն անհրաժեշտորեն վորոշ «աստվածաբանական ձև» էր ընդունում: Ոգտագործելով Ենգելի խոսքերը, ասենք, վոր այլ կերպ չէր էլ կարող լինել, վորովհետև 60—70-ական թվականների շրջանում հայ ժողովրդական «մասսաների» բացառապես կրոնով սնվող զգացմունքներին՝ նրանց (այսինքն այդ մասսաների—Մ. Ա.) սեփական շահերը պետք է կրոնական զգեստավորվածով մատուցվեյին՝ մի մեծ փոթորիկ ստեղծելու համար<sup>1)</sup>:

Մնա թե ինչու Դ. Աղայանի վեպում ժողովրդական մասսաներին ուղղված գիտություն-լուսավորություն քարոզը տեղտեղ հանդես է գալիս «ճշմարիտ աստվածապաշտություն» անվան տակ, վորի բովանդակությունն իրապես անտիկեղեցական է, հակակրոնական է: Արուսթյունը Դոնդուրի վորսոյի Պողոսին համոզում է, թե «աստծուն ժամումը դնելու փոխարեն, պետք է մեր սրբատումը, մեր մաքունն ունենանք... Յերբ վոր աստվածը մեր սրբատում լինի... էլ չենք փնտռի նրան մի ուրիշ տեղ»: Բայց ակնհարե է այն, վոր Արուսթյունի այդ «ճշմարիտ աստվածապաշտություն» քարոզը Աղայանի մտա պայքարի գեղեկ էր իր ժամանակի կյանքում մաթեմատիկական, սեպտիկական, ցեղային պայքարում և ամեն տեսակի անկուլտուրականության դեմ:

Արուսթյունի այդ քարոզի համաձայն մարդն ինքն է իր յերկրային բախտի տնորինողը. մարդու աշխատանքից, նրա ինքնագործունեությունից է կախված իր բարեկեցությունը, բայց վոչ յերբեք աստծուց: Յեվ յեթե, ահա, գյուղում տիրապե-

<sup>1)</sup> Փր. Ենգելս—Լյուզվիկ Փոյերբախ, 1935 թ., էջ 50:

ասում և կոպուլացիոնն ու անմաքրութիւնը, ապա դա, քարոզում և Արութիւնը, բոլորովին ել ասածուց չի կտրված, այլ հետևանք և իրենց՝ դուրսացիւնների հիմարութեան ու ծուրութեան, վարովհետև նա լավ գիտի, որ անմաքրութիւնն աստիճանի վրայ գտնուելու անհրաժեշտ է և նա դուրսացիւններին:

Ազգայնի այս վեպում, ինչպես և այլ գործերում, կրօնական նախադաշարմունքները գեմ մղվող պայքարը ծառայում և մասնակցութիւն լուսավորութեան, նրանց ինքնադիտակցութիւնը դարձնում է գործին: Արութիւնն իր ընկերոջ՝ Մանվելին գրած նամակում կատարի հարձակվելով կրօնական նախադաշարմունքների վրա, միաժամանակ մատնում և գյուղացիութիւնը լուսավորելու միջոցների մասին, «խավարի տիրատուութեանից» նրանց փրկելու մասին, այդ առթիվ Մանվելին, իր ընկերոջը հայանելով իր հետևյալ հասարակական «կտակը»:

«Յեթև աստիճան տա,—գրում և Արութիւնը,—լավ ուսում ստանա, գեղացուց համար մի ամաքիքը կրտարակիք, ետակա-նայի լեզվով ու մտքով»:

Բայց Արութիւնի մտահոգութեանը չի սահմանափակվում ժողովրդի լուսավորութեան, կաշառքաւորական հարցերով: Նրա մտք այդ հարցերը սերտորեն կապակցվում են քաղաքականութեան հետ, ժողովրդի սոցիալական-իրավական վիճակի քննութեան հետ:

Պատանի Արութիւնի համար խի շատ դժուար չէր տիրող կարգերի, ցարական բյուրոկրատական սեփմի ծանրութեանն աշխատավոր գյուղացիութեան կյանքի վրա:

Արութիւնը, այսինքն ինքը՝ Ազգայնը, մեծ ձգտում ունի ուսման-գիտութեան նա ուզում և մանկ գիթնապետ իր ժողովրդի թե կաշառքաւորական հետամնացութեան և թե սոցիալական ճնշման վիճակի մտահոգութեամբ:

Այս մեր գեղացիք լեզու չգիտեն, որեւէ չգիտեն, մի հասարակ յատուկ աստիճան փափախնին վեր են առնում, կշտին կող գալիս Բանի անգամ եմ տեսել մովրովին մի հորը ծեծելիս,—ասում և Արութիւնն Ռասնայի հետ ունեցած զրույցի ժամանակ:

«Նոր չէր, վոր բերդունն ել նստեցին (խոսքը Արութիւնի

հոր մասին և Ա.),—պատմում և Արութիւնը,—ուզում եյին Արութիւնը ուղարկեն, թե՛ ինչ էրապէս քով ես վիճում կնայանքի հետ, ինչո՞ւ յես ասում են հողերը նրանցը չի, գոտով են հափշտակել...»: Այնուհետև Արութիւնն իր քրոջը պատմում և մի գեղք, թե ինչպէս մովրովը ծեծում և իր՝ Արութիւնի հորը՝ պահանջելով նրանից, վոր թողնի իր վար ու ցանքի աշխատանքը և գնա՝ մովրովի համար բեգաւորութեան անի: Ահա մեկ անգամ,—պատմում և Արութիւնը,—մովրովը յեկավ մի հարցուր ճիտութեամբ: Յեկան մի գոտանը վեր յեկան: Յերը վոր գնալու եյին, հերս ասեց,—Այո, խնդրում եմ ինձ մուրախաս անես, յես մեհակ մարդ եմ, տանս ուրիշ աշխատող չունեմ, հիմի ել ուրիշներին տար. թե վոր բեգաւ և, պեաք և ամենքն ել քաշես: Նա թե՛ չի կարելի, պեաք և դաս: Չեմ դալ պիտի գաս, մի քիչ ընդգիծացավ հերս, աւզարութեան եր պահանջում: Մովրովը մի յերկար չէրուխ ունեց, նրա պարտը հանեց ու կոթովը սկսեց հորս յերեսին, դլիւին... ենքան խփեց, վոր արնակուլով արավ: Ենպես բարկութեանս յեկավ... մի մեծ քար վեր կալա ու բարձրացա կուռը, վոր ասնեմ ենտեղից մովրովի գլխին խփեմ, մերտք խփեցին ձեռքիցս, թե՛ ինչ ես անում, գիժ, ուզում ես, վար վող գեղը կրակ տան երեմ... Հարա՛: Ենպես բաներ եմ տեսել, վար սիրտըս արնով լցվել և, աչքերս պեծիկ-պեծիկ արել, դու չգիտես ինչե՛ր են կատարվում, ինչե՛ր, ինչե՛ր... Հիմա յել ամեն միտս գալով, ջանս ստոտում ե, մագերս փշաւաղվում: Յես միշտ ասածուն աղաւ, չանք եմ անում, վոր հողիս չառնի, ինձ լեզու տա, շնորհք տա, վար յես դրանց բոլորի յիզըրը ետեմ, սիրտս եովացեմ...»:

Այսպես ուրեմն, պատանի Արութիւնի գիտակցութեան մեջ մովրովների մարակի, ծեծի, անլույս խավարի տիրապետութեան նկատմամբ բուն ատելութեան և զարթնում. դեռ այդ հասակում նրա «սիրտը արյունով և լցվել», զայրույթից աչքերը պեծին-պեծին են արել» ամեն անգամ, յերբ ակնատես և յեղել ցարական շինողիկների վայրի արարքներին գյուղում: Այդ գիտակցութեամբ, ահա, նա բռնուց ցանկութեան ունի սովորելու, և յեթե նրան հաջողվի «շինողիկ դառնալ», իր դերը նա կոպտագործի «գեղըցի ժողովրդի» կյանքի բարեկաման համար, ճնշված գյուղացիների կուտակված վրեժն առնելով «խեղճերի տունը քանս դողներէ»:

Միամիտ, նայիվ, բայց ազնիվ գաղափար:

Աղայանի այս աշխատութեանն իրավամբ՝ հեղինակի իսկ խոսքերով՝ բնութագրվել և վերջին «Թանգարան պատկերներն», վերոնցով տրված և մի հետաքրքրական կենսագրութեան: Իսկ այդ կենսագրութեան մեջ արտացոլված և ժողովրդի կյանքի— կենցաղի, հոգեբանութեան մի շարք հիմնական բնութիւնները, վարոնք և տալիս են ժամանակը, եսոխան: Յեթև, ինչպէս նկատել և Աղայանը, «Վերք Հայաստանի»-ի մեջ ստույգն և անսասն յբռնակալանը և իգեաշականը խճողված են իրար հետ, միջնակէտ «Արութեան և Մանվել»-ի իրականի նկարչական պատկերն և զնում բնթերցողի առջև<sup>1)</sup>: Վեպի տասնձեռնագրութեանը գեղարվեստական կողմից այն և, վոր նա չունի բնդհանուր վերաբերական կուս ամբողջականութեան, բայց վերջին ինքնակենսագրական վեպ, հեղինակի խոսքերով ասած, «Արութեան և Մանվել»-ի ամեն մի գլուխը մի նկարչական ամբողջութեան և, բոլոր գլուխներն ի միասին կազմում են պատկերներ ի մի կարգ: Հերոսն այստեղ զարգացման ճանապարհի վրա յի գրված, սրտ համար այս վեպը կարող և շարունակել հեղինակի զարգացման հետ և զստնալ մի կենսագրութեան— ժամանակակից անցքերի հետ կապված»<sup>2)</sup>: Աղայանը նույն տեղում հայտարարում է, վոր իր վեպի նախագծի, նրա կառուցման սկզբունքի համաձայն՝ հաջորդաբար պետք է նրա մեջ մտնելին՝ «Մի յերևս մեր նորագույն պատմութեանից» կեն-ինքնակենսագրական, կիսապատմական տիկարկը և «Իմ կյանքի գլխավոր գեպքերը»: Բայց հեղինակը ճետո համոզվում է, վոր «այդ նախագիծն անիրագործելի յեր գեղարվեստական տեսկետից»: Իսկ այն, ինչ վոր ստացվել է, այդ արվել և «ազգային ստույգ պատմութեան ողնեղու նպասակով»<sup>3)</sup>:

Այդ տեսակետից հեղինակն անշուշտ իր նպատակին հասել է, վորովհետև նրա վեպը «ազգային վեպ» է վոչ միայն նրանով, վոր կենդանի պատկերներ շարքով ներկայացնում և ժողովրդի ազգային վարքն ու բարքը, կենցաղը, սովորութեանները, հոգեբանութեանը, այլև նրանով, վոր այն ստեղծված է հայ ժողո-

1) «Իմ կյանքի գլխավոր գեպքերը», էջ՝ 70-71.  
2) Նույն տեղը, էջ՝ 71.  
3) Նույն տեղը, էջ՝ 72.

վորի ազգային միասնութեան և ազգային ինքնագիտակցութեան արթնացման վագով (հիշել վեպի «Յերբորդ գրքուցիլը»՝ «Աշխարհութեան և վարսորդութեան» գլուխը): Արութեանը ծայրում ու քննադատում է իրեն մրցակից աշխարհ, վոր նա «նախատում է շինձու բաներին», բայց վոր մի տեղեկութեան չունի ազգային պատմական անցյալի մասին: Արութեանն աշխարհն առաջարկում է «անգաղար յերգիլ հայ ու Հայաստան», դովել հայ ազգային անցյալի հերոսներին և հետևել ազգային նախահորը՝ Հայկին ու նրա որինակով չհնազանդվել ստաբերկրա ժամանակակից հեղինակին:

Անա այդ գաղափարի կապակցութեամբ Աղայանն իր վեպում խնդիր և անաշարքում՝ վերանորոգել աշուղական արվեստը, աշուղական բանաստեղծութեանը, ազգային-հասարակական բովանդակութեան հարստացումը նրան: Արութեանը «շատ եր ցանկանում մի սաղ ել ձեռք բերել և իսկական ազգը գտնալ՝ աշխարհութեանը բարենորոգելու նպատակով»—ասում է հեղինակը: Նա տեսնում էր, վոր աշխարհը մեծ հեղինակութեան ունեն ժողովրդի աշխուս և «մեծ հարգանք ու պատիվ էլին վայելում: Բայց Արութեանն ընդդեմ էր նրանց թե հանգանդուսութեան անձուսի ձեին, թե թուրքերեն յերգիտեան և մանավանդ նրանց չափից գուրս ստանող պատմութեաններին, վորոնցով շարունակ նախապաշարմունքի մեջ էլին պահում ժողովրդին: Դրանք (այսինքն աշխարհը— Ա. Ա.) ավետարանի և տոտվածու շնչի պատմութեանները ծաղկացնում էլին և պատմում այնպիսի ավերվածներով, վոր տերսերի բերանը բաց եր նում», —ասում է հեղինակը և նկարագրում Արութեանի «բաս մանդը» մի նշանավոր աշխարհի հետ ու նրան հողթելը: Դրանով հեղինակը ժողովրդական նոր բանաստեղծութեան, հին «աշխարհութեանը բարենորոգելու» որինակն է տալիս:

Իր տեղում մենք ցույց կաանք «Արութեան և Մանվել»-ի նաև մանկավարժական գաղափարները, վորոնք ավելի ծավալուն արտահայտութեան են ստանում հեղինակի հետագա յերկերում ու նրա մանկավարժական գործունեութեան մեջ:

Աղայանի այս յերկը նշանակալից նորութեան է նաև իր լեզվով, «Լեզվի կողմից ել այս վեպը այն նորութեանն է բերում, վոր հեղինակին խոսեցնում է մաքուր գրական լեզվով միայն

գործող անձերին և թույլ տալիս, վոր մոտավորապես իրանց իտ- սելու վճռով ու բարրատով հանդես գան, ինչպես այդ թույլ են տալիս ուսու գրողներն ևս», — գրել է Աղայանը<sup>1)</sup>։

Ահա, ընդհանուր գծերով այս և «Արուսթյուն և Մանվել»-ի նշանակությունն ու արժեքը հայ նոր վիպագրության պատ- մության մեջ։

Բայց Աղայանը չհնաց ինքնակենսագրական վեպի սահման- ներում «Արուսթյուն և Մանվել»-ից հինգ-վեց տարի հետո նա ավելի նոր վիպական գործ, սոցիալական վեպի առաջին նոտըը հայ գրականության մեջ, դա «Յերկու քույր» վիպակն է, վորը նշանակալից է՝ հայ գրականությանը մինչ այդ անծանոթ՝ իր նոր թեմատիկայով, հողի համար մղված պայքարով և վորը հան- դիսանում է գյուղացիական զեմոկրատիզմի զեղարվեստական ամենացայտուն արտահայտությունը 70-ական թվերի սկզբին։ «Յերկու քույր»-ը գրվել է ու հրատարակվել 1872 թվին։ Այդ- պիսով Աղայանի այդ գործը նախորդում է Պ. Պոռոջանի ամե- նախոշոր սոցիալական վեպերին՝ «Հացի խոզիք»-ին (1880 թ.), «Ճեցեր»-ին (1889 թ.), «Հունո»-յին (1901 թ.) և այլն։ Իսկ այն, ինչ պատկերել է Պոռոջանը 20-րդ դարի սկզբին («Հու- նո»-յում), այդ ավելի սուր կերպով, Պոռոջանից քառորդ դար ավելի առաջ պատկերել է աղայանն իր «Յերկու քույր»-ում։

Աղայանի «Յերկու քույր»-ի հետագա ավելի բարձր զե- դարվեստական արձագանքն է Թումանյանի «Հառաչանք»-ը (1890 թ.)։

«Յերկու քույր» վիպակը, դա մեր գյուղի հեռոնֆորմյան շրջանի զեղարվեստական ցայտուն պատկերն է, հողի և աղա- տության համար գյուղացիության մղած պայքարի մի պատկեր, վորպիսին մանավանդ 70-ական թվականներին մեր գրողներից վոչ վոր չի ավել։

Աղայանն իրական կյանքի ունալիստական նկարագրու- թյամբ տալիս է հայ և թուրք գյուղացիների հողագրկման և թավազների ու մովրոմներ ձեռքում տնտեսապես սարկացվելու պրոցեսը և այդ գյուղացիների պայքարը հողի համար, վոր մղում էյին նրանք ճորտատիրական իրավունքի փնտրողների, ցարա-

կան չինովներին ու գյուղական գործաների կամայականու- թյունների դեմ։ Աղայանը մասնավորապես այդ վիպակով ար- տահայտում է աշխատավոր գյուղացիության զայրույթն ու տուե- լությունը կալվածատիրական ու կապիտալիստական հողային իրավունքը պաշտպանող կարգերի դեմ, հողային այն «Ջոր» իրա- վունքի դեմ, վոր հաստատվել էր այսպես կոչված «գյուղացիա- կան սեֆորմից» հետո «Յերկու քույր» գրվել է լույս է տեսել այդ «սեֆորմից» 12 տարի հետո, յերբ ավելի վորոշ էյին դար- ձել «սեֆորմի» ծանր հետևանքները գյուղացիության համար։

Հայանի յե, վոր այդ «տիրանաչակ «ազատագրումը» յեղավ գյուղացիների անխիղճ թալանով, նրանց վրա գործադրած ճրն- շումները ու համատարած անարդանքի կարգով», — ինչպես նշել է Լենինն իր՝ «Գյուղացիական սեֆորմը և տրոլիտարական-գյուղ- ցացիական հեղափոխությունը» հոդվածում<sup>1)</sup>։

«Ազատարարներն» այնպես տարան գործը, վոր գյուղացի- ները «ազատ» դառն յեկան մղված մինչև աղքատություն, կալ- վածատերերի սարկությունից դուրս դալով ընկան նույն այդ կալվածատերերի ու նրանց հովանավորյալների ծառայագրու- թյան մեջ», ասում է Լենինը<sup>2)</sup>։

Իր մի այլ հոդվածում («Проект речи по аграрному во- просу во второй Государств. думе», 1907 г. март-апрел), Լենինը ցույց է տալիս գյուղացիների «ազատագրման» իրական բովանդակությունը, այն, վոր «սեֆորմից» հետո գյուղացիու- թյանը պատկանած հողերի մեկ հինգերորդը կտրվեց և արվեց կալվածատերերին, իսկ մնացած մասի համար գյուղացիները կրկնակի ու յեակի վճարեցին և այլն<sup>3)</sup>։

Յեկ հենց Աղայանի հեշտ վեպում արված պատկերը մի վառ զեղարվեստական իլյուստրացիա յե Լենինի վերոհիշյալ մտքերի համար՝ Անդրկովկասի նկատմամբ, մասնավորապես անդրկովկասյան հայ գյուղի նկատմամբ, Հիշինք այստեղ, որի- նակ, Սարկիս բիձայի և գուղացիների խոսակցությունը ճաղա- բանց թախտի, թավազների և հողի առ ու ծախի մասին։ «Առաջ ավ էր թավազի անուն իմացել, ով էր նրանց յերեքը տեսել,

1) Ленин.— Соч., т. XV, стр. 142.

2) Ленин.— Соч., т. XVI, стр. 109. «Пятдесятилетие надежды креп- права» հոդվածը։

3) Ленин.— Соч., т. XI, стр. 98.

1) Են կյանքի գլխավոր գեպերը, էջ 70։

մի քանի տարի չկա, ինչ վոր դրանք յեկան մեկ մեկու հետեկց,  
մարդ իմանա մինչև եղ ժամանակը վորտեղ էջին, հարաթ  
առաջ եզպես որենք չկար: Հենց վոր հանդերն սկսեցին շափել,  
վորտեղ մի քաղցած թափաղ կար, ձեռքը մեկնեց թե իմն ե»  
(Եջ՝ 112)<sup>1)</sup>: «Ահա հասցես մեր բնոր տեղերը մնաց դրանց, մենք  
եղ վոչինչ չունենք, վոչ հող, վոչ շուք, վոչ ծառ, վոչ խոտ,  
ամենի համար եղ փող ենք տալիս, են եղ մեկն յերկուսով, ամեն  
տարի թանգացնում են» (Եջ՝ 113—4):

Աղայանը նկարագրում է նաև ցարական պետութայն տեղա-  
կան ապարատի ու նրա չինոֆիլիների բյուրոկրատիզմը, նրանց  
բազմաստիճան կաշառակերությունը, կամայականությունները:  
Նա ցույց է տալիս, թե ինչպես էջին «լուծվում» գյուղացիների  
հարուցած հողային հարցերը և թե ինչպես հաճախ գյուղացիներն  
իրենք էջին լուծում հարցը փայտի, կովի, ըմբոսս դիմադրու-  
թյան միջոցով:

«Ախպեր, գնում ես գանգատ, տանում են բերում—բերում  
են տանում, մարդու հողի յե դուրս գալիս, դրանց զավթիին չի  
հասնում: Սրան մեղրահացեր տար, նրան գառը տար—մեկեկին  
թաղարներով ալյուր տար, մի ուրիշին փող տուր, մեկի վոտ-  
ներն ընկիր աղաչիր... Ո՞վ է գեղըցու ըռեխին մտիկ տալիս:  
Ճաստով—քաստով գնում ենք դիւխանիսի պատերի տակին շար-  
վում արեզուն արած խողերի նման, մի և մեկ մարդու տեղ  
գնում, գիր չենք գիտում, որենք չենք գիտում»:

Ահա և առանձնապես թուրք գյուղացիներին մասին. «...Հի-  
մի մեր թուրքերը կիսովի յեն վարում... խոտհարին եղ ջոկ են  
տալիս, տներիցն եղ ջոկ են հարկ տալիս, թագավորի խարջն եղ  
ջոկ են քաշում, խեղճերն աղքատությունից քաղցած կոտորվում  
են, զոգությունով են ապրում, ուրիշ ապրուստ չունեն: Ուրիշ  
տեղ եղ չեն ճարում, եղտեղից դուրս գան հեռանան» (Եջ՝ 124):

Ահա մի այլ ուշադրավ գիտողություն. «...Իսկի տեսած  
կանք,—հարցնում է մի գյուղացի,—վոր մեկը գա մեկ համար մի  
բան բերի, մի բան տա, գրի եղ տանում են ու տանում: Եսոր  
գնա ճամբա շինի, կզուց գնա մորեխ կոտորի, եսոր ես տուր:

կզուց են, իշի պես լանեցնում են, վոչխարի պես խուզում, մի  
և մեր տեր ու տիրականը»:

Գյուղացիների դրույթի վերջում Պետրոս բիճի այն հարցին,  
թե՞ «Սարգիս բիճա, մեկ անգամ տա մեր աշխարքն անտեր է  
ու պըծիր, եղ ինչ ես դրուիդ ցավեցնում», Սարգիս բիճեն պա-  
տասխանում է. «Անտեր վոր ըլի, լավ է, շների ու գեղերի մեռ-  
քի են» (Եջ՝ 124):

Գյուղացիներին՝ հետ-ուժորմյան շրջանի անտեսական ու  
երավական դրության և քաղաքական տրամադրության մասին  
սոված է գրեթե ամեն ինչ, այդ կարճ պատասխանի մեջ:

Սարգիս բիճի և մյուս գյուղացիների պատմություններում  
յայտուն կերպով ներկայացված է գյուղացիների անտանելի  
ծանր վիճակը, նրանց հուզումնալից տրամադրությունները 19-րդ  
դարի կեսերին ու հետո:

Բայց Աղայանը միակողմանի չի տալիս դրությունը. նա  
նկարագրում է մեծ միայն այն, թե ինչքան ծանր եր կյանքը գյու-  
ղացիների համար, թե ճնշումն ու շահագործումն ինչ ձևերով  
էջին տարվում, այլև այն, թե ինչպես էջին պայքարում ու դի-  
մադրում գյուղացիներն իրենց ճնշողներին դեմ:

Նացիոնալիստները խեղաթյուրելով մեր ժողովրդի պատ-  
մությունը, զարգացրել են այն «տեսությունը», թե, իբր մաս-  
նավորապես անցյալ դարի ընթացքում, հայ գյուղում չի յեղել  
սուր դատակարգային պայքար, թե հայ գյուղացիությունը չի  
ընդվզել և իբր՝ կարիք չուներ, տիրապետողների դեմ, այլ խո-  
նարհությամբ տաքել և ամեն տեսակ զրկանք ու ճնշում: Իսկ  
Աղայանի մասին խոսելիս առանձին ուշադրություն չեն դարձ-  
րել հարցի լուսաբանման այս կողմի վրա: Մինչդեռ Աղայանն  
տնա իր այս յերկով հանտատում է, վոր սուր դատակարգային  
պայքար յեղել է նաև Անդրկովկասի հայ (ինչպես և թուրք ու  
վրացի) գյուղացիության, կյանքում՝ հողի համար, ընդդեմ կա-  
վածատիրության, ընդդեմ ցարական չինոֆիլիստության: Իրենք,  
գյուղացիներն են պատմում Աղայանի գրքում, վոր յերջ հուսա-  
հատության էջին հաճում, գիմում էջին ակտիվ գիմադրության  
միջոցների. «Շատ անգամ մեծում եղ էյիմք քավաղներին, յերբ  
վոր գալիս էյիմ քսիրա ուգիւր, յեյիմք տալիս»: Բայց դրա պա-  
տիմն եղ քաշում էյինք»,—ասում է Սարգիս բիճեն (Եջ՝ 114) և

1) Փակագծերում յեղած թվերը ցույց են տալիս «Յերկու քույր»-ի  
1892 թվի հրատարակութայն համապատասխան էջերը:

հիշում թավադներին ձեռնելու յերկու կոնկրետ դեպք: Նա պատ-  
մում է, թե ինչպես ինքը, մի խումբ ընկերներով ձեռնել են  
թավադ թուլածեյին, չնայած վերջինս թուր և ունեցել ձեռքին:  
«Բհիրս վրա բերի թե չե՝ թուրն յերկու կտոր յեղավ, մեկ էլ  
վոր հասցրի, տեղն ու անդը վավեց, ու շվայ-մե մեղվեիթ» («Մե,  
ոգնեցեք») կանչեց: Ո՞վ պիտի տղաներ, մինչև իր մարդիկը կող-  
նեյին, իմ ոգնականներն ավելի էյին շատացել: Լուսանոգի Դու-  
կասը<sup>1)</sup> նրա բձերին աղցան էր արել... հոգիս մի լավ ջարդ ու  
բուրդ արինք, և հեշտ էլ պրծանք. են գնալն եր, վոր նրանք  
գնացին, էլ չիմացանք կոտորվեցին, թե մնացին (եջ 117):

«Այ լավ գաատատան»,—ասում և գյուղացիներից մեկը,  
արտահայտելով մյուսների կարծիքը: Իսկ Սարգիս բիձեն այ-  
նուեհետև, ջանել գյուղացիների խնդրանքով, պատմում և մի այլ  
ավելի սուր ընդհարման դեպքի մասին (եջ 118): «Եղ լավ դա-  
տաստան և, Պետրոս, բայց ամեն անգամ չի մարսում: Դրանից  
սիրա արած, Նալխուստովին էլ ձեռնեցինք, բայց քիչ մնաց սիրի  
եյին ուղարկում: Ուղարկեյին եթ ո՞վ էր կարգնողը, ո՞վ պիտի  
ասեր, ինչի յեք ուղարկում (եջ 117—118): Սարգիսն Արզումա-  
նի հոր՝ Դուկասի հետ միասին գնում են թավադ Նալխուստովի  
այգու մոտ յեղած ընկուղենուց սղտվելու. ընկուղենին չի մըա-  
նում Նալխուստովի հոգամասի մեջ և նրան չի պատկանում, բայց  
գյուղացիք վախենում էյին և չեյին ողտվում նրանից:

Արզումանի հայրն ու Սարգիս բիձեն համարձակվում են  
այդ անել և կռվի յեն բռնվում Նալխուստովի ծառաների հետ,  
հարձակվում ու ձեռում նրանց: Քիչ հետո հայտնվում է ինքը,  
Նալխուստովը, մի քսան մարդ էլ հետն առած: «Ասեցի, Դուկաս,  
սրանց հետ կավի չի բլի, կամ փախչենք, դիմենք ազատենք,  
կամ թե չե ասենք. «Ազա, ես ծառերը քանը չի, դու ինչո՞ւ համար  
ես արգելում: Յեկավ թե չե փափախներս վեր կալանք, առաջին  
կանգնեցինք, վոր անանք ինչ է տուում, պատասխան ասեր:  
Բայց անխորհի յեկավ թե չե՝ «շահարիթ» (կտպտեցեք) ասեց,  
մազիթի ռձուլի (զբանց հավատար): Մեր հավատին դիպան թե  
չե, Դուկասի փափախը ձեռքիցն ընկավ: Կատապոս ասրանի  
նման ընկավ Նալխուստովի վրա, ու անգն ու անդը վեր կրխեց,

<sup>1)</sup> Արզումանի հայրն է (եջ 113):

սրան չորեց: ...Յես էլ ուղեցի ոգնել, բայց գլխիս հնուկս խփե-  
ցին, վոր շմած վեր ընկա: Աչքս մեկ էլ հնաեղ բաց արի, վոր  
տեսա յերկուսիս էլ կապուսի են» (119—120): Ազա Սարգիս  
բիձեն պատմում է, թե ինչպես իրենց քաղաք են տանում (Թիֆ-  
լիս) և բանտարկում Մետեխի բանտում, ուր 6 ամիս ծանր որեր  
ապրում, և ապա տանում են դատելու նույն այդ Նալխուստովի նախա-  
գահությամբ գործող «գիլմանխանում»: «Եղ դիվանխանի գլխա-  
վորն ինքը, Նալխուստովը էր: Նա ինքը վեր գցել ավալ մեղ, սող-  
գի խփել ավալ, քամակներին կաշին մաշկել ավալ, հետո բաց  
թողեց. «Գի հլմի գնացեք, ասեց, խելոք կացեք, իմացեք ում  
հետ գործ ունեք»: Մեր շորերը մեկ ավին, հազանք, յեկանք  
մեր տները, յերեք ամիս տեղումը պառկեցինք... Հիմի էլ վոր  
միտս է գալիս, ջանս փշաքնովում. է: Ախր, յերբ վոր պատժողը  
և ազատողը քո թշնամին է, էլ ինչ կարող էս անել նրան» (եջ  
120—1):—անգոր գայրույթով նկատում և գյուղացին:

Բնորոշ և նաև հետևյալ գիտողությունը, վոր անում է մի  
գյուղացի Սարգիս բիձի պատմած այդ դեպքի առթիվ. «Մախ-  
լան, դեղըցու բանը, մի գարդ ու բալա յե, ասաց Վարդանը:  
Մենք վոր կանք, երեխի պես բան ենք: Երեխեն վոր պահող չու-  
նենա, ջուրն էլ կնկնի, կրակն էլ, ինչ ասես կպատահի—մենք  
վոր մեր գլուխը չպահենք, վոչով մեկ իշի տեղ էլ չի դնիլ: Մարդ  
իմանա, ինչ է մեր մեղը, վոր էս որին ենք...»: Դրան Սարգիս  
բիձեն պատասխանում է. «Փառների մեղքն ինչ է, վոր դայերն  
ուտում են: Մեր մեղքն էլ են է, վոր մենք վախար ենք, գայերը  
մի կողմից սյիտի ուտեն, մարդիկ մեկի կողմից կրեն ու խուզեն»  
(եջ 121):

«Յերկու քույր» վիպակի ուշադիր և բարեխիղճ ընթերցողը  
տեսնում է, վոր այդ վիպակը ժամանակի սոցիալական այրող  
հարցերն է շոշափում, վոր Ազայանի այդ սակեղծադրության  
մեջ վոչ միայն ցայտուն պատկերներով նկարագրված է գյու-  
ղացիության տնտեսական ծանր դրությունը, նրա իրավազրկու-  
թյունը սոցիալական-քաղաքական կյանքում, այլ և արտացոլված  
և գյուղացիության տարերային պայքարը կալվածատիրության,  
գյուղի կուրակության և ցարական իշխանության դեմ: Այլ, ի  
հարկե, այդպես և Բայց անցյալի հայ բուրժուական-նացիոնա-  
լիստական քննադատությունն աշխատել և լուսթյան մասնել

Ղ. Ազգայնի ստեղծագործութեան այդ ուշադրաւ, արժեքաւոր կողմերը, ներկա դեպքում խեղաթոյրել է «Յերկու քույր» վեպի իսկական իմաստն ու նշանակութունը:

Իժբախտաբար այդպես է վարվել նաև խորհրդային քննադատ Սորեն Սարգսյանը, մենք նկատի ունենք ասանձնապես նրա Ղազարու Ազգայնի մասին հոգովածը ախրահնչակ «Հայ գրակ, պատմ.» II հատորում (1934 թ.):

Իրականագետ-քննադատ Ս. Սարգսյանը Ազգայնի «Յերկու քույր» վիպակում անհնում է սոսկ «լիրիկական գեղումներ» և կամ «յերկու յերթասարգների դժբախտ», «անմուրազ սիրո սանտիմենտալ պատմութեան» (ն. ա. Եջ՝ 193): Նա վաղ մի պայքար չի տեսնում յեկնիւով միայն այն փաստից, վոր վիպակն իրար վոր արտեր, յեղբրական վախճան է ունենում:

Բայց ակնբախ է, վոր այդ մոմենտը չէ «Յերկու քույր»-ի իմաստը: Հիմնականում նրանում կենտրոնական ու զլխավոր հարցը գյուղացիների (Արղումանի, նրանից առաջ իր հոր՝ «լուսահողի Ղուկասի» զլխավորութեամբ) անհաշտ արյունոտ կռիւն է հողի համար՝ ընդդէմ գյուղի զոտքաների (Ճագարանց թաթոս, թավաղներ և այլն):

Ճիշտ է, վոր Արղումանը մեռնում է անփառունակ մահով—ինքնասպանութեամբ, բայց այդ փաստը ըտրորովին չէ վկայում այն մասին, թէ «Յերկու քույր»-ում մարտական լուսնուդները փոխարինված են «անմուրազ սիրո սանտիմենտալ պատմութեամբ», ինչպես կարծել է Ս. Սարգսյանը, այլ դա ցույց է տալիս միայն գյուղացիութեան անկազմակերպվածութեան հետևական բով յեղած թուլութեանը՝ կարվածատիրութեան և ճորտատիրական կարգերի մնացորդների դեմ իրենց մղած պայքարում: Բայց վոր վիպակում սուր կեցողով զգում ես գասակարգային պայքարի փաստը, բուն տատելութեանը արտապատգներին նկատմամբ, այդ անժխտելի չէ: Ինչպէս կարելի չէ անտեսել վերը հիշված մոմենտները, վորոնք արված են վիպակի «Միջանկյալ պատմութեան» զլխում, վորն հասեա քննադատների վերամբարձ ուշադրութեամբ չի արժանացել: Վումանք կարծել են, թէ այդ զլուխը միանգամայն աղիւրդ, վիպակն իդուր ծանրարեւուտ շնչում է, վոր կատարել «հողինակր» Միջանկյալ պատմութեանը՝ որգագապես միացած է վիպակի ամբողջութեան

մեջ: Ինչպէս կարելի չէ մտածել նաև մի կողմից Արղումանի ու մյուս կողմից Ճագարանց թաթոսի խմբի («առաջ-քան բոլարջերի») արյունոտ ընդհարումը—կռիւն հանդում, վոր նկարագրված է միջանկյալ զլխից առաջ: Ուշադիր ընթերցողը կնկատի այն որգանական կապը, վոր կա այդ ընդհարման ու «Միջանկյալ պատմութեան» միջև:

Ակնհայտ է, վոր վիպակի սիրային մոմենտը, դա Արղումանի կյանքի, վորոշ իմաստով միայն, անձնական մոմենտն է, իսկ մյուսը՝ պայքարն է հողի համար, վորը նրա կյանքի հասարակական-քաղաքական մոմենտն է, վորը և կողմում է վիպակի հիմնական բովանդակութեանը:

Փորձենք պարզել, թէ ով է Արղումանը, նա ...իր մոր մի նուճարն էր: Նա չունի վաղ մի հարստութեան, այլ միայն մի անվեներ սիրտ... Ասելով ատում էր հարստների, վերովետև նրանք հափշտակել էին նրա հայրական ունեցած-չունեցածը իր անչափահաս ժամանակ: Չկարողանալով յիս ստանալ հայրական հողերը, ուշխատում էր փրստ ապ նրանց, ինչքան վոր ձեռքից կգար... Նրան ամենքն կ սիրում էին... Ետանքի համար իր զլուխը յիս դբած ուներ, նեղյալներին և չքովորներին ոգնում էր ինչո՞վ վոր կարող էր» (Եջ 19): Յե՞վ յերբ Ճագարանց թաթոսի մարդիկ հանդն են պնում թաթոս չտալու Արղումանին հողը վարել, և ձեծելու նրան, այստեղ Ազգայնը մեծ հիտցմանքով, խորը համակրանքով և նկարագրում Արղումանին՝ իր հակասակարգների հարձակումն ընդունելիս և կպիլիս: Վե՞ծելի հողի վրա արյունահեղութեան յեզով, Արղումանը հերտաբար պաշտպանվեց և իր ձեռքում յեղած գութանի սրբիչով պտին տաղալից բոյսը յեկողներին (Եջ 38—39):

Արղումանը յոթ յեղբայր է ունեցել, նրանք բոլորն էլ մեռել են վոչ իրենց ընտանի մահով կամ հիվանդանալով, այլ մեկ-մեկ փորձանքի հանդիպելով...» (Եջ 40—41): Ի՞նչ «խորձանքի» մասին է խոսում Ազգայնը:

«Արղումանի յոթ յեղբայրներից յերեքը բանտումն էին մեռել, յերեքն անարանում, և այս իրենց անվեներ և ազնիվ սիրտ ունեներուն համար միայն» (Եջ 41): Ազգայնը նկատում է, վոր դա բոլորովին էլ տառահական յերևույթ չէր, այլ շատ սովորական՝ գյուղացիութեան կյանքում այն նողկալի, անիծյալ ժամանակ-

ներում: «... Միտյն գինվորների կյանքը չէ վտանգի յեմքակա պատերազմի ժամանակ: Այն մարդոց կյանքը ևս շարունակ յեմքակա յե վտանգի, վորոնք հանդեմաբայուն ունեն մարտ մղելու կյանքի անիրավ և անարդար հանգամանքների դեմ. վորքա՛ն անիրավությունն ու անարդարությունն կա սրենեով ու աղաթով անվերտանգ վիճակի մեջ դրված: Ո՞վ կարող էր դրանց մեռն տալ և անպատիժ մնալ» (եջ 41), — միջանկյալ նկատում է Աղայանը և այնուհետև վորպես իր ասածի ապացույց բերված է Արզումանի հիշյալ յոթ յեղբայրների որինակը: Յեվ հենց Արզումանն էլ իր կատարած այդ հանդեմության համար խտորեն կատարվելը (ինչպես պատվել էլ ինչ նրա յոթ յեղբայրները) իր մահը գլուխներով կամ բանտում, կամ աքսորում, յեթե չփախչեր ու չմեկուսանար գյուղից ու բնակությունից դուրս (եջ 44—45) և չմիանար հարյուրավոր փախստականներին — գյուղացի պարտիզաններին:

Արզումանն ուրեմն գյուղացի պարտիզան է, անվիհեր մարտիկ, վորն իր կյանքը չի խնայում տիրող անիրավության դեմ մղվող կռվում: «Արզումանն իր անձի ազատություն համար յերկյուղ չունեցրած մեծահասակ... Վարտեղ մի փախստական կար, նրա ծանոթն էր: Քանի վոր այս փորձանքին չեր հանդիպել, նա փախըստականների հետ ընկերություն անելիս, կասկածում էր, թե մի գուցե նրանք իրեն բանի տեղ չէին դնում, վորովհետև կարողացել էին իրենց անունը հռչակել ամբողջ նահանգի մեջ և իշխանություն ուշադրությունը գրավել»: Արզումանն ինքն իրեն վշտանում էր, վոր իր ծանոթ փախստականների նման դեռ չի հռչակվել նրա անունը նահանգում: Նա բարի նախանձով էր նայում նշանավոր փախստականների վրա» (եջ 45), և ահա հանդուրդում պատահած «փորձանքից» հետո, նա ինքն էլ փախստական է դառնում, և այն էլ վոր շարքային, այլ ղեկավար, նպատակ ունենալով վրեժ լուծել իր դատակարարային ու քաղաքական հակառակորդներից. «պատժելու անխղճմտանք ու անիրավ մարդկանց» (եջ 46), «մարտ մղելու կյանքի անիրավ ու անարդար հանգամանքների դեմ»:

Այս ամենից հետո կարելի չէ ասել, թե «Յերկու քույր»-ում «մարտական լողուններ չկան»... թե իբր այնտեղ «մարտական լողունները փոխարինվում են յերկու յերիտասարդների դժբախտ,

անմուրաց սիրտ սանտիմենտալ սրտամուխյամբ», և կամ թե «Յերկու քույր»-ով Աղայանի «ազգային վիպեր վերածվում է «յեղերական վիպի» և այլն և այլն, ինչպես գրել է վերոհիշյալ քննադատը: Վնչ, այդ չի կարելի ասել: Ի հարկե ճիշտ է, վոր «Յերկու քույր»-ում կա դժբախտ սիրտ պատմություն, բայց այդ պատմությունը Ղ. Աղայանը ներկայացնում է գյուղացիություն հողի ու ազատության համար մղած պայքարի ֆոնի վրա և արտահայտում է հեռ-սեֆորմյան շրջանի գյուղացիության պայքարի արամադրությունները:

Բայց «Յերկու քույր»-ը Ղ. Աղայանի 70-ական թվականների հասարակական-քաղաքական արամադրությունն արտահայտությունն է: Հետագայում նա չի նահանջում արդյոք այդ արամադրություններից, իր պայտամբ հերոսի՝ պարտիզան Արզումանի սիրտ, կյանքի ախուր վախճանով արդյոք չէն սահմանափակվում Աղայանի վերոնունները տիրացեալ ցարական վատիկանական սեփմի դեմ մղված պայքարում: Վնչ, նրա հետագա շրջանի ստեղծագործությունները վկայում են, վոր Աղայանը չի նահանջում իր պայքարի գիտքերից:

Ազնիվ գեղեկատու հետագա ստեղծագործությունները վկայում են, վոր «Յերկու քույր» վիպակի արայնացում արամադրությունը չի քննում, այլ մի միայն գիծ է կազմում նրա վողջ ստեղծագործության մեջ:

Իր կյանքի ու ստեղծագործության բոլոր կտառներում Աղայանի մտտ հողային-գյուղացիական հարցը միշտ էլ է կենտրոնական տեղ է գրավել յեղի և նրա ուշադրության ու մտահոգության զլխավոր ասարկան: «Յերկու քույր»-ից հետո 80-ական թվականներին էլ Աղայանը նորից ու նորից անդրադառնում է այդ հարցին, իր մի քանի գեղարվեստական գործերի («Ճորջ անդիզ», «Բաժանություն» և այլն) իդեական հիմքը կազմել է այդ հարցը, արտահայտելով գյուղացիություն արամադրություններն ու դժգոհությունը՝ հեռ-սեֆորմյան շրջանի տիրող պայմաններից: «Բաժանություն» վիպակի մեջ, որինակ (գրված 1889 թ., ապված «Ճարպ»-ի 1890 թ. № 2-ում), թեկուզ միայն ակնարկի ձևով, Աղայանն անդրադառնում է «սեֆորմի», հեռ-վանքներին և շատ մասը գույներով և ներկայացնում դրություն

նր: «Ատրկության<sup>1)</sup> աղատութեան հետևանքով, պատմում է Աղայանը, — ժողովուրդն այնպես փոխվեցավ մի տասը տարվա մեջ, վերջան փոխված չէր հարյուրավոր տարիները ընթացքում. ինչ վոր մի շահի արժեք առաջ, դառավ քսան շահի և ավելի ևս: Փողը շատացավ, շաշուրքունքն էլ հետը և այս վերջինը հաղթեց առաջինին: Առաջվան հարյուր մանեթով յերջանիկ ապրողը էլ չկարողացավ հագար մանեթով ապրել: Մի նոր տեսակ գոյութեան կոխվ սկսվեց, անմիտները հանկարծ սատանայացան, խեղճները խորամանկացան, ազնիվները խարդախացան, հավասարութունը կորավ, սերը սառավ, սեփականությունը ձեռքից ձեռք անցավ, և այլն այսպես<sup>2)</sup>»:

Աղայանը բավական սուր դիտող է. նա իր յերկում ժամանակաշրջանի ամենաբնորոշ փաստերն է նշել: Յեթն «Յերկու քույր»-ում նա առաջին հերթին գյուղացիների անելանելի վիճակն է տեսնում հողային նոր իրավունքի պայմաններում, ընդվզումները տիրապետողների դեմ, ապա 80-ական թ.թ. վերջին նա արդեն տեսնում է հասարակական «նոր հոգևորանություն», նոր բարքեր՝ համապատասխան այն նոր հարաբերություններին, վոր տիրապետող եյին դարձել արդեն «ոսփորմից» հետո քառորդ դարից ավելի անց, հարաբերություններ, վորոնք արտահայտում էին «գյուղացիական» կոչվող «ոսփորմի» իսկական բուրժուական եյությունը: Ընդհանրապես Աղայանը, վոր «ոսփորմից» հետո ամբացած նոր կապիտալիստական հարաբերություններում՝ իսկապես «մի նոր տեսակ գոյութեան կոխվ սկսվեց», կոխվ, վոր հիմն ի վեր շուտ էր տալիս այն ամենը, ինչ նախապետական ու նախնական էր, ինչ վոր սուրբ էր, մասնավորապես, յերբեմնի համոզյանական հոգատիրութեանը և պարզ ու մաքուր բարքերին սուր գյուղացու համար, գյուղացու, վորի համար «ոսփորմից» հետո ամենաազնետալին այն էր, վոր «սեփականությունը ձեռքից ձեռք էր անցնում», հողն առ ու ծախի առարկա յեր դարձել, ամեն ինչ չափվում էր փողով, վորը գարձել էր վոչ միայն նյութական, այլև բարոյական որևէ քննիչների

<sup>1)</sup> Սուրը 1861 թվի ճորատիրական իրավունքի վերացման օսփորմին է վերաբերում:

<sup>2)</sup> «Հայ գրողներ», հ. ա. էջ 55. Դ. Աղայանի «Ժամանակությունը»:

միակ չափանիշը: Աղայանը դժգոհ էր դրանից, բայց դա նրա անհատական դժգոհությունը չէր, այլ վոչ զյուղացիութեան, վորը դայրութեով լցված դեպի որեց սր ավելի ամբաշնորհող, ավելի ծավալվող կապիտալիստական կարգերի նկատմամբ, յերապուծ է յիս դատնող պատմական «յերանելի ժամանակները», յերբ վոչ թավազ կար, վոչ յասավուր, վոչ մովրով, վոչ փողի տիրապետություն և վոչ էլ, մանավանդ, հողի առ ու ծախ կամ հողագրկություն:

Այսպիսով, Աղայանի այդ յերկու վիպական գործերը՝ «Արու-թյուն և Մանվել»-ը 60-ական թվականներին վերջերին, «Յերկու քույր»-ը 70-ական թվականներին, նշանակալից յերևույթ եյին մեր գրականության զարգացման մեջ թե իրենց սոցիալական-իդեական բովանդակությամբ և թե իրենց գեղարվեստական արժեքով, հայ գեղարվեստական արձակի զարգացման ավյալ շրջանում:

Աղայանի 80—90-ական թվերի ստեղծագործություններից է նաև նրա նշանավոր «Քյորոզլին» («Արկածներ Քյորոզլու կյանքից») արձակ գրույցը, բազկացած յերեք հատվածից և լույս տեսած 1887—1893 թ.թ. ժամանակաշրջանում («Քյորոզլին Չաղացպան» — «Արքույր»-ում, 1887 թ. № 4, «Քյորոզլու թուրը» — «Տարազ»-ում, 1893 թ. № 5 և «Քյորոզլին կալանավոր» — «Մուրճ»-ում, 1893 թ. № 2):

Այստեղ նկատենք, վոր «Յերկու քույր»-ի (1872 թ.) և Քյորոզլու (1887—93 թ. թ.) միջև կա մի վորոշակի իդեական-ստեղծագործական կապ: Կարելի չէ ասել, վոր այդ իդեական կապի ճայրերը սկիզբ են առնում «Արություն և Մանվել»-ից: Այդպիսով ստացվում է մի իդեական շղթա՝ Արություն-Արզուման-Քյորոզլին: Բոլոր այդ շորս հերոսների կյանքում հիմնականը — եյականը՝ տիրապետող կարգերից դժգոհ լինելը, տիրողների նկատմամբ խորն ատելությունը, շրջապատող իրականությունը դեմ պայքարի մեջ մտնելն ու նոր կյանքի, նոր հարաբերությունների մասին նրանց ունեցած բուռն ձգտումն է, վորով նրանք սուր հակադրություն մեջ են իշխող հանրակարգի հետ: Արությունի և Արզումանի վերաբերյալ մենք այդ ցույց ենք տվել վերևում: Այժմ կանգ առնենք Քյորոզլու մասին և ցույց տանք վերոհիշյալ իդեական կապը:

Հայանի յե, վոր Քյորոզլու մասին ժողովրդական զրույցը

7. Աղայանից առաջ 1856 թվին մշակել և Ռ. Պատկանյանը: Բայց վոչ մի նմանություն չկա Պատկանյանի ու Աղայանի մշակումների մեջ և առավելությունն անկասկած Աղայանի մոտ և Պատկանյանի մոտ Քյորոզլին փաստորեն դադարել և ժողովրդական հերոս լինելուց: Պատկանյանի պատկերած Քյորոզլուց «նար սափում են միայն Սուլթանի խեղճ նոքարները» և նրա պոտմությունն էլ հերթնակն անում է, վարպետի լսեն «հայ քրիստոնյայք» ու «տոգի իշխանք»: Պատկանյանի «Քյորոզլին ափելի շատ նման է Հ. Հովհաննիսյանի «Աշուղ»-ին: Պատկանյանը ժողովրդական դեմոկրատական ձգտումներով, ինտերնացիոնալիզմի վարով շնչող այս դյուցազնական վեպը—դրույցը՝ փաստորեն վեր և ամէլ վորոշ չափով ազդային վողքասացություն: Տիրող կարգերի դեմ ուղղված ժողովրդական հերոսականություն չկա նրանում:

Իսկ Աղայանի մոտ, այլ և Քյորոզլու պատկերը: Աղայանը շատ հավատարիմ և մնացել այդ վեպի ժողովրդական-հերոսական վոզուն:

Այս հերոսավեպը Աղայանի մոտ՝ Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ կապի արտահայտություններից մեկն է, վորի մեջ արտահայտված են նրանց ազատագրական ձգտումները և միասնական պայքարի վոզին՝ ընդգեւ ազդային ու գասակարգային ճնշման:

«Քյորոզլու հոշակը մեզ յերկրում ամեն տեղ և ամեն ազգի մեջ տարածված է: Թուրքերը նրան թուրք են համարում, քյորզերը՝ քյորզ, հայերը՝ թուրքացած հայ, նրա յերգերն ամեն ազգի իր լեզվովը և յերգում, բայց հայերից, վորոնք տեղ-տեղ թուրքերեն և տեղ-տեղ էլ քրդերեն են յերգում, —նկատել և ինքը, Աղայանը 1893 թ. «Տարազ»-ում<sup>1)</sup>»:

Աղայանը մանկությունից լսել և Քյորոզլու մասին դրույցը և անչափ սիրել և ժողովրդական այս հերոսին, սիրել այնքան, վոր ինքն էլ հայտնի յեր վարպետ Քյորոզլու յերգերի վոգեշունչ կատարող:

Նրա ժամանակակից ու մոտ դրողները (Պ. Պոսոյան, Հ. Թումանյան և այլն) Աղայանին յերբեմն հենց այդ անունով էլ կոչ-

չում էյին՝ Քյորոզլու: Յեվ Աղայանն էլ իր հերթին սիրով ու հաճույքով էր ընդունում այդ անունն իր վրա, վորովհետև նա գիտակցում էր, վոր իր կյանքի ու դրժունելություն մեջ քյորոզլական կան զծեր շատ կան: Բնորոշ և մանավանդ այն, վոր հենց ինքն էլ, իրեն, հարմար առիթով, կոչում էր Քյորոզլու ու նշում, վոր ինքը Քյորոզլու պես կովում է իր հակառակորդների դեմ:

Ահա մի փաստ. 1894 թ. հունվարին իր մտերիմ ընկերոջ՝ Հ. Թումանյանին գրած նամակում, նա հետևյալն է գրել:

«Ինձ հարկավոր է թիֆլիսումը լինել անկախ և ազատ... Ինձ անկախ կացուցանելով, հնար կատանամ, վոր Քյորոզլին սկսի մի նար և չտեսնված կռիվ, գրական, բայց շատ սարսափելի:

Պիտի հարվածեմ փարիսեցիներին գրական ամեն տեսակ ձևով ու դենքով»<sup>1)</sup>:

Արդ, ինչպիսին և Աղայանի Քյորոզլին, ըստ Աղայանի ինչձի էր նա սիրելի կովկասյան ժողովուրդների համար: Ահա Քյորոզլու հիանալի բնութագրերը, նրա ժողովրդական-հերոսական կերպարը՝ Աղայանի մոտ.

«Քյորոզլին գող չեր և վոչ ավազակ, այլ մի ինքնագլուխ իշխան, իսկ անկախությունը հասել էր նա իր անվեհերությունովը: Իրանի թագավորը նրան համարում էր ավազակ. այսպես էյին ձանաչում նրան և սուլթաններն ու խալիֆաները, վորոնց կարծիքը Քյորոզլու համար նշանակություն չուներ:

Նա այսպես և դատում—«Յեթե հարկ առնելը մեղք է, ինչո՞ւ իրենք առնում են, յեթե հնազանդելը լավ բան է, ինչո՞ւ իրենք ինձ չեն հնազանդում, իրենք զոռով ու բռնություն են տիրում աշխարհին, յես էլ իրենց պես կվարվեմ: Այդ բարբարոս ավազակները իրենց աչքի գերանը չեն տեսնում, բայց համարձակվում են իմ աչքում շյուղ գտնել: Իրանք իրանց ավազակ չեն համարում, չնայած վոր նույնիսկ ասածու, վառքն հափշտակում են, իսկ ինձ... համարում են ավազակ»:

Քյորոզլին, ըստ Աղայանի, «բնություն պարզ վորդի» յե, վորի «գլուխը լցված չեր գանազան կանխակալ կարծիքներով»՝ սիրող կարգերի, իշխանավորների մասին և կրոնական ու ազ-

<sup>1)</sup> «Տարազ», 1893 թ. № 5-7, Աղայան, «Քյորոզլու թուրք»:

<sup>1)</sup> Պետական գրական թանգարան, Աղայանի արխիվ:

գային տարբերությունները մասին: Եւ «բնութեան պարզ վարքի» յե և նրա հասարակական իրաւունքի վերացնել գոյութեան ունեցող սոցիալական-անձնական անհավասարութեանը, վերացնել ամեն տեսակի ճնշումը—շահագործումը մարդու նկատմամբ, իսկ այդ իրաւունքի կորստի յե հասնել տիրապետող քաղաքական ու հասարակական կարգերի դեմ վերջում պայքար մղելով: Քյոթոպլին բոլոր թագաւորների, այդ թվում նաև առասկանի (արարող սուլթանների) աննշա ու հզոր, անընկճելի հակասակորդն է, վերջից նրանք սօրսափում են և անգամ նախանձամ նրա ումին, վարովհետև փաստորեն Քյոթոպլին մի ինքնուրույն հասարակական-քաղաքական ուժ է, մի ասեաութեան»՝ պետութեանների տերիտորիայի վրա՝ ունենալով իր սեփական զորքն ու դրոշակը, վարի ասակ են մանուս բոլոր կարգի դուրս քաջ ազամարդիկ:

Իսկ ովքեր են այդ «քաջ ազամարդիկը».— բոլոր նրանք, ովքեր անտանելի յեն համարում արդող կարգերը և թշնամի յեն ճանաչված ու դատապարտված իշխանութեանների կողմից: «Կող տեղ մի փախստական և մանապարտ կա, նրա (այսինքն Քյոթոպլու—Ա.Ս.) պաշտպանութեանն է գիծում: Այսպիսով նա կազմակերպված խմբեր ունի յերկրի բոլոր ամուս տեղերում: Բոլոր անմասնակի բերդերին տիրելով, ամենքի վրա իր անուան եր դրոշակը: Բոլոր խմբերն իրար հետ սերտ կապ ունեն և հարկավոր դեպքերում միմյանց ոչնաւթյան են համուսում»:

Հետաքրքրական է Քյոթոպլու «քաջ ազամարդիկացի».— մարտիկների ազգային-ցեղական ու կրոնական կազմը:

«Ամեն հավատալի ու ցեղի մարդ կա նրա խմբի մեջ, բայց մի անգամ այդ խմբի մեջ մտնելով, վոչ մի հավատալի չեն ծառայում, ամենին էլ վրապես դառնում են սեփական և ծաղրում ամեն հավատալի»:

Քյոթոպլին սիրված առաջնորդ է իր մարտական խմբերի համար, նրան իր քաջները սիրում են անձնվիրաբար, դիտակցութեն, վարովհետև նա ինքն էլ պաշտելու չափ սիրում է իր մարտիկներին ամեն մեկին... նույնիսկ իր կյանքը վտանգի սակ զնելով նրանց համար»: Ինքը՝ Քյոթոպլին և նրա մարտիկները սիրուհիները ունեն ամեն մի բերդում: Բայց նրանք իրենց սիրուհիները փակված չեն պահում, նրանք պարտավոր են պի-

նավարժութեամբ պարտել, ճիւղարժութեան գիտնալ և հարկավոր գեղքում քաջութեամբ կովել: Այսպիսով կինը ազամարդուն հավասար իրաւունք ու կարողութուն ունի Քյոթոպլու մոտ: Իսկ ինչով էր գրողված Քյոթոպլին և ինչպէս էլին վերաբերվում նրան իշխողներն առանձին և ժողովուրդն առանձին: Նրա գործունեութեանը—կազմը վարեն գտնաւարդային բովանդակութեան—ճրագիրն ունի և ինչպիսիքն է դա:

Քյոթոպլին «...թաղանթում է քարտվանները, գերի յե տանում հարուստ վաճառականներին և մինչև մեծ փրկանք չի տանում, բայց չի թողնում»: Սակայն Քյոթոպլին հասարակ ափազակ չի, նա ափազակ է միայն տիրողների, հարուստների ու շահագործողների աչքում ու նրանց դեմ, իսկ աշխատավարժ ժողովրդին ապնիվ բարեկամն է, նրա պաշտպանը—առանց աղվի, կրոնի խարսթյան. նա աշխատավոր պաշտպանութեանը պայքարի յե հանում տիրող կարգերի դեմ և յերկրում բոլորքում և դասակարգային պայքարը. «Եւ դուրապիներին վտաքի յե կանգնեցնում իրանց իրանքի ու բեղերի դեմ. կոտորում և կոտորել տալիս կալվածատերերին ու տերութեան կապալաւուներին և այլ-պիսով իր կողմն է գրավում յերկրագործ ժողովրդին: Կոտորում է հարկահաններին և հավաքված հարկերը բաժանում չքավոր դուրապիներին»:

Այսպիսով Քյոթոպլին, համաձայն նրա մասին յեղած այս զրույցի, աշխատավոր ժողովրդի, ստանալորապես դուրապիութեան քաղաքական-հեղափոխական շարժման—պայքարի կազմակերպիչը, վոգեղնչողը և առաջնորդն է՝ վերակենդանացած Անդրկովկասի ժողովուրդների հասարակական գիտակցութեան մեջ՝ 19-րդ դարի 2-րդ կեսին<sup>1)</sup>, հետ-ակֆորմյան շրջանում, ծառայած տիրող հասարակական-քաղաքական սիտեմի դեմ: Քյոթոպլու պատկերը չի հիշեցնում արդյոք Ստ. Ռադիկին կամ Պուգաչովին և վրացական Արտեմիին, կամ հենց Շամիլին՝ Կովկասյան լեռնային ժողովուրդների ազտաագրական հերոսական ՉՏ-ամյա

<sup>1)</sup> Ի վեպ նկատենք, վոր Քյոթոպլու մասին յեղած ավանդութեանը գալիս է ժողովուրդապետ 18-րդ դարից: Քյոթոպլին ազգրեջանական ժողովրդի լեզենդար հերոսն է, վորն ըստ ավանդութեան ապրել է 18-րդ դարում և իր բերդերն է ունեցել Անդրկովկասի անաւիկ բարձրութեաններում, ուր ապրել է նա իր քաջերով ինքնիշխան ու ազատ:

պայքարի այդ նշանավոր դեկավարին՝ 19-րդ դարի կեսերին, մի լեգենդար հերոս, վորի գեմ՝ յերկարատե պատերազմ էյին մղում ռուսական սուլթաններէց յերկուսը՝ Նիկողայ I-ը և Ալեքսանդր II-ը:

Անկասկած է, վոր Աղայանը Քյորոզլու պատկերի մեջ հիացմունքով դիտել և հենց հերոսական Շամիլին, վորը նրա սիրած Քյորոզլու գրեթէ բոլոր գծերն էլ ունեցել է: Աղայանի «Քյորոզլին» Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապէս գյուղացիութեան արատազրակի պայքարի գեղարվեստական արտահայտութիւններէց մեկն է. դա պայքարի կոչ է, ուղղված բոլոր ազգի աշխատավորներին՝ Քյորոզլու որինակով վտար յերանելու տիրապետողների դեմ, մասնավորապէս ռուսական և թուրքական սուլթանների դեմ:

Զինված պայքարի գաղափարը շատ վորոշակի յի «Քյորոզլին»-ում: «Քյորոզլու թուրը» հատվածը, դա կովի գեների հիասքանչ փառարանութիւնն է, իսկ այդ փառարանութիւնն ինքնանպատակ չի Աղայանի մտտ և վոչ էլ ժողովրդի մտտ, վորն ստեղծել է այդ հիասքանչ գյուղացնավեպը:

Հետաքրքրական գուգագրիպութիւնն. բայց միայն գուգագրիպութիւնն, թե փոխազգեցութիւնն: Քյորոզլու թրի յերգն անշափ՝ տեղ-տեղ գրեթէ բառացի հիշեցնում և կերմոնտովի նշանավոր «Кинжал»-ին (գրված 1837 թվին):

Այդպիսով, Աղայանի մտտ վոչ «Յերկու քույր»-ում և վոչ էլ նրանից հետո գրած յերկերում մարտական լողունները չեն փոխաբերնվել «սիրո սանտիմենտալ պատմութեամբ», վորովհետեւ Արզումանը Քյորոզլու բանակի քաջ մարտիկներէց մեկն էր, իսկ նրանից 15—20 տարի հետո իր անմատչելի բերդերից՝ Աղայանի շնորհիվ՝ մեր գրականութեան մեջ հայանված քաջ Քյորոզլին ինքն է խոսում իր մարտական գեմքի ու գործունեութեան մասին: Ակնհայտ է և անժխտելի, վոր Աղայանը 80-ական և 90-ական թվականներին էլ շարունակել է բարձր պահել «անիրավ ու անարդար կարգերի» դեմ մղվող պայքարի գրոշը, գյուղացիական դեմոկրատիզմի գրոշը, ինչքան այդ հնարավոր եր առանց պրոլետարիատի և այն էլ այդ շրջանի հայ իրականութեան պայմաններում:

Աղայանի վիպական գործերից են նաև «Սերը արտաքսված»

ծր» (առաջին անգամ տպված «Մշակ» թերթի 1889 թ. № 3—10), «Բաժանութիւնը» (տպված «Տարազ»-ում, 1890 թ. սկզբի ՆՆ-ում), «Թեմակուն անտուչ» անտավարտ մնացած գործը (տպված «Մեղու Հայտատանի»-ում, 1881 թ. ՆՆ 175—181):

Սրանցից գեղարվեստական տեսակետից անշուշտ հաջողված գործ է «Սերը արտաքսված»-ը:

Անցյալի քննադատութեան մեջ թեև հաջողված են համարել Աղայանի այս վիպակը, բայց ճիշտ չեն գնահատել նրա արժեքը և սխալ են հասկացել այդ յերկի իմացար:

Ահա, որինակ, Աղայանի քննադատներից մեկը՝ Լ. Ս. Յերեմյանն իր «Աղգային դեմքեր. գրագետ հայեր» աշխատութեան մեջ նշում է այդ յերկի «մեծ առավելութիւնները» Աղայանի մյուս վեպերի համեմատութեամբ: Ըստ Յերեմյանի «Սերը արտաքսված»-ի արժեքն այն է, վոր «այդտեղ հայ ամուսինը հայկական գեղջուկ պարզամտութեամբ փառարանութիւն կընէ հավատքին»: «Պիտի սիրվի այդ վեպը, — շարունակում է նա, — վասընչի կը պահէ իր մեջ հայ նահապետական կյանքի մտադրված պտոմութիւնը, բարքը»<sup>1)</sup>:

Ակներև է, վոր վեներտիկյան գրականագետը կրոնապաշտական տեսանկյունով է դիտել յերկը և ըստ այնմ գնահատել այն: Բայց «Սերը արտաքսված»-ի իսկական արժեքն այն է, վոր նրանում հեղինակը շատ վառ, ուժգին նկարագրութեամբ պատկերում է կրոնական հավատքի, նախապաշարմունքի աղետալի, վողրերգական հետևանքը նախապաշարված գեղջուկ յերիտասորդ ամուսինների կյանքում:

Շոտ կենդանի յեն դժապրված վիպակի յերկու գլխավոր դեմքերը՝ յերիտասարդ սիրահար ամուսինները: Մարկոսն ու Նախշունն անասնման ու խորը սիրով սիրում են իրար, բայց ահա մի անգամ ուխտ են դնում և քառասուն որ վաճառում մնալով, անընդհատ կրոնական-միստիկական պատմութիւններ լսելով ամիլի յի վառվում նրանց յերեակաջութիւնը կրոնական նախապաշարմունքներով, բորբոքվում կրոնական մոլեռանդութիւնը և նրանք սկսում են կասկածել իրենց սիրո արդար ու

1) Լ. Ս. Յերեմյան. — Աղգային դեմքեր. գրագետ հայեր, 1923 թ. Վեներտիկ, էջ. 29—36:

անմեղ լինելու վրա, հանգելով այն համոզմանը, թե՛ շատ սիր-  
րելը հանցանք է, վերստին աստիճանը մտնում է առանց սիրո,  
սերը նրան պետք է տալ: Անգրագետ, անուղնական, դարավոր-  
խավարի մեջ խորխափելով, հուրացած կրոնական մոլեռանդու-  
թյամբ, չհրած ճամնակարողիս բարկությունից սարսափահար,  
իրար առանձման սիրող գյուղական այդ յերկու չերիտասարդ-  
ները գոհում են իրենց սերը՝ «նրան»: Դա մեր ժողովրդի մաս-  
վոր պատմական անցյալի կյանքի մի ցայտուն ու կենդանի  
պատկեր է: Յերբ նրանք անհող էյին կրոնական հարցերում,  
մաքուր ու խորը սիրով սիրում էյին իրար, իսկ յերբ յինթարկ-  
վեցին կրոնական մոլեռանդությանը, նրանք սկսեցին հրաժար-  
վեցին իրենց սիրուց՝ մահացու հանցանք համարելով յիրեզր:  
Հրաժարվել սիրուց, նշանակում է հրաժարվել կյանքից, առանց  
սիրո կյանք չկա: Նախշունը մտածում է, թե յեթե հանցանք է  
ամուսնական սերը, ապա գուցե թույլատրելի յե իր յերկխոսյին  
սիրելը: «Վարդախրությունը հո մեղք չէ; կարծեմ» հարցնում է  
նա Մարկոսին: «Ի հարկե մեղք է...» (ԵՂ 93) պատասխանում է  
նախապաշարված ամուսինը: Նախշունը սարսափած բողոքաբան-  
չում է. «Վայ ինձ, յես մեղավոր եմ... ինչպես թողնեմ յերե-  
խաս, դավակա...»

— «Հայտն... Հինց այդ դժվարություն հաղթելն է սրբու-  
թյունը, յեթե հեշտ լիներ, այն ժամանակ ամենքն էլ սուրբ  
կլինեցին»,— նկատում է ամուսինը:

Ահա այդ համոզմունքով Մարկոսն անդառնալի կանգնում  
է կյանքից— սիրուց հրաժարվելու և ճգնավոր դառնալու վորոշ-  
ման վրա: Յեղ շատ տարիներ հետո՝ Մարկոսի դիակը գտնում  
են մի քարանձավի մեջ, ուր մեռել էր նա, վորպես աշխարհա-  
թող ճգնավոր:

Ահա այդպիսի վողբերգական վախճան է ունենում յերի-  
տասարդ ամուսինների կյանքը. սերը, ճամուսնական սուրբ և ան-  
մահական սերը, վոր նրանց յերջանկության աղբյուրն էր, կրո-  
նական մոլեռանդության պատճառով արտաքսվեց և, այգավառ-  
յեբրեմբի յերջանիկ ամուսիններին կյանքը խորտակվեց:

Հեղինակը պուզական այդ յերիտասարդ դուզի յեղբրական  
կյանքի պատկերումով ավել է սիրո յերջանկության և կրոնա-  
կան հավատի ցայտուն հակադրությունը: Աղայանն ինքը սիրո

պաշտամունքն ունի, ընդունում է սիրո մեծ սքեք, հզորություն-  
նը, բայց նա, վորպես պետրոս հեղինակ, չի կարող այլ կերպ  
պատկերել իրականությունը, քան պատկերել է: Նրա մոտ սերը  
չի հաղթում մահին, ընդհակառակը, նա պարտվում է կրոնական  
խավարամտության մղձավանջում, կրոնական հավատի, յեկեղե-  
ցու կոմպարային աղբեղության տակ: Այդ պատկերացման պատ-  
մական ճշմարտացիությունն էլ կազմում է Աղայանի այս վի-  
պակի արժեքը:

X  
Աղայանը շնորհալի փառալիր լինելուց բացի, վորպես դրող  
ավելի մեծ չափով բանաստեղծ է, իր նախորդների— ժամանա-  
կակիցների (Նալբանդյան, Պատկանյան, Ծահաղիկ, Մատուրյան)  
համեմատությամբ վոչ պակաս տաղանդավոր բանաստեղծ: Բայց  
ի տարրերություն իր ժամանակակիցների, նա գերազանցապես  
մանկական աշխարհի բանաստեղծ է, գրել է ամենից առաջ մա-  
նուկների համար, թեև անժխտելի յե, վոր նրա բանաստեղծա-  
կան յերկերը հետաքրքրությամբ կարդացել ու կարդում են նաև  
հասակավորները:

Ինչպես արդեն նշել ենք, Աղայանի զրական գործունեյու-  
թյունն սկսվեց բանաստեղծությամբ՝ «Հարկավոր է ողնել չքա-  
վորներին» վոտանավորով, վորի մասին իր տեղում խոսեցինք:  
Բայց այդ վոտանավորից հետո Աղայանը մոտ մի քսանամյակ  
այլևս վոտանավորներ չգրեց: Վոչ մի պարբերականում, 1862  
թվից մինչև 1881 թվից՝ չերեաց բանաստեղծ Աղայանը: Այդ  
ա՛րող ժամանակամիջոցում նա հանգես էր դալիս վորպես ար-  
ձուկագիր՝ դրան զուգահեռ ու մեծ յետանդով զբաղվելով նաև  
մանկավարժական բազմակողմանի աշխատանքով: Իր տեղում  
մենք հանդամանորեն ցույց կտանք, վոր 70-ական թվականնե-  
րը միտամամանակ Աղայանի մանկավարժական գործունեյության  
ամենարեղմնավոր շրջանն է, վորի ընթացքում մեծ ման-  
կավարժը տեսավ մանկական գրականության պակասը, ավելի  
ճիշտ նրա բացակայությունը և հանդեց նոր մանկական գրա-  
կանություն ստեղծելու անհրաժեշտությանը, վորպես ամենահիմ-  
նական միջոց՝ մանուկ սերնդի մտավոր-բարոյական կրթու-  
թյունը նոր ճիւղերի վրա դնելու համար:

Յեղ հենց Աղայանն էլ դարձավ մեր մանկական աշխարհի  
առաջին մեծ բանաստեղծը, մանուկներին ու պատանիներին

սիրելի հեղինակը՝ Հ. Թումանյանից առաջ և նրա հետ միամասնակ:

Բայց նախքան Աղայանի այս բնագավառում կատարած գործը քննութեան առնելը, համառոտակի կանգ առնենք Աղայանին անմիջապես նախորդող շրջանի մանկական բանաստեղծութեան վիճակի վրա:

Չի կարելի անտեսել, Վոր մինչև Աղայանը մեղմնում այս կամ այն չափով սկզբնավորվել էր մանկական բանաստեղծութունը, մանկական գրականութիւնը և այդ գերազանցաբար, ավելի ճիշտ՝ գրեթէ ամբողջովին՝ մայրենի լեզվի այբբենարաններում ու ընթերցարաններում, վերոնց թիվը տասնյակների յի հասնում Աբովյանի «Նախաշավիղից» սկսած մինչև Պատկանյանի ու Աղայանի կազմած դասագրքերը:

Այդ ամբողջ ժամանակաշրջանում, սակայն, մանկական բանաստեղծութեան դարգացման գործում Լ. Աղայանից առաջ ուշադրութեան արժանի դործ է կատարել Ռ. Պատկանյանը: Նրա մանկական բանաստեղծութունների յերկու ժողովածուները («Մանկական յերգեր»-ը՝ 1880 թ. և «Մանկական վտանգավորներ և յերգեր»-ը՝ 1881 թ.) շատ արժեքավոր նյութ են պարունակում մանուկների համար: Արժեքավոր են առանձնապես նրա բնութեան յերգերը՝ տարվա յիշանակների, ամիսների և կենդանական աշխարհի մասին: Բայց Պատկանյանի մանկական յերգերում ու վտանգավորներում բացարձակ ու ակնբախ կերպով ազգային-քաղաքական տենդենցն և գերիշխում: Ազգայնական ուժանակիցով բանաստեղծն<sup>1)</sup> իր քաղաքական գաղափարախոսութեամբ և մտել մանկական աշխարհը և նրա կետ նպատակն և մանուկ սերնդին ևս ազդուել նույն այն խնդիրներով, վերոնցով տարված էր ինքը՝ բանաստեղծը և ժամանակի ազգային հրատարակախոսութիւնը—մամուլը:

<sup>1)</sup> Այս բնութագիրը տալով Պատկանյանին, մենք չենք ժխտում նրա ստեղծագործութեան թի ստեղծարարի և թի արձակի տրոգրեստի պատմական արժեքը հայ նոր գրականութեան պատմութեան մեջ: Առանձնապես արժեքավոր է նրա յերգիծանքը—սատիրան՝ հայ ունեւոր դատակարգը, հոգեւորականութեան նկատմամբ, յերգիծանք, վարն իր քրիստիկ նշանակութեամբ հակադրում է իր իսկ հեղինակի տարբերակ հայացքներին, նրա սոցիալական բնութեանը և նպատակագրմանը:

Բացառութեամբ բնութեան թեմայով գրվածների, (որինակ, «Գարուն», «Կտունիներ», «Աշուն», «Մնձրե», «Արև», «Ծիծեռնակ», «Բագիկ-բագիկ», «Կատուն», «Գառնուկ»), Պատկանյանի մանկական բանաստեղծութունները տոգորված են գերազանցապես ազգայնական հրատարակախոսութեամբ ու կրօնականութեամբ (որինակ, «Որորոցի յերգ», «Ճար», «Ձատիկ», «Վանիչկա», «Արտուա» և այլն), ինչպես և բուրժուական բարեգործութեան վողով:

Ու Աբովյանից սկսած մինչև Ռ. Պատկանյանի ստեղծագործութիւնը ներառյալ, հայ մանկական գրականութիւնը մինչև Աղայանի այդ բնագավառում հանդես գալը՝ ապրել և նախապատրաստական շրջան: Յեւ միայն Աղայանն է, վոր լայն ճանապարհ և բաց անում մանկական գրականութեան համար, գառնալով հայ ազգային համաժողովրդական բանաստեղծը, վորի յերկերով կրթվել ու դաստիարակվել են բազմաթիվ սերունդներ:

Աղայանի գերն այս բնագավառում այնքան մեծ է, վոր ժամանակակիցների աչքում նա իր բազմակողմանի գործունեւթեան մեջ յերեացել և վորպես մանկական աշխարհի գրող: Վորպես այդպիսին՝ և նա գնահատվել նաև ժամանակի ուշաական գրականագիտութեան կողմից:

Յուրի վեպերովսկին՝ Աղայանի համարում «Կենսագրական ակնարկում»<sup>1)</sup>, հենց այդ կողմից էլ գնահատում և նրան: «Հայ գրողների շարքում,—գրում և վեպերովսկին,—բոլորովին յուրահատուկ տեղ և գրավում Դադարոս Աղայանը... զա վոչ տենդենցիով բելլեարիստ է, վոչ սատիրիկ, վոչ պատմական վեպերի հեղինակ. նա իրա համար ընտրել է բոլորովին հատուկ բնագավառ,—հեթիաթիւների և յեղենգների բնագավառը,—զա գրող է գերազանցապես մանուկների համար»:

Վեպերովսկու մոտ անտեսված է Աղայանի ստեղծած մանկական գրականութեան մի շատ կարեւոր բաժինը՝ մանկական բանաստեղծութիւնը: Յեւ յեթէ այդ էլ նկատի ունենանք, ապա իրոք ճիշտ է, վոր Աղայանը մեծատաղանդ «գրող է գերազանցապես մանուկների համար»:

Աղայանի մեծութիւնը, սակայն, ի տարբերութիւն այլ

<sup>1)</sup> Армянские беллетристы, под ред. Юр. Веселовского и Мин. Берберяна: 1893 г. стр. 473.

մանկական գրողները, այն է, վոր նա հանդես յեկավ վոչ միայն վարպետ շնորհալի մանկական գրող, այլև այն, վոր նա միաժամ մանուկ մանկական աշխարհի, մանուկ սերնդի համար անհրաժեշտ գրականութուն ստեղծող շարժման կազմակերպիչն ու ներշնչողը յեղած: 1882 թվին լույս տեսավ նրա մանկական բանաստեղծութունների ու փոքրիկ պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Սերինգ հովվական» վերնաշրջով, նույն թվից «Վարժարան» մանկավարժական գրական ամսագրի մանկական բաժնում սկսվեցին ապագրվիչ նրա մանկական ստեղծագործությունները (նույն ամսագրում ապագրվում էին Աղայանի մանկավարժական հոդվածներն էլ):

Ժամանակակից մամուլում, առաջին հերթին մանկավարժական մամուլում Աղայանը բարձր դնանատեղանի արժանացավ վարպետ մանկական բանաստեղծի: Աղայանի հետագա արևինների անհաշտ հակառակորդներից մեկը՝ Սեդրակյան Մանդինյանը՝ 1882 թվին իր մի հոդվածում նշեց, վոր «Սերինգ հովվական»-ի շատ գործերում «Աղայանի կատարյալ հանճարն է յերևում»<sup>1)</sup>:

Բայց Աղայանը չբավականանալով միայն իր ստեղծագործությունք, նա մանկական գրականության դարձագծան համար լայն ուղի հարթեց, վճառական դեր խաղալով մանկական-դասանեկական մամուլի կազմակերպման գործում:

1883 թվից սկսվեց «Աղբյուր» մանկական ամսագրի հրատարակությունը, վորի գլխավոր ձեռնարկողն ու յերկար ժամանակ նրա փաստական խմբագիրն ու ղեկավորն էր Ղ. Աղայանը, վորը և հանդիսանում էր «Աղբյուր»-ի գոյություն ու հմայքի հիմնական սղրյուրը: Ասանց Աղայանի ահալի ու անմխիտական աշխատակցություն, թե վարպետ հեղինակ է թե վորպես խմբագրիչ ու խորհրդատու՝ «Աղբյուր»-ը այն դերն ու նշանակությունը չէր սեռենա մեր գրականության մեջ, ինչ վոր սենեցավ: «Աղբյուր»-ի աշխատանքային խմբագրի—Տիգրան Նազարյանի իսկ վկայությունը՝ «Աղբյուրի» ակները վարար պահողը Աղայանըն էր»<sup>2)</sup>:

<sup>1)</sup> Ս. Մանդինյան—Շնորհալի մանկական ընթերցանության գրքեր, «Վարժարան», 1882 թ. № 1-2, էջ՝ 82:

<sup>2)</sup> Տ. Նազարյանի հոդվածը Աղայանի մահվան առթիվ: «Տարազ», 1911 թ. № 5-6:

Մի այլ ժամանակակից մանկավարժ գրականագետ Յերվ, Ղազարյանն իր մի հոդվածում շատ խիստ քննադատում է Աղայանին, բայց միաժամանակ նշում է, վոր «ներկայումս (գրված է 1890 թվի մարտին—Ա. Ա.) «Աղբյուրը» լիովին մշակվում է կառավարվում է պ. Աղայանցով, և մեր հարգելի մանկավարժը մեծ դեր է կատարում ամսագրի ընդհանուր ուղղության և բնավարություն մեջ: «Աղբյուրը» սահվում է Աղայանցով»,—գրում է Ղազարյանը<sup>1)</sup>:

Յեկ իրոք, «Աղբյուր»-ի հենց առաջին համարից Աղայանը հանդես է գալիս վորպես այս առաջին մանկական ամսագրի գլխավոր աշխատակիցը: Նրա վասանավորներով, հեքիաթներով, մանկական զվարճալիքներով (հանելուկ, խաղեր և այլն) ու հոդվածներով հաճախ լին էն «Աղբյուր»-ի բազմաթիվ համարները:

80—90-ական թվականներին Ղ. Աղայանը հայ իրականություն մեջ մանկական աշխարհի ամենապրեկի հեղինակն էր և մնաց աչգողիսին: Թումանյանը նրա փառքը չխլեց, այլ ինքն էլ մանկական աշխարհի սիրելի բանաստեղծը դարձավ՝ անցնելով Աղայանի հարթած ճանապարհով:

90-ական թվականների սկզբին վերաբերող մի ուսումնասիրություն ցույց է տալիս, վոր Աղայանը մանկական-դասանեկական հասակի ընթերցող հասարակության համար միակ շատ կարգացվող հայ գրողն էր՝ յեկրոպական մի քանի մեծահամբավ գրողների շարքում: «Մանկական-դասանեկական գրքերից... ալիկի կարգացվում են Հոֆմանի, Շմիտզի, Ալպյանի, Վոչեխիչի, Ժյուլ-Վեոնի, Անդերսենի, Ալենարիուսի, Բեչեր Ստուրի, Ամիլիոի և Ալֆոնս Դոդեյի գրվածքները», —ասված է «Մուրճ»-ի մի հոդվածում<sup>2)</sup>:

Այժմ տեսնենք, թե ինչ է ավել Աղայանը, վորպես բանաստեղծ է այն «գլխավորապես մանուկների համար»:

Շատ կարեւոր է ուշադրավ փաստ է այն, վոր Աղայանի բանաստեղծական մուսան ծնվիլ է իրական-կոնկրետ մանկական աշխարհում: «Ղաբաբաղից վերագարձա թիֆլիս այնպես ջարդ»

<sup>1)</sup> «Մուրճ», 1890 թ. № 3, էջ՝ 417, 422:

<sup>2)</sup> Լ. Մարգարյան—Սեփանդին գրողարանից, «Մուրճ», 1892 թ., № 2, էջ՝ 317:

ված ու հողնած, վար մտածեցի խաղառ հեռանալ ուսուցչական ասպարեզից և քաշվել գյուղ: Բայց բանն այնպես յեղավ, վոր յես փոխանակ մի մութ գյուղ ընկնելու, ընկա մի բանաստեղծական աշխարհ, մի յերկնային դրախտ, ուր ինձ փայփայում էյին անմեղ հրեշտակները և զլուխ զարդարում անխառն ծաղիկներով: Այդ յերանելայց աշխարհը տիկին Սոփիա Բաբայանցի մանկական դրախտն էր»—մանկական պարտեզը—գրել և Աղայանն իր «Իմ կյանքի զլխավոր դեպքերը» աշխատութեան մեջ (Եջ 165):

Աղայանը Սոփիա Բաբայանի մանկապարտիզում աշխատեց ամի գլորոցական տարի»—ինչպես գրել և ինքը (Եջ 166), բայց այդ կարճ ժամանակամիջոցը դարձավ հայ մանկական գեղարվեստական գրականության զարգացման հաստատուն սկիզբը:

Աղայանն ընդունում էր, վոր ինքը վորպես մանկական պրոդ՝ պարտական և Սոփիա Բաբայանի մանկապարտեզին:

Ահա թե ինչու նա իր մանկական ստեղծագործութեաններէ անաչին գրքույկը՝ «Արինգ հովվականը», «խորին հարգանքով նվիրում և հայազգի ծագկափթիթ մանուկների անդրանիկ պարտեզականունը՝ տիկին Սոփիա Բաբայանին», վորի մասին Աղայանն իր ինքնակենսագրականում մեծ հիացմունքով ու յերախտագիտական զգացմունքով և արտահայտվում<sup>1)</sup>:

Աղայանը հրավիրված էր Սոփիա Բաբայանի մանկապարտեզը՝ «ազգային-ժողովրդական տարր մայնելու» այնտեղ, ինչպես արտահայտվել և պարտեզականունը ամուսինը՝ քծիշկ-մանկավարժ Ավետիք Բաբայանը՝ Աղայանի հետ այդ մասին խոսելիս<sup>2)</sup>:

Աղայանի բանաստեղծութեանները լիովին հասկանալի ու գրավիչ են մանուկների համար,—այդ վոչ միայն շնորհիվ իր բանաստեղծի կարելիութեաններով լի առդանդի, այլև շնորհիվ այն բանի, վոր մինչև տպագրութեան հանձնելը, Աղայանի բանաստեղծութեանների «խմբադիրները», «քննադատները» և ընթերցողները յեղել են մանուկները: Սոփիա Բաբայանի մանկապարտեզն Աղայանի համար հանդիսացել է թե՛ վորպես ստեղծ

ծագործական ներշնչարան և թե՛ միաժամանակ վորպես բանաստեղծական ուսումնասիրութեան մի դպրոց: Աղայանը մեկ տարի գրագիտութեան սովորեցնելով մանկապարտեզի յերեխաներին, միաժամանակ ուսումնասիրել և նրանց պարապմունքները—խաղերը, նրանց հետաքրքրութեան ու հոգեկան-մտավոր աշխարհը, սովորելով նրանցից, թե ինչի մասին պետք է գրել և վոր կարևորն է—ինչպես գրել մանուկների համար:

Յեւ Աղայանի մեծութեանն էլ վորպես բանաստեղծի այն է, վոր նա կորոգանում էր մանկանալ, հասնելով վոչ միայն գլորոցական հասակի մանուկներին, այլև նախադպրոցական հասակի մանկիկներին հետաքրքրութեան ու մտավոր կարողութեան մտկարգակին, մտութեամբ միացնելով իր մանկանալու կարողութեանը ստեղծագործական վառ յերեակայութեան ու բանաստեղծական վարպետութեան հետ:

Նրա մանկական բանաստեղծութեաններին վոչ միայն թե՛ մասիկան—նյութը, այլև արտահայտչական ձևերը հետաքրքրական են ու գրավիչ մանուկների համար:

Գյուղական բնութեանը և գյուղական կյանքն ու աշխատանքը, գեղջուկի և գեղջուհու հոգսերն ու վիշտը, նաև ժողովրդական գրույցներն ու սովանդութեանները,—ահա հիմնականում այս է Աղայանի բանաստեղծական ստեղծագործութեան նյութն ու բովանդակութեանը:

Այս բնագավառում Աղայանը հանդիս է գալիս իր կրթական-գաստիարակչական և բանաստեղծական-ստեղծագործական կարողութեաններին ներգաշնակ միասնութեամբ: Նրա բանաստեղծական յերկերը մանուկներին զեղարվեստական հաճույք պատճառելով, նրանց համար միաժամանակ իմացական-կրթական (աշխարհը, բնութեանը, կյանքը ճանաչել սովորեցնելու իմաստով) և բարոյական-գաստիարակչական նշանակութեան ունեն:

Աղայանը մանուկ ընթերցողներին գրավիչ պատկերներով հագորդակից է դարձնում հայրենի բնական աշխարհին և ժողովրդի անտեսական կյանքին ու աշխատանքին: Թաշուհների ու կենդանիների և քնդանրապես բնական միջավայրի կյանքի պատկերներով լի յեն՝ մանուկներին համար գրված նրա յերկերը: Բայց այդ պատկերներն ինքնանպատակ չեն, նա մանուկ

1) «Իմ կյանքի զլխավոր դեպքերը», Եջ՝ 137 և 165—166:

2) Նույն տեղ, Եջ՝ 165:

ընթերցողի հուզական ու մտավոր աշխարհը պատրաստում է աշխատանքի և սոցիալական կյանքի համար: Որինակ՝ «Ծիտը և Բաղեն» վոտանավորը, վորով սկսվում է «Մրինգը», սոսկ բնական միջավայրից վերցրած մի պատկեր չէ: Բանաստեղծը պատկերում է, թե ինչպես փոքրիկ, անպաշտպան «ծիտը ծլլում է ծառին», յերգում է իր կյանքի ուրախ յերգը, բայց անհ նրա «լլխին պտտվում է բաղեն»՝ խեղճ ծխիկի թշնամին, մահ սպառնալով նրան. բաղեյից սպասվող վտանգից, անից «ծիտը լոնց, ծիտն վախեց»: Նա այլևս չի կարող յերգել իր ուրախ «ծիվ-ծիվ»-ը: Բայց անհ մանուկը մոտեցավ՝ «թը՛ռռ» անելով փախցրեց բաղեյին, վորպեսզի նա չվսասի ծիտիկին, և «բաղեն թռավ, բաղեն փախավ» մանկան ոգնությամբ, «ինչ լավ յեղավ» վոր ծիվ-ծիվ յերգող ծիտիկը «պրծավ չար բաղեյի սուր ճանկերից»:

Աղատելով ծխիկին մահվան վտանգից, ոգնելով նրան, վոր նա նորից ազատ յերգի իր անուշ «ծիվ-ծիվ»-ը, մանուկն ուրախանում է, հաղթական ծիծաղում է՝ «հա՛ հա՛ հա՛»: Չի վոր իր ժամանակի սոցիալական-քաղաքական կյանքի հարաբերությունները հենց այդպես էյին: Աղայանի մայր ժողովուրդը յենթակա յեր գիշատիչ «չար բաղեյի» իշխանությանը և տառապում եր նրա «սուր ճանկերից»:

Համարյա նույն գաղափարն է դրված նաև «Մանուշակ» վոտանավորում, վորով վերջանում է «Մրինգը»:

Մանուկները դիմում են մանուշակին և հարցնում.

«Միրուն մանուշակ, ինչ՞ու յես թումեի,  
կապույտ աչիկներդ ինչ՞ու յես փակել  
Բեզ ո՞վ նեղացրեց, ո՞վ վատ բան ասեց,  
Բո անուշ հոտովդ ո՞վ չի զմայլվեց»:

Իսկ մանուշակը տխրությամբ պատասխանում է իրեն սիրող մանուկներին.

«Միրուն մանուկներ, դուք ինձ սիրեցիք,  
Իմ ծաղիկներից փնջեր կապեցիք.  
Բայց կռտ մեռնեից, կուպիտ մանկերից,  
Ինձ չազատեցիք, չպահպանեցիք:  
«Քնքուշ սրտերը շուտ են կտրվում,

Քնքուշ ծաղիկները շուտով թառամում:  
Քանի վոր անխիզ մարդիկ կլլինեն,  
Յերկար չեմ ապրիլ յես այս աշխարհում»:

Մանուկները խոսում են նաև «կարմիր արևի» հետ («Արև» վոտանավորը), նրանք ուզում են, վոր «սև սև ամպերը հեռանան» և «արևին ճամպա» տան. մանուկները «կարմիր արևին», նրա «լույսին են կարոտ»: Մանուկների ցանկությունը կատարվում է. «արևը հաղթեց ամպերին, շողքը ձրգեց սարերին»:

Աղայանի բանաստեղծություններում կա ժողովրդի վիշտը, նրա ճնշված ու իրավազուրկ վիճակը, բայց կա և պայքարը ազատության համար, կա նաև ազատագրման ուղիների համառվորոնում:

Բանաստեղծություններից առանձնապես «Ճախարակ»-ը, «Սերմնացանը», «Հիշողություն»-ը և այլն ցայտուն կերպով արտահայտում են հայ աշխատավորների վիշտը, տնտեսական թրջված վիճակը, ծանր կարիքը, շահագործողների լուծը:

Ահա «Ճախարակ»-ը, մի բանաստեղծություն, վորը ժողովրդական նույնանուն յերկի մշակումն է, վորը նախախորհրդային շրջանի աշխատավոր գեղջկուհու կիսաքաղց ու կիսամերկ կյանքի ռեալիստական պատկերն է տալիս.

«Մանիր, մանիր իմ ճախարակ,  
Մանիր սպիտակ մալանչներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Վոր յես հոգամ իմ ցավեր:  
...Տիգրանիկս դուրպա չունի,  
Հանդ է գնում վոտաբաց,  
Գաբրելիկս չուխա չունի  
Միշտ անում է սուգ ու լաց:  
...Զվալ չունենք, չաթու չունենք,  
Վոչ սամոտեն, վոչ պարան,  
Այսպես աղքատ դեռ յեղած չենք  
Կտրվել և ամեն բան:  
Դեռ հարս էյլ վոր գործեցի,  
Քանի կարպես, խալիչա:

Բայց դրանցից շուտ գրկվեցի,  
Հիմա հունեմ մի քեզա,  
Պարտատիրոջ սիրտն ել սեպով,  
Յեկավ տարավ ամեն ինչ<sup>1)</sup>:

Ահա և «Սերմնացան» բանաստեղծությունը. այստեղ ցայտուն պատկերներով արված և հարքաշ գյուղացու թշվառ, անպանական վիճակը, նրա կանխածությունը դժման բնությունից, կույր տարերքից, վորի դեմ նա անգոր է, չի կարող պայքարել և հույսը միայն ասածու վրա չե դրել: Բայց միայն բնության տարերքը չէ, վոր սարսափեցնում և սերմնացանին: Թռչուններից, մկներից, յերաշտից ու կարկուտից հետո, սերմնացանի աչքի առաջ յերևում և գիշտախնների մի ամբողջ վաճակ, վոր անխնա լսվում և նրա հնչին փաստակը՝ մշտական կարիքի ու ցավի մեջ թողնելով նրան «մի տուն լիքը մանուկներով»: Սերմնացանի բերքից «բոլորեքյանք առատ բաժին» են ստանում՝ տերտերը, վաճառն ու վանականները, վանքի գործակալները և այլն, այդ ամենի հետ սարսափելի յե մանավանդ պարտքատերը, վորը գյուղացուն խեղդում և պարսքով:

«Ել ինչ ասեմ, աստված, ինքդ լավ գիտես,  
Թե ինչ պարտքի, պատուհասի մեջ եմ յես.  
Գողավողակ մի կողմից են կողպառում,  
Պարաքտտերը մյուս կողմից և ինձ խեղդում:  
Դրանց ձեռքից, յեթե մի բան և մնում,  
Այն ել գայլի կամ ցավի չե գոհ գա՞նում,  
Մի տուն լիքը յերեխե՞ն մերկ, քաղցած,  
Տարին առատ, բայց յես չունեմ կորեկ հաց<sup>2)</sup>:

Այս վտանավորի հենց միայն վերջին տողումն ել ասված և ամեն ինչ՝ նախախորհրդային շրջանի աշխատավոր գյուղացու տնտեսական վիճակի մասին: Տարին կարող եր առատ լինել, բերքը շատ, վորչ յերկրում անասնման հարստությունն, առատությունն, բայց այդ բոլորից դուրկ եր միայն աշխատավորը, մասնավորապես նա, վորի ճակատ քրտինքով եր տարին առատ

<sup>1)</sup> «Սրինդ հովվական», 1882 թ., էջ՝ 10-11:

<sup>2)</sup> Նույն տեղ, էջ՝ 13:

լինում, բերքը՝ շատ: Բայց հենց նա յե՛լ հողի մշակը՝ իր ստացած բերքից առատ բաժին տալով յերկրի տերերին, ինքը մնում եր դատարկաձեռն՝ «մի տուն լիքը յերեխեքով — մերկ, ու քաղցած» առանց նույնիսկ «կորեկ հացի»:

«Սրինդ հովվական»-ից ութ տարի անց՝ 1890 թվին «մի խումբ համահիշերի»՝ ոճանդակությամբ հրատարակվեց Աղայանի «Բանաստեղծություններ» սովար ժողովածուն, վորն անկասկած նշանակալից գիրք եր հայկական պոեզիայի զարգացման այդ շրջանում: Այս գրքում, բացի «Սրինդ»-ից արված մի շարք բանաստեղծություններից, կան նաև 80-ական թվականներին՝ «Սրինդ»-ից հետո գրված բազմաթիվ նոր գործեր թե ինքնուրույն, թե թարգմանական (թարգմանականներից՝ «Փրիդիոֆ դյուցազն», Հախնյի «Փիրդուսի»-ն և այլն): Ինքնուրույն բանաստեղծական գործերից այս ժողովածվում ուշագրավ են «Զմեռ»-ը, «Լուսնահաչ»-ը, «Հիշողություն»-ը, «Մանկական թոթովանք»-ը, «Սերմնացան»-ը, «Յախավլի գաղտնիքը» (ժող. հին գրույց) և, վերջապես, «Տուրք-Մնգեղ» դյուցազնապոեմը:

«Բանաստեղծություններ» ժողովածվում ավելի յե խորացել հեղինակի դեմոկրատիզմը: Աղայանի դեմքն այստեղ ավելի յե պայծառացել իբրև խորապես ժողովրդական բանաստեղծի՝ միանգամայն ինքնուրույն տեղ գրավելով մեր պոեզիայի զարգացման ուլյալ ետապում:

Համառոտակի կանգ առնենք Աղայանի այս ժողովածուի մի քանի ստեղծագործությունների վրա: Ահա, որինակ, «Զմեռ» վերնագիրն ունեցող բանաստեղծությունը, վորն «Աղբյուր»-ում տպագրվել և 1884 թվին՝ «Մառնամանիք» վերնագրով: Այդ բանաստեղծությունը մեղ հիշեցնում և Աղայանին ժամանակակից ուսու մեծ հեղափոխական-դեմոկրատ բանաստեղծ Նեկրասովի յերկու հայտնի ստեղծագործությունները՝ «Мороз красный нос» և «О погоде» վերնագրով, ստեղծագործություններ, վորոնք (գրված 1863 և 1865 թ.թ.) ուղղված են ցարիզի դեմ, այն ժամանակվա հասարակական կյանքի այդ դժման սառնամանիքի դեմ, վորի օտիրապետությունը փորձում եր վոչնչացնել այն ամենը, ինչ առաջադիմական եր, ինչ վոր նպաստում եր ժողովրդի ազատության գործին: Անկասկած և, վոր Աղայանն իր «Զմեռ» («Մառնամանիք») բանաստեղծության պատկերի ստեղ-

Բայց դրանցից շուտ զբեկեցի,  
Հիմա չունեմ մի քեզա,  
Պարտատիրոջ սիրտն ել սեցավ,  
Յեկավ տարավ ամեն ինչ»<sup>1)</sup>:

Ահա և «Սերմնացան» բանաստեղծությունը. այստեղ ցայտուն պատկերներով արված և չարքաշ գյուղացու թշվառ, անուղնական վիճակը, նրա կենթաձուլությունը դաժան բնությունից, կույր տարերքից, վորի դեմ նա անգոր է, չի կարող պայքարել և հույսը միայն սատու վրա չէ դրել: Բայց միայն բնության տարերքը չէ, վոր սարսափեցնում և սերմնացանին: Թռչուններից, մկներից, յերաշտից ու կարկուտից հետո, սերմնացանի աչքի առաջ յերևում և գիշատիչների մի ամբողջ վնճակ, վոր անխնա լսվում և նրա չնչին փոստակը՝ մշտական կարիքի ու ցավի մեջ թողնելով նրան «մի տուն լիքը մանուկներով»: Սերմնացանի բերքից «բոլորեքյանք սոսառ բաժին» են ստանում տերակերը, վաճառն ու վանականները, վանքի գործակալները և այլն, այդ ամենի հետ սարսափելի չէ մանավանդ պարտքատերը, վորը գյուղացուն խեղդում և պարսքով.

«Ել ինչ ասեմ, աստված, ինքը լավ գիտես,  
Թե ինչ պարտքի, պատուհասի մեջ եմ յես,  
Դողավողակ մի կողմից են կողոպտում,  
Պարաքատերը մյուս կողմից և ինձ խեղդում:  
Դրանց ձեռքից, յեթե մի բան է մնում,  
Այն ել գայլի կամ ցավի չէ գո՞ւ գաճում,  
Մի տուն լիքը յերեխեխ մեքի, քաղցած,  
Տարին առատ, բայց յես չունեմ կորեկ հաց»<sup>2)</sup>:

Այս վտանավորը հենց միայն վերջին տողումն ել ասված և ամեն ինչ՝ նախախորհրդային շրջանի աշխատավոր գյուղացու տնտեսական վիճակի մասին: Տարին կարող եր առատ լինել, բերքը շատ, վորջ յերկրում անասնման հարստություն, առատություն, բայց այդ բոլորից գուրկ եր միայն աշխատավորը, մանավորապես նա, վորի ճակտի քրտինքով եր տարին առատ

<sup>1)</sup> «Մրինգ հովվական», 1882 թ., էջ՝ 10-11:

<sup>2)</sup> Նույն տեղ, էջ՝ 13:

լինում, բերքը՝ շատ: Բայց հենց նա յեղ՝ հողի մշակը՝ իր ստացած բերքից առատ բաժին տալով յերկրի սերերին, ինքը մնում եր դատարկաձեռն՝ «մի տուն լիքը յերեխեքով — մեքի, ու քաղցած» առանց նույնիսկ «կորեկ հացի»:

«Մրինգ հովվական»-ից ութ տարի անց՝ 1890 թվին «մի խումբ համալիրների» ոժանդակությամբ հրատարակվեց Աղայանի «Բանաստեղծություններ» սովոր ժողովածուն, վորն անկասկած նշանակալից գիրք եր հայկական պոեզիայի զարգացման այդ շրջանում: Այս գրքում, բացի «Մրինգ»-ից արված մի շարք բանաստեղծություններից, կան նաև 80-ական թվականներին՝ «Մրինգ»-ից հետո գրված բազմաթիվ նոր գործեր թե ինքնուրույն, թե թարգմանական (թարգմանականներից՝ «Փրիզիֆ դյուցազն», Հայնեյի «Փիրզուսի»-ն և այլն): Ինքնուրույն բանաստեղծական գործերից այս ժողովածվում ուշագրավ են «Զմեռ»-ը, «Լուսնահաշ»-ը, «Հիշողություն»-ը, «Մանկական թո՛թովանք»-ը, «Սերմնացան»-ը, «Յախավիլի գաղտնիքը» (ժող. հին դրույց) և, վերջապես, «Տուրք-Անգեղ» գյուցազնապոեմը:

«Բանաստեղծություններ» ժողովածվում ավելի չէ խորացել հեղինակի դեմոկրատիզմը: Աղայանի դեմքն այստեղ ավելի չէ պայծառացել իբրև խորապես ժողովրդական բանաստեղծի՝ միանգամայն ինքնուրույն տեղ գրավելով մեր պոեզիայի զարգացման ավյալ ետապում:

Համառոտակի կանգ առնենք Աղայանի այս ժողովածուի մի քանի ստեղծագործությունների վրա: Ահա, որինակ, «Զմեռ» վերնագիրն ունեցող բանաստեղծությունը, վորն «Աղբյուր»-ում տպագրվել և 1884 թվին՝ «Սառնամանիք» վերնագրով: Այդ բանաստեղծությունը մեկ հիշեցնում և Աղայանին ժամանակակից ուսումնական հեղափոխական-դեմոկրատ բանաստեղծ Նեկրասովի յերկու հայանի ստեղծագործությունները՝ «Мороз красный нос» և «О погоде» վերնագրով, ստեղծագործություններ, վորոնք (գրված 1863 և 1865 թ.թ.) ուղղված են ցարիզմի դեմ, այն ժամանակվա հառարակական կյանքի այդ դաժան սառնամանիքի դեմ, վորի օտարապետությունը փորձում եր վոչնչացնել այն ամենը, ինչ առաջադիմական եր, ինչ վոր նպատում եր ժողովրդի ազատություն գործին: Անկասկած և, վոր Աղայանն իր «Զմեռ» («Սառնամանիք») բանաստեղծության պատկերի ստեղ-

ծաղործական իրենան ընդորինակել և նեկրատովից: Այն, ինչ վոր  
ասել և ուսս մեծ հեղափոխական-դեմոկրատ բանաստեղծ Նեկ-  
րատովը 1863—1865 թվերին, այդ նույնը գրեթե կրկնել և հայ  
դեմոկրատ գրողը՝ 20 տարի հետո՝ 1884 թվին:

Ուշագիր ընթերցողի համար ակնբախ և, վոր Աղայանն իր  
այս վտտանալորում թեև յերեխաներին և դիմում, և վոչ ժողովըր-  
դին, բայց ակնհայտ և, վոր «Չմեռ» կամ «Մտանամանիք» պատ-  
կերով նա ներկայացնում և տիրապետող ցարական վոստիկանա-  
կան այլանդակ ու դաժան ուժիմը, վորը կրկնակի չափով ծանր  
էր նրան յենթակա վոչ-ուսս ժողովուրդների համար:

«Չմեռը—Մտանամանիքը» դա ցարական նողկալի պետու-  
թյունն էր, վոր՝

«... Ուր վոսք և դնում  
Առանց խղճալու մահ և տարածում,  
Յերեսին առած սպիտակ դիմակ  
Մեղանից ծածկում և սեղեմքն այլանդակ»:

Աղայանն ակնարկում և ցարական պետութեան պաղութա-  
յին դաժան տիրապետութեան հաստատման հետևանքներն Ան-  
գրկովկասում.

«Շատ ժամանակ չե, ինչ վոր նո յեկալ,  
Յեկ դուք լալ տեսաք, թե ինչեր արալ.  
Դրա յերկյուղից ջուրը քար կտրեց,  
Քչքչան առուն լեց, պապանձվեց...  
... Բուք-բորան արալ, բոլորին խեղդեց,  
Միրուն վարդենու թուփը չորացրեց,  
Սոխակի լիզուն տակիցը կտրեց»:

Իր իսկական քաղաքական մտքերը ցարական գրաքննա-  
կան շնեքից ապահով դարձնելու համար, Աղայանը ձմեռվա շատ  
հաջող պատկերն և ընտրել և մանուկների հետ ունեցած զրույցի  
բնույթ և ավել՝ ցարական այդ շներին մոլորեցնելու համար

«Ցուրտ և, սաստիկ ցուրտ, օիրուն յերեխեք,  
Յեթե ինձ նման դուք ել մասում եք,  
Յեկեք միասին մի հնար պանենք»:

Չմռան ճանկերից մեր գլուխն ազատենք:  
... Յեթե կամենաք խելք խելքի կտանք,  
Յեկ ինչից ասես կրակ կտանանք,  
Կրակ լուսատու, պայծառ անասվեր,  
Վոր աաքացնի սառցեղին սրտեր,  
Վոր կենդանացնի դոսացած ձեռքեր,  
Վոր հալեցնի սառցապատ լեռներ.  
Որինակ, սուսենք մեզ կիզ-ապակին,  
Յեկ մենք կհասնենք մեր նպատակին»<sup>1)</sup>:

Հակացարական տրամադրությունները մի ցայտուն արտա-  
հայտություն և նաև «Հիշողություն» գեղեցիկ և հուզիչ բանաս-  
տեղծությունը՝ գրված 1886 թվին:

Իս մի ալեգորիա չե, վոր պատկերում և ցարական կառա-  
վարութեան հայանալած սենարյուրակային քաղաքականությունը:  
«Հիշողություն»-ը հիշեցնում և ցարական կառավարութեան ար-  
շավանքը հայկական դպրոցների վրա՝ 1884—1885 թվերին, չերը  
կառավարութեան հրամանով փակվեցին հայկական դպրոցները  
և մեկ տարի հետո միայն վերաբացվեցին: Դպրոցների փակման  
որերին վոստիկանական ցենզուրայի պայմաններում անհնար  
էր մամուլում ցարիվմի այդ վայրադ քաղաքականութեան դեմ  
վորեն կերպ արտահայտվել: Յեկ անա մեկ տարի հետո միայն,  
ժողովրդական բանաստեղծը չմտանալով այդ մեծ աղետը, վեր-  
հիշում և այն՝ ծիծեռնակի ավերված բնի վերաշինման պատկե-  
րի միջոցով:

«Ծիծեռնակը բուն էր շինում,  
Յեկ շինում էր, և յերգում.  
Ամեն մի շյուղ կպցնելիս  
Առաջվան բունն էր հիշում:  
Մեկ անգամ էր նա բուն շինել,  
Յեկ շատ անգամ կարկասել,  
Բայց այս անգամ վերադարձին,  
Թունն ավերակ էր գտել:  
Այժմ նորից բուն և շինում,  
Յեկ շինում է, և յերգում»:

<sup>1)</sup> Դ. Աղայան—Բանաստեղծութուններ, 1890 թ., էջ՝ 10:

Ամեն մի շյուզ կպցնելիս  
Առաջվան բունն և հիշում:  
Նա հիշում և անցած տարին  
Իր սնուցած ձագերին,  
Վորոնց ձամպին հափշտակեց  
Արյունարբու թշնամին:  
Բայց նա կրկին բուն և շինում,  
Յեվ շինում է, և՛ յերգում,  
Ամեն մի շյուզ կպցնելիս  
Առաջվան բունն և հիշում<sup>1)</sup>:

Ծիծեռնակը՝ հայ ժողովուրդն և, վորը «մեկ անգամ եր բուն շինել», բայց «շատ անգամ կարկատել»՝ ցարիզմի ազգահալած քաղաքականության հասցրած աղետներից հետո: Ծիծեռնակը «հիշում և անցած տարին» այն, այսինքն՝ 1885 թիվը, յերբ տեղի յեր ունեցել համաժողովրդական աղետը, յերբ «արյունարբու թշնամին» քանդել եր իր շինած և «բազմիցս կարկատած» բունը՝ «հափշտակելով իր սնուցած ձագերին»: Յեվ, այնուամենայնիվ, չնայած այդ բոլոր աղետներին, ծիծեռնակը «կրկին բուն և շինում» յերգելով, «ամեն մի շյուզ կպցնելիս» «առաջվան բունն հիշելով»: Տաղանդավոր բանաստեղծի այս վտանգավորում ժողովրդի և՛ ազգային վիշտը, և՛ օպտիմիզմն և արտահայտված՝ հիանալի բանաստեղծական պատկերավորությամբ:

«Հիշողություն»-ը թեև մեղմ լիրիկական բանաստեղծություն է, բայց նրա մեղմության մեջ ազգային-ժողովրդական վշտի վառողը հեշտությամբ բունկվում է «Զմեռ», նույնպես ալեգորիկ, բանաստեղծության մեջ ակնարկված «կիզ-ապակու» կրակի կայծից:

Աղայանի բանաստեղծություններից առանձնապես «Ճախարակն» ու «Սերմնացանը» վկայում են այն մասին, վոր Աղայանն ինչպես արձակում, նույնը և բանաստեղծական դործերում բարձր է հնչեցրել քաղաքացիական-սոցիալական մտախիզ: Հետևաբար այդ տեսակետից նա նախորդել է Հովհ. Հովհաննիսյանին («Գյուզի ժամը» և այլն), Ալ. Մատուռյանին («Սերմնացան», «Շերկրի մշակներ» և այլն), Հովհ. Թումանյանին («Գուլթանի յերգը»:

<sup>1)</sup> Առաջին անգամ տպված է «Աղբյուր»-ի 1886 թ. Ա. 12-րդ համարում:

«Հառաչանք» և այլն), Խոսհակյանին («Ախ մեր սիրտը...» և այլն), վորոնց մոտ աշխատավոր գյուղացիության, ժողովրդի սոցիալական վշտի մտախիզ ըստ էության նորությունն չէ Աղայանի համեմատությամբ, այլ միայն տրված է բանաստեղծական համեմատությամբ ավելի բարձր արվեստով (առանձնապես Թումանյանի և Խոսհակյանի մոտ):

Աղայանի բանաստեղծական տաղանդն իր բարձրակետին է հասնում նրա «Տորք-Անդեղ» գյուղացնապոեմում: Աղայանի այս ստեղծագործությունը 19-րդ դարի վտղջ հայկական պոեզիայում բացառիկ մեծարժեք մի գործ է, մեծարժեք թե՛ իր իդեալական-սոցիալական իմաստով և թե՛ իր արվեստով:

«Տորք-Անդեղ»-ում ղեղարկեստորեն մշակված է Մովսես Խորենացու հազարյադ ու նրա արտահայտությունները ասած «սաստիկ մեծ առասպելը», և այն «առասպելների սուսապելը»՝ Անդեղյա Տորքի մասին<sup>1)</sup>:

Ոգտագործելով պատմական շատ հեռավոր անցյալում, անհիշելի ժամանակներում ստեղծված ժողովրդական այս առասպելը, Աղայանը տվել է մի ծավալուն բանաստեղծական յերկ՝ գյուղացնապոեմ, վորը տողորված է սոցիալական-իդեալական ու դաստիարակչական խորն իմաստով: Յեթե մենք մի պահ վերացնենք «Տորք-Անդեղ» պոեմի բովանդակությունն առասպելական ղգեստավորումը, ապա մեջտեղ կմնա Տորքի և Հայկանուշի սիրո պատմությունը, վորը բարձր բարոյական իմաստով է համակրված: Պոեմի լեյտմոստիվը յերկու յերիտասարդների նվիրական սերն է, բայց շատ լայն բովանդակություններով, Աղայանը Տորքի և Հայկանուշի կերպարներում մարմնացրել է իր մանկավարժական-դաստիարակչական գաղափարները մարդու, նրա բարոյական գծերի մասին: Նրա իդեալն էր դաստիարակել մի սերունդ, վորը լինի հզոր և ուժեղ թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես և թե՛ մտավոր կարողությամբ, ըստ վորում մարդու մեջ շատ բարձր լինեն բարոյական արժանիքները, այնպես վոր «մարդը լինի մարդ, իսկ այժմ նա մի կիսագազան է»—ինչպես գրել է Աղայանն իր մի աշխատությունում:

<sup>1)</sup> Մովսես Խորենացի — Պատմություն հայոց, ղիբք Ա. գլուխ ԻԳ, ղիբք Բ. գլուխ Ը:

Տորքը՝ տղամարդու, իսկ Հայկանուշը կնոջ բարոյական իրեանքն է ըստ Աղայանի «ինքնուրուշն տեսութեան»։ Պոեմի առասպելական ձևը նույնպէս ունի ավելի ցայտուն դարձնելու հեղինակի փայտաշաճ այդ իրեանքը։

Ի հարկէ անկարելու չէ այն, վոր պոեմի հերոսներն իշխանական-թագաւորական սերնդից է, «Աւերեթի Արամյան ամբոստի տիրուհին», իսկ հերոսը՝ «նա մի հովիվ էր, հովիվ լեռնական, բայց վոչ հասարակ, այլ գյուղացական»։ Յիթե Աղայանն իր հերոսուհու կերպարը հակադրում էր իրական տիրուհիներին, ապա իր հերոսի՝ «լեռնական հովիվ» կերպարով, նա այն ճշմարիտ գեմոկրատական իդեան էր դարգացնում, վոր միայն հասարակ ժողովուրդն է ծնում մարդիկ՝ ոժտված թե ֆիզիկական ուժով և թե հոգեկան-մտավոր ու բարոյական բարձր արժանիքներով։

Կոնկրետ ինչ գծերով են ոժտված Աղայանի այս պոեմի յերկու գլխավոր հերոսները։

«Թող մարդս կոշտ լինի անհարթ սարի պէս, բայց սիրտը չլինի անշունչ քարի պէս», — ասված է պոեմում։ Տորքի սրտաքինը հենց նման է «մի անհարթ սարի», իսկ նրա սիրտը նման չէ «անշունչ քարի»։ Տորքը մի «աժգահա» գյուղացու է։

«Տգեղ եր դեմքը և այնքան դաժան, վոր զարնուրում էր, ով նայում էր վրան»։ Իր անուրի կերպարանքի մեջ Տորքն այնքան էր ուժեղ՝

«Վոր հիսուն գոմեջ չունեյին մեկտեղ,  
Նա դեռ պառանի ժայռեր էր ձեղքում,  
ձեղքում էր ձեռքով, ձեռքով էլ կոկում,  
Առյուծ ու վագր նրան տեսնելիս,  
Սոված շան նման մոտն էյին գալիս,  
Կարծում էյին, թե նա յեղ է գազան,  
Յեղ նա յե իրենց զորավոր արջան»։

Չնայած դրան, Տորքն իր բնավորութեամբ հեղ ու խոնարհ էր, բայց յիթե դայրացնեյին նրան ու նա բարկանար, այդ դեպքում նա վոչնչացնում էր իրեն չարացնողներին, անգամ յիթե նրանք կազմեյին մի ամբողջ գյուղ, ինչպես պատահեց մեկ անգամ։

Լինելով այդպիսի վիթխարի ուժի տեր, Տորքը սակայն իր ուժը յերբեք ի չարը չէր գործադրում։ Նա իր ֆիզիկական ուժին էր դիմում միայն շատ ծայրահեղ դեպքում, և այն հատկապէս հայրենի յերկրի ոտաբերկրյա թշնամիների դեմ, ինչպես պատահեց մի անգամ, յերբ «յեկան ինդրեցին Տորքին,

Վոր դնա ոգնի խեղճ ժողովրդին»

«Սև ծովի» վրայով «հսկա նավերով» յեկած թշնամիների դեմ կռուելու։ Մինչև կհասնեն Տորքը, թշնամիների «նավերն արդեն բավականաչափ հեռացել էյին Սև ծովի ափից» ու զայն բացավ Տորքը։

«Բլրոջայի ժայռեր սարերից պոկեց, փախչող նավերի յետևից շարտեց»։ Նրա նետած «ժայռերը գունդ-գունդ զարկվում էյին նավերին ու տանում անդունդ»։ Յեղ այնուհետև յերկիրն ազատվում է ոտաբերկրյա թշնամիների հարձակումներից, բայց Տորքն անսելի ուժի հետ միասին մաքուր ու վսեմ հոգի ունեւր և միաժամանակ անչափ խելացի յեւ, «լավ վորմնագիր էր և ճարտարապետ»։

Տորքի կերպարի մեջ Աղայանը փառաբանում է մարդու ստեղծագործական ուժը, հզորութեանը և փորձում է բնութագրել, թե մարդն ինչով է տարբերվում կենդանուց և ինչով է վեհ գազանից։

Սրբայի այն հարցին, թե՛

«Վերն է գերականց, ուժը, թե խելքը»։ «Յերկուսն էլ լավ է», — պատասխանում է Տորքը և բացատրում, վոր ցանկալին, սակայն, «գլխապահութեան» ու «հախշտակութեան խելքը չի, այդպիսի խելք ունեն թե մարդ, թե գազան»։ Ճանկալին՝ «գյուղացական խելքն» է, վորով ոժտված է մարդը։ Իսկ ինչ է «գյուղացական խելքը», ըստ Աղայանի, — այդ՝ մարդու հոգեկան-մտավոր, ինտելեկտուալ այն հզոր կարողութեանն է՝

«Վոր հնարում է, ստեղծում է ամեն բան,

Վոր մեղ տանում է միշտ գեպի բարին,

... Վոր բանեցնում է սղին ու ջրին,

Ծառայեցնում կրակին, հողին,

Շինում է գութան, կամն ու ձախարակ,

Հերկում, մշակում դաշտ ու ագարակ,

Վոր քարին, փայտին տալիս է նոր ձև,

Նոր գործադրութիւնն և այն, հարատև,  
Այս և ճշմարիտ խելքն իմ կարծիքով,  
Մարդը գազանից վեհ և միայն սրանով...»:

Տորքի բերանով ասված այս խոսքերի մեջ արտահայտված է Աղայանի հայացքը մարդու մասին, մարդու վորի տիպարն Աղայանը ցույց և տալիս հանձին Տորքի: Բայց Աղայանի այս հերոսը վոչ միայն ուժեղ է, ճարտարագետ ու խելացի, այլև անհուն սիրտ զգացմունքով սժտված՝ չնայած իր արտաքին այլանդակութեանը:

«Մի նայիր, վոր յես կոպիտ եմ ու բիրտ,  
Այս կոպտութեան մեջ կա մի քնքոշ սիրտ,  
Վոր քեզ զլխովին իր մեջ կամիտի,  
Յեզ միշտ քեզ համար միայն կարոտի»,—

ասում է Տորքն իր սիրուհուն—Հայկանուշին:

Իսկ թե՛ զձերով, բարոյական թե՛ արժանիքներով է սժտել Աղայանն այս հերոսուհուն, վորը, լստ նրա, կնոջ իղեալական տիպար է դուրսգաղնական կերպարանքով:

Հայկանուշը վոչ միայն անսահման գեղեցիկ է, «չքնաղ ու չնաշխարհիկ», «չափազանց սիրուն», այլև Ֆիզիկական ու բարոյական մեծ ուժի տեր, վոչ պակաս քան Տորքը: Նա քաջ աղջիկ է: Յերագուժ Տորքին տեսնելուց հետո, յերբ պատրաստվում է դիմախոսել նրան, Հայկանուշը վերցնում է կապուժ իր «թուրն հավուռի»: Իսկ յերբ Տորքը հանդիպելով Հայկանուշին, նրան հայանում է իր անկեղծ սերը և խնդրում իր կինը դառնալ, Հայկանուշը չի համաձայնում, մինչև չի փորձում Տորքի բարոյական ուժը և նրա սիրտ նվիրվածութունը, առաջարկելով նրան իր հետ մենամարտել, ինչպես վայել է դուրսգաղուններին: Բացի այդ, Հայկանուշը նաև անսահման սեր ու հուզատարութիւնն և ցույց տալիս ժողովրդի նկատմամբ:

«Նա շատ բարի յե և այնքան զթաժ,  
Վոր մեր կանանց մեջ գեռ չի տեսնված.  
Ով լծկան չունի, լծկան է տալիս,  
Շատերին լծած դուրթան է տալիս,  
Տուղ է, թե պանիր, նա բոլոր տարին  
Միշտ բաժանում է չունեցողներին»,—

պատմում է նախապարհին Տորքին հանդիպած հովիվը՝ Հայկանուշի մասին: Ի հարկե Աղայանն այնքան միամիտ չէր, վոր հավատար, թե հնարավոր է Հայկանուշի նման մի վորեւէ իրական իշխանուհի կամ թագուհի, բայց տվյալ դեպքում Աղայանն իր առասպելական հերոսուհուն հակադրում է իրական իշխանուհիներին ու թագուհիներին, գորգուրելով քաջասիրտ, խելացի ու բարի և առաքինի կնոջ իղեալը վոչ միայն իր այս ստեղծագործութեան մեջ, այլև իր մյուս թե վիպական գործերում և թե մանավանդ հեքիաթներում, վորոնց կանդրադառնանք քիչ հետո:

Աղայանը վոչ միայն վողբացել է աշխատավոր կնոջ կրկնակի ստրկական ու վողբերգական վիճակը («Ճախարակ», «Յերկու քույր» և այլն), այլև տվել է ազատ, իրեն ազամարդուն հավասար զգացող կնոջ սոսանտիկական կերպարներ, վորպեսզի ժողովուրդը ձգտի դրանց, իսկ մանուկ սերունդը դաստիարակվի այդ կերպարների որինակով:

Կնոջ իղեալական-սոսանտիկական կերպար է վոչ միայն Հայկանուշը «Տորք-Անգեղ»-ում, այլև Անահիտը նույնանուն հեքիաթում:

Բայց «Տորք-Անգեղ»-ի բովանդակութեանը և արժեքը չի սահմանափակվում միայն անձնվեր, դուրսգաղնական սիրտ գովերգութեամբ: Հարակից Աղայանն իր պոեմում արտահայտել է նաև սոցիալական ավելի լայն գաղափար:

«Տորք-Անգեղ»-ում կա նաև տիրույ սոցիալական անհավասարութեանն ու ճնշումը դատապարտող խղեան: Ըստ պոեմի, «չին Հայաստանում» համայնատիրական ազատ կարգեր կային թագավորների տիրապետութեանից դուրս: Դա պոեմի հսկաների, այսինքն աղաթ, ինքնիշխան մարդկանց մի ուրույն աշխարհ էր, ուր չկային վոչ զգիր, վոչ քյոխվա ու քեթխուղա, մարդիկ ազատ էլին ամեն տեսակի հարկերից, լիովին ազատ, մանավանդ դրամի, սպրանքային անտեսութեան իշխանութեանից:

Համայնքի բոլոր անդամները սիրում են աշխատանքը, բոլորն են աշխատավորներ են, գիտեն զանազան արհեստներ, տիրապետում են անհրաժեշտ գիտելիքների և աշխատում ու ապրում են համայնատիրական-կոլեկտիվ հիմունքներով:

«Բոլոր անգամներն ամբողջ համայնքի,  
Զավակ են կարծվում մի ընտանիքի»:

Այսպէս միարան սերտ սիրով կապված, և միասին  
Մեկ-մեկու համար գրուել յետ դրած»:

Բացի այդ, մի հիմնական գիծ ևս հատուկ է այդ ազատ աշ-  
խատանքի համայնքին: Այստեղ մարդիկ, ինչպիսի սիրով, վոր  
աշխատում են, նույնպիսի սիրով ու պատրաստակամութեամբ  
նրանք կռիւ յին գնում՝ հանուն իրենց ազատ հայրենիքի պաշտ-  
պանութեան: Այդ համայնքի անդամները՝

«Հարկից խորշում են, բայց վոչ կովերուց,

Վոչ հայրենիքի պաշտպան լինելուց,

Ունեն առանձին ազեղ, պարսպախի,

Կռիվ են գնում ինչպէս հարսանիք»:

«Տորք-Անգեղ»-ով Աղայանը յերազում եր այնպիսի կար-  
գեր, ուր աշխատավորները, գյուղացիները՝

«... ազատ մեան,

Քյոխվի ու գզրի վոչինչ հարկ չտան»:

Աղայանի հայացքներն են արտահայտում լիւնեղում ազատ  
ապրող հեկաները, յերբ ստում են՝

Մենք չունենք գղիր, քյոխվա քեզլուողս,

Ենդուր ենք մնացել այսպես աժգահս»:

Աղայանի գրական ժառանգութեան մեջ նշանակալից տեղ  
են գրավում հեքիաթները, և Աղայանը, վորպէս մանկական  
գրող, հայանի յի վոչ միայն իր բանաստեղծութեաններով, այլև  
ավելի շուտ իր հեքիաթներով, վորոնք մտնում են մեր անցյալ-  
ի գրականութեան վաղե ֆոնդը:

Աղայանին, վորպէս հեքիաթագրի, իրավայի կերպով ան-  
վանել են «հայց Անգերսեն», համեմատելով նրան գանձական  
նշանավոր գրող Հանս Թրիտտիան Անգերսենի հետ (1805—1875),  
վորը, ինչպէս հայանի յի, հուշակից է ստավերապես իր հեքիաթ-  
ներով և վորի կյանքից ու ստեղծագործութեանից վորոշ ընդ-  
հանուր գծեր կան Աղայանի մոտ:

Պատահական չէ, վոր Անգերսենի կյանքի մասին հայ-  
կական մամուլում առաջին լայն ծանոթութեան ավոյր յեղել է  
Աղայանը, ուսական «Родник» ամսագրից (1839 թ. № 6-ից)  
թարգմանելով Անգերսենի կենսագրութեանը՝ «Հեքիաթների  
անմահ ստեղծողը» վերնագրով («Աղբյուր» 1890 թ. № 3—12):

Ինչպէս Անգերսենը գանձական և ընդհանրապես յեփրոպա-  
կան գրականութեան մեջ, նույնը և Աղայանը հայ գրականու-

թեան մեջ հեքիաթների անմահ ստեղծողը և, վորի գործը շա-  
բունակից նրա հոգեղովակը և մտերիմ ընկերը՝ Հ. Թումանյանը:

Նախ նկատենք, վոր թե անցյալում և թե հետո՝ սխալ  
հայացք է տարածված յեղել հեքիաթի սոցիալական իմաստի ու  
դաստիարակչական նշանակութեան մասին, մի հայացք, ըստ վո-  
րի հեքիաթը ուսել իրականութեան հետ վոչ մի անհնարեթյուն  
չունի, ընդհակառակը, հեքիաթին դիմելով՝ հեղինակը խոստ-  
ափում է իրեն շրջապատող սոցիալական-քաղաքական սրայման-  
ներէից, իր ընթերցողների ուշադրութեանը ևս հեռացնելով իրա-  
կանութեանից: Բացի այդ, ըստ այդ հայացքի, հեքիաթներն  
իրենց հրաշապատում բնույթով (անուելի վիշապներ, դևեր, կա-  
խարչներ և այլն) իբր թե ուրտակար չլինելով՝ ընթերցողներին,  
մանավանդ յերեխաների համար, վրասում են նրանց ճիշտ դաս-  
տիարակութեան գործին:

Այս սխալ կարծիքն անցյալի մեր մամուլում արտահայտ-  
վեց մասնավորապես Աղայանի հեքիաթներին նկատմամբ: Ի վեղ  
նկատենք, ինչքան էլ դարմանալի, բայց փաստ է, վոր այդ կար-  
ծիքը պաշտպանողները յեղել են առանձնապես մի ֆոնի ման-  
կավարժ-դասականագետներ, նրանց թվում՝ Յե. Ղազարյանը, նաև  
մանկական դրականութեան բարեկամներից մեկը՝ Ստեփան Լի-  
սիցյանը, վորոնք հատուկ հոգովածներով այդ մասին հանգես են  
յեղել «Մուրճ» ամսագրում:

Նրանցից մասնավորապես Յերվանդ Ղազարյանը յերկու ըն-  
դարձակ հոդված և գրել է) մանկավարժութեան «հիմնավորված» կեր-  
պով ժխտելու Աղայանի հեքիաթների դաստիարակչական արժե-  
քը և «ապացուցելու», թե այդ հեքիաթները վրասակար լինելով  
մանուկների, պատանիների համար, չպետք է հանձնարարվեն  
կարդալու:

Իր կարծիքները հաստատելու համար Ղազարյանը վերցրել  
է այն ժամանակ «Աղբյուր»-ում նոր լույս տեսած Աղայանի  
յերկու հեքիաթը՝ «Յեպեղնաւի»-ն ու «Ջանգի-Ջրանցի»-ն, և  
նրանց հիման վրա կառուցել է իր՝ հեքիաթաժխտման արհեստ-  
թեանը:

1) «Մանկական ընթերցանութեան», «Մուրճ», 1890 թ. № 3 և «Գաս-  
տիարակչական մտաբութեաններ», «Մուրճ», 1890 թ. № 9:

Ղազարյանի պարզամիտ «տեսութեան» համաձայն՝ հեքիաթը չպետք է հակասի բնագիտական ճշմարտութեաններին և պետք է հիմնված լինի բնական գիտութեան տվյալները վրա: Յեղնեղով այդ պահանջից, Ղազարյանը գտնում է, թե որինակ՝ «Յեղեգնուհի» հեքիաթն անբնական է, վորովհետև նրանում «ամեն տեսակ անբնական, հրեշավոր բաներ...» կան: Յեղ պատմիչն այն է,—ասում է Ղազարյանը,—վոր Աղայանն այդ «անբնական, հրեշավոր բաները» (այսինքն՝ յեղեգնից աղջկա ծննվելը և նրա կերպարանափոխությունները) «նկարագրել է այնպես գրավիչ և կախարդական միջոցներով, վոր հեշտութեամբ կարողանա կաշառել մանուկները դռնբաբեկ յերեակայութեանը»:

Ըստ Ղազարյանի, «Յեղեգնուհու» նման հրաշապատում հեքիաթները «տգիտութեան» արդյունք են և միայն սնահավատություն կարող են տարածել ընթերցողների մեջ: Իսկ «Զանգի-Զրանգի» հեքիաթն էլ, բացի այդ, անբնական է յե և այն պատճառով,—ասում է Ղազարյանը,—վոր «անհամեմատ ավելի սարսափեցնող ու վախեցնող տպավորություն է անում...»: Այն հեքիաթում նկարագրված դեպքերը «մտաբերելիս, մարդ կարող է ուշաթափվել, հայուցինացիս ստանալ»,—շատ լուրջ կերպով ասում է Ղազարյանը և խիստ բողոքում, վոր մամուլը տպագրել է Աղայանի այդ և այլ հեքիաթները, վորոնց ընթերցումով, իբր թե, մանուկները «չարաչար մտրվում են...»

Կարգալով Յեղվանդ Ղազարյանի առաջին հոդվածը («Մանկական ընթերցանություն») «Մուրճ»-ում, Աղայանն անմիջապես՝ ի պատասխան նրա՝ գրում է «Մի կիսապատասխան «Մուրճ» ամսագրին» հոդվածը: Այստեղ կտրականապես մերժելով ու ջախջախելով Յեղվանդ Ղազարյանի հիշյալ «տեսությունը», Աղայանը շարադրում է իր հայացքները հեքիաթի նկատմամբ: Աղայանը հույսովաբար մանկավարժներն բացատրում է հեքիաթի միանգամայն դրական նշանակությունը, հատկապես մանուկների սոցիալական ու բարոյական դաստիարակություն գործի համար, ինչպես և բացահայտում հեքիաթի և սեռ իրականություն կապը:

«Հեքիաթները վոչ միայն փաստակար չեն, այլ շատ սգաակար, յերբ նրանք կրում են հեքիաթի առասպելական և հնու-

թյան դրոշմը, յերբ նրանք իսկ և իսկ հեքիաթ են»: Աղայանն իրավացի նկատում է, վոր «Փաստակար են միայն այն հեքիաթները, վորոնք վոչ հեքիաթ են, վոչ վեպ, վոչ պատմություն և վոչ գիտություն...»: Այդպիսի «հեքիաթները» «խանդարում և աղավաղում են թե հեքիաթը և թե զիտությունը»: Աղայանը հիշատակում է մամուլում («Մուրճ» ամսագրում) իր հեքիաթների մասին առված հոդվածները, վորպես «թերահաս մտքի արտադրություններ», վորոնցով նրանց հեղինակները փորձում են ընթերցողներին հավատացնել, թե «Աղայանի հեքիաթները համամանկավարժական և փաստակար են, վորովհետև սարսափելի, չկրած սուտ բաներ են պատմվում նրանցում, վորոնց «անուշա Աղայանը չի հավատում»:

Ավելորդ չի լինի այստեղ միջանկյալ հիշել, վոր վոչ միայն Աղայանի ժամանակ, այլև նույնիսկ մեր օրերում, ~~խորհրդային~~ հայ դրահանադեաների շարքում այդ սխալ կարծիքը կրկնողներ յեղան, այնպեղը հասնելով, վոր Աղայանը մեղադրվեց գիտությունը ծխտելու և ճակատագրին հավատալու հանցանքի մեջ:

Ահա, որինակ, մեր գրականագետներից ընկեր Խորեն Սարգսյանը, վորն իր «Ղազարյան Աղայան» բավական ընդարձակ ուսումնասիրություն մեջ պնդում է, թե «Աղայանի հեքիաթներում ու մի շարք այլ հրվածքներում» գիտությունը «ծխավում է»: «Ու այդ վոչ միայն նրա համար, վոր Աղայանն ամենայն լրջութեամբ պատմում է հրաշքների, իր և իրականում իսկապես տեղի ունեցող յերևույթների մասին, այլև պլատոնիստական այն պատճառով, վոր բնագիտական բացատրություններին յենթարկվող յերևույթներին նա հաճախ տալիս և միևնույն լրջութեամբ դերբնական հեքիաթային բացատրություն»<sup>1)</sup>,—գրել է ընկեր Սարգսյանը և վորպես տպուկաց հիշատակել Աղայանի հեքիաթներից յերկուսը՝ «Մանկական աշխարհայացք, կամ Լույս և Մութ աշխարհները» և «Քիչ էլ, քիչ էր» հեքիաթները: Ընդ Սարգսյանը պրիթի նույնությունը կրկնել է Յե. Ղազարյանի սխալ հայացքները:

Ահնհայտ է, վոր թե Աղայանի ժամանակակիցներից վոմանք, և թե ընդ Սարգսյանը անտեսում են հեքիաթի սպեցի-

<sup>1)</sup> «Հայ գրակ. պատմութ.», Բ, 5, էջ 212.

Ֆիկուսը, նրանք ըստ կյուսթյան ժխտում են հեքիաթը, վարպետ  
գեղարվեստական ստեղծագործութուն և Աղայանին մեղադրել  
են փաստորեն այն բանի համար, վոր նա խկական՝ հեքիաթ է  
գրել, և վոչ մի այլ բան: Նրանք Աղայանից լավագույն դեպ-  
քում պահանջել են հեքիաթ, առանց հեքիաթայինի, առանց այն  
հիմնական հատկանիշի, վորով հեքիաթը հեքիաթ է: Այլ կերպ  
ասած, Աղայանի այդ տիպի քննադատները մերժել են նրանից  
ընդունել այն, ինչ վոր նրա մեծագույն արժանիքներից մեկն  
է կազմում:

Ահա այդպիսի քննադատներին պատասխան տալով, Աղա-  
յանը նրանց բացատրել է, վոր ինքը վորպես հեքիաթագրի շատ  
գիտակցաբար է մոտեցել խնդրին, միանգամայն ճիշտ հայացք  
ունենալով հեքիաթի նպատակի ու գերի մասին:

«Իմ նպատակն է յեղել և ե՛ հեքիաթով հեքիաթական աշ-  
խարհը մոտցնել յերեխային և այդ աշխարհում կրավորական դեր  
չտալ, այլ ներգործական, վսր յերեխան իր յերևակայությամբ մըտ-  
նի հերոսի դերի մեջ, այն անի, ինչ վոր հերոսն է անում, նրա  
պես անվեհեր, նրա պես հնարագետ, նրա պես վեհանձն ու ազ-  
նիրվ», — գրել է Աղայանն ընդգծումով:

Այնուհետև մեծ հեքիաթագիրը զարգացնում է միանգա-  
մայն ճիշտ գիտական, մեղ համար ևս ընդունելի տեսութուն հե-  
քիաթի սոցիալական նպատակադրության, իմաստի և կրթական  
ու դաստիարակչական գերի մասին: Ի՞նչ է հեքիաթն ըստ էյու-  
թյան, վորևէ կապ ունի՞ արդյոք իրական աշխարհի հետ. այն,  
ունի, — վճռական պատասխանում է Աղայանը:

«Հեքիաթական աշխարհը իրական աշխարհի ամենանշքրիտ  
պատկերն է: Իրական աշխարհի դևերը, վիշապները, սատանեֆն  
ու ֆաջերը ավելի ևս սարսափելի յեն, վորովհետև դրանք մեծ  
մասամբ մնում են անընկնելի, միեզյետ հեքիաթներինը ընկնվում և  
վոչնչացվում են»: «Իմ աչքում, — շարունակում է Աղայանը, — հե-  
քիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շատ և շատ  
նման է մայրական կաթին, վորով սնվում է մանուկը և վորի  
ֆիզիկական կազմվածքը մայրական կաթի բաղկացութունն է:  
Կաթը կորչում է, յերեխան մեծանալով կարվում է մոր կաթից,  
բայց նրա արդյունքը չի կորչում: Հեքիաթը մեր յերևակայու-  
թյան, մեր տաղանդի ու հանճարի կաթն է»:

«Մարդու հանճարի և տաղանդի սաղմերը պետք է նրա լսած  
հեքիաթներում փնտրել, — գրում է Աղայանը և ավելացնում հետե-  
վյալ ուշագրավ միտքը:

«Յեթե յես գիտենայի, թե վորպիսի հեքիաթներ լսելով  
է զարգացել Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթեյի, Շիլլերի, Կո-  
լումբոսի և սրանց նմանների յերևակայությունը, յես նույն հե-  
քիաթները կտայի իմ ընթերցող սիրելի մանուկներին, թեկուզ  
նրանց լսած հեքիաթները լինեյին ավելի ևս անուշիկ և զարնու-  
րելի»:

Աղայանն այնուհետև իր այդ մաքին տալիս է հիանալի  
համոզեցուցիչ բացատրութուն, պարզելով, թե ինչու հատկապես  
մանուկների դաստիարակության համար ինչքան հեքիաթն ավե-  
լի յէ հրաշափառում, ավելի յէ առասպելական ու սարսափելի,  
այնքան ոգտակար է նա և արժեքավոր (ի հարկե միշտ խոսքը  
խեղական բարձրարվեստ հեքիաթի մասին է), վորովհետև, գրում  
է Աղայանը՝

«Ել ինչ Հերքուլես, յեթե նրա սպանած վիշապը պետք է  
մի հասարակ ոճ լինի և վոչ մի հիդրա բազմազուլես, վոր յերը  
մի գլուխը կտրեն, մյուսը տեղը բռնի: Յեթե այդ վիշապը զար-  
նուրելի յէ, վորքան առավել հիանալի յէ Հերքուլեսի սիրտը,  
նրա անվեհերութունը, նրա հնարագիտությունը: Ել ինչ Հեր-  
քուլես, յեթե նա յել այնպես պիտի մեռներ, ինչպես հասարակ  
մանկանացուք, և վոչ այնպիսի տանջանքներով, վոր մարդուս  
յերևակայած բոլոր տանջանքներից վեր լիներ»:

Ուրեմն, — յեզրակացնում է Աղայանը, — «վոչ ամենայն ինչ,  
վոր սարսափելի յէ թվում, նաև վնասակար է: Ընդհակառակը,  
չսարսափելու համար պետք է լսած լինել ամենասարսափելի  
որինակներ, ցանկալի յէ, վոր մեր նոր սերունդն ամուր նյար-  
դեր ունենար, և վոչ թույլ, գյուրազրզիտ, իստերիքական և ախ-  
տավոր, ինչպիսիք յերևում են մեր ժամանակում»: Վերջում Աղա-  
յանն այդ առթիվ անում է մեծ մանկավազժ-հոգեբանին հա-  
տուկ խորը գիտողութուն՝ մանուկների մասին:

«Մանուկները չեն վախենում, յերը իրանց ծնողաց մոտն  
են կամ յեթե ունենւ վորևէ պաշտպան, թեկուզ մեկ շուն: Հե-  
քիաթներում մանուկները գանվում են հերոսների պաշտպանու-  
թյան տակ: Յեթե մեկը ճանապարհորդում է Հերքուլեսի հետ,

ինչ վերապ կամ հրեշից կարող ե վախենալ, յեթի մեկը նստած ե Պեգասի վրա, ել ինչ յերկշուգ կտրող ե ունենալ վորեկ յե-  
սագլխյան Քիմեոսից»։ Յեղնեկով, տնա, իր այս միանգամայն ճիշտ  
տեսությունից, Աղայանը խորհուրդ ե սալիս, «վոր վոչ միայն  
փոքրերը կարգան իր հեքիաթները, այլե մեծերը, վորոնք հուշ-  
սով եմ շատ շնորհակալ կմնան քննանից» — ասում ե Աղայանը։

Թե ինչքան ճիշտ ե արժեքավոր ե մեր մեծ քննչուս գրո-  
ղի ու մանկավարժի դարգացրած (մեր գրականության մեջ առա-  
ջինը) այս տեսությունը հեքիաթի մասին, գրանում ավելի կհա-  
մողվենք, յիրք հիշենք Մաքսիմ Գորկու հայացքը հեքիաթի մա-  
սին նրա աշխատություններում, մասնավորապես նրա «О сказ-  
ках» հոդվածում, գրված 1934 թվին։

«Комс. Правда»-ն մի քանի ամսում իր եջերում ապա-  
գրելով ավելի քան 500 ժողովրդական հեքիաթներ, ուղարկում  
ե Ա. Մ. Գորկուն, լսողբեզով, վոր գրի իր հիշողություններն այն  
մասին, թե ինչ են ավել իրեն ժողովրդական հեքիաթներն ու  
յերգերը մանկական տարիներին ե թե ինչ նշանակություն ե  
ուներեղ ժողովրդական ստեղծագործությունն իր Գորկու գրա-  
կան աշխատանքում։

«Комс. Пр.»-ին, Գորկին պատասխանում ե իր այն հոդվածով,  
վոր կրում ե «О сказках» վերնագիրը։ Պատմելով իր հիշողու-  
թյունները, մանկական տարիներին իր սաացած ապավորու-  
թյունները ժողովրդական յերգերից ու հեքիաթներից, Գորկին  
վերջում սալիս ե մեղ հետաքրքրող հարցի պատասխանը։

«Ինչ են ավել ինձ յերգերն ու հեքիաթները։ Յես արդեն  
հիշատակեցի, վոր հեքիաթների հետեում, յերգերի հետեում ինձ  
թվում եր, թե կա ինչ-վոր հեքիաթային եյակ, վորն ստեղծում ե  
հեքիաթներն ու յերգերը։ Նա, իբր թե, թեև ուժեղ չե, բայց խե-  
լացի յե, սրատես ե, համարձակ ե, ուղղամիտ ե, վոր ամենքին  
ե ամեն ինչին հաղթում ե իր ուղղամտությամբ։ Յես ասում եմ —  
եյակ, վորովհետե հեքիաթի հերոսները մեկից անցնելով մյու-  
սի, կրկնվելով, ինձ մոտ միանում եյին, վորպես մի գեմք, մի  
Ֆիգուրա։ Այդ եյակը բոլորովին նման չեր մարդկանց, վորոնց  
միջավայրում ապրում եյի յես ե ինչքան ավելի մեծանում եյի,  
այնքան ավելի վորոշակի ու պարզ եր յերևում ինձ տարբերու-  
թյունը հեքիաթի ե անտանելի, արգահատելի, անորյա կյանքի

անհաղ-անկուշտ, չարնախանձ մարդկանց միջև։ Հեքիաթում  
մարդիկ թռչում եյին ոգում «գորգ-ինքնաթիռով» (на «ковре-  
самолете»), քայլում «կողիկ-ճեպընթացով» (ходили в «сапогах-  
скороходах»), հարություն եյին տալիս սպանվածներին, սրը-  
կելով նրանց կենդանացնող ջրով, մի գիշերվա մեջ կառուցում  
պալատներ ե ընդհանրապես հեքիաթները բաց եյին անում իմ  
առաջ լուսանցք (просвет) գեպի այլ կյանք, ուր գոյություն  
ուներ ե, յերագելով լավագույն կյանքի մասին, գործում եր ինչ  
վոր ազատ, անվեհեր ուժ»։

Անա այդպիսի խորը, կախարդական ապավորություն ստա-  
նալով հեքիաթներից, այնուհետե կյանքում «ինձ համար, — շա-  
րունակում ե Գորկին, — ել ավելի թանգ դարձան հեքիաթների  
հերոսները։ Հետագայում, յերբ յես ուշադիր կարգացի յեկեղեցա-  
կանների գրականությունը — «Վարք սրբոց» («Жития святых»), —  
ինձ համար պարզվեց, վոր հրաշքները, վորոնց մասին պատմում  
ե յեկեղեցին, փոխ ե առնված հին իմաստուն հեքիաթներից,  
քանի վոր ե այստեղ, ինչպես ամեն տեղ ե ամեն ինչում, — յե-  
կեղեցականներն ապրել են ի հաշիվ աշխատավոր ժողովրդի  
ստեղծագործական ուժի, նրա առողջ, արթնացնող բանականու-  
թյան»<sup>1)</sup>։

Հայ մեծ դեմոկրատ գրողի ու մանկավարժի ե պրոլետա-  
րական հանճարեղ գրողի հայացքների զուգադիպությունն ակըն-  
հայտ ե հեքիաթի կրթական ու դաստիարակչական նշանակու-  
թյան հարցում։ Անկասկած ե, վոր Աղայանին քննադատողնե-  
րը չարաչար սխալվել են, վորովհետե նրանց կարծիքն ընդու-  
նելով, պետք եր ժխտել աշխատավոր ժողովրդի ստեղծագործա-  
կան Փանտաղիայի հանճարեղ արտագրանքների (առասպել, հե-  
քիաթ, լեգենդ ե այլն) իմացական ու գեղարվեստական նշանա-  
կությունը։

Մեր բազմավաստակ գրողի մեծագույն արժանիքներից  
մեկն այն ե հենց, վոր նա որդանապես կապված լինելով ժողո-  
վրդական ստեղծագործության հետ, ոգավել ե նրա հարուստ  
գանձարանից ե մեր գրականությունը հարստացրել գեղարվես-  
տորեն մշակված հիանալի հեքիաթներով («Անահիտ», «Արեգ»

<sup>1)</sup> М. Горькай — О литературе. 1935 г. стр. 167—168.

նազան», «Լույս և Մութ աշխարհները», «Մեծամասնուկ և Արեւհասա», «Յեղեղնուհի» և այլն և այլն):

Յեւ յի՞նչ վաղ բոլոր գրականագիտներն ու մանկավարժներն են հասկացել Աղայանի հեքիաթները նշանակութունը մանուկների սոցիալական-բարոյական զառախարակութեան գործի համար, ապա իրական կյանքում Աղայանը մանուկների համար սիրելի հեղինակ և յեղի և հնում և այդպիսին մեր որերում ևս—ամենից առաջ իր հրաշալի հեքիաթներով ու զրույցներով:

Այս ամենից հետո դեռ անհրաժեշտ է Աղայանի հեքիաթները վերաբերյալ մի սխալ կարծիք ևս քննադատութեան յենթարկել: Ըստ այդ կարծիքի, Աղայանի հեքիաթները զեղարվեստական կողմը թուլանում և ուժեղ հրապարակախոսական տենդենցի առկայութեան հետեանքով:

Որինակ, Ահոն, վոր կարելի չէ ասել բոլոր քննադատներից ավելի շատ և զբաղվել ու գրել Աղայանի մասին, յեղեղնով բարձրակարգ և ստեղծագործի գիւրգիւրից, «Անահիտ»-ի մասին գրել է, թե՛ «զուտ զեղարվեստական հայացքների տեսակետից կարելի չէ դանդաղակել, վոր Աղայանը աշխատանքի, արհեստի շինարարակցան տենդենցիան շախաղանց շատ և առաջ քաշել և դարձրել քարազուժյուն»<sup>1)</sup>: Այստեղ ել՝ այն, ինչ վոր Աղայանի հեքիաթների ինքնուրույն արժանիքն և, գնահատվել և իրքև թերութեան:

Անշուշտ Աղայանի հեքիաթներում ուժեղ է հեղինակի տենդենցը, բայց այն արված և զեղարվեստական զգեստավորութեան մեջ, արտահայտված և հեքիաթների (այդ թվում և «Անահիտ»-ի) գործող անձանց կերպարների, նրանց խարակների ու գործողութեանների միջոցով և ժողովրդական հեքիաթներին հատուկ պրիմների շատ հաջող ոգտագործումով:

Աղայանի հեքիաթները իրական հիմքը՝ մանկավարժութեան դժուր, նրա պաշտպանած «դաստիարակութեան միակ նպատակն է» այն, վոր «մարդու մեջ պետք է զարգացնել յերեք հիմնական հատկութեան, վարպետի նա յինի ուժեղ, յիւրեք և առաքինի»<sup>2)</sup> և «վոր պետք է ժողովրդին բարեկրթել, նրա միտքն ու

<sup>1)</sup> Ահոն—Ղազարոս Աղայան (պատմական-գրական ուսումնասիրութեան), «Հորիզոն», 1911 թ., № 156:

<sup>2)</sup> Ղ. Աղայան—«Մորեցի. դաստ. վերա», «Արարատ», 1860 թ., № 1, էջ 23:

հոգին վստեացնել», նրա մեջ զարգացնել «արիւրքուն, քաջութեան, անվիհերութեան» և այդ նպատակով առ նրան կարգալու այնպիսի զեղարվեստական յերկեր, այդ թվում և հեքիաթներ, վորոնց հերոսները մեջ մարմնացած լինեն հիշյալ կենսական հատկութեանները:

Աղայանի բոլոր հեքիաթներն էլ («Անահիտ», «Արեղնադան կամ կայարգահան աշխարհ», «Մանկական աշխարհայացք կամ Լույս և Մութ աշխարհները», «Վիշապին հաղթողը», «Սիրգալը» և այլն) սողորված են այդ հիմնական պատկերներով՝ հեքիաթին համապատասխան բարձր զեղարվեստականութեամբ ոճով:

Այստեղ հնարավոր չէ կանգ առնել և մանրամասնորեն վերլուծել Աղայանի բոլոր հեքիաթները, բայց անհրաժեշտ է ընդհանուր սովոր նշել նրանց հիմնական գծերը:

Մենք պե՞տք է ընդունենք Աղայանի հանձարեղ միտքն այն մասին, վոր «հեքիաթական աշխարհը իրական աշխարհի ամենաճշգրիտ պատկերն է», վոր հեքիաթում պատկերված չարի ու բարու կռիվը մարդկային իրական աշխարհում տեղի ունեցող կռիւի ֆանտաստիկ հեքիաթային արտացոլումն է՝ ժողովրդական զիցարածական մտածողութեան համաձայն և վոր հեքիաթների գրական հերոսները՝ իրական մարդկանց, իսկ դեները, վիշապները, սատանաներն ու քաջերը սոցիալական կյանքի չար, ժողովրդին թշնամի ուժերի մարմնացումներն են, դարձյալ հեքիաթային ձևի մեջ: Այս տեսակետից և միայն այս տեսակետից պետք է քննութեան առնել հեքիաթներն ընդհանրապես և Աղայանինը մասնավորապես: Ինչքան էլ Աղայանի «փափկասիրտ» քննադատների համար ահուկի ու սարսափելի նկարագրութեաններ են պարունակում նրա հեքիաթները, այնուամենայնիվ դրանք բոլորն էլ՝ իրենց բարձր զեղարվեստական ձևի մեջ խորը բարոյակրթական նշանակութեան ունեցող յերկեր են՝ իրական կյանքը, մարդկանց սոցիալական հարաբերութեանները պատկերող բովանդակութեամբ:

Աղայանի հեքիաթների ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել, վոր նրանցից ամեն մեկում պատմվածքի սյուժեն գործանում և չար ու բարի ուժերի, չար ու բարի հերոսների միջև յեղած ընդհարումով՝ «հակադրութեանների պայքարով»,

ըստ վորում, ինչքան ել սարսափելի լինեն դրական հերոսն երբն  
դիմադիր ուժերը և սեղի ունեցող անցքերը, այնուամենայնիվ  
հաղթում են դրական հերոսները՝ մահացու պարտության մատ-  
նելով չար ուժերին, դեերին, վիշապներին և այլն: Իսկ այն, ինչ  
վոր անհավատարի, սարսափելի, ահուկի, անքնական ու մտացա-  
ծին է, այդ ամենը հեքիաթայինի անհրաժեշտ ստեղծագործա-  
կան միջոցներ են, վորոնք ավելի ցայտուն են դարձնում դրա-  
կան հերոսների գործունեությունը և ավելի յեն շեշտում հե-  
քիաթի իդեան՝ բարոյախոսությունը:

Այդպես է վոչ միայն հուշակավոր «Անահիտ»-ում, «Արեղ-  
նադան»-ում, «Լույս և Մութ աշխարհներ»-ում, այդպես է նաև  
«Յեղեգնուհի» և «Զանգի-Զրանդի» հեքիաթներում, վորոնք այն-  
քան խիստ հարձակման են յենթարկվել պարզամիտ քննադա-  
տություն կողմից: Որինակ՝ «Յեղեգնուհի» հեքիաթում թագավո-  
րի վորդին, վոր յերազում է ամուսնանալ հոր ու մորից չծնված  
աղջկա հետ, ի վերջո համուժում է իր մուրազին՝ ամուսնանալով  
յեղեգնածին աղջկա հետ, իսկ այլանդակ ու չար կեղծ-յեղեգնու-  
հին, վոր ամեն կերպ հետապնդում և ուղում էր վոչնչացնել իս-  
կական Յեղեգնուհուն, պատժվում և ամենադաժան կերպով:

Հեքիաթը վերջանում է՝ հեքիաթին բնորոշ այս արտահայ-  
տությունը՝ «Զարն այնտեղ, բարին՝ այստեղ»: Այս հեքիաթում  
աղջկա ծնվելը յեղեգնից և նրա կերպարանափոխությունները՝  
հեքիաթային, մտացածին պատկերացումներ են, բայց հեքիաթը  
հենց դրանց շնորհիվ ավելի ապավորիչ և դարձել և ավելի շեշտ-  
վել նրա իդեան—բարոյախոսությունը: Ժողովրդական իմաս-  
տություն և պարուրված հեքիաթի հեքիաթային սյուժեյի դար-  
դացման մեջ:

Ինչն է այս հեքիաթի իմաստը, ինչու թագավորի տղան  
իր տարրինակ ցանկությունն է հայտնում՝ հորից ու մորից  
չծնված աղջիկ ուղելու մասին, ինչ դեր է խաղում այլանդակ  
ու չար բոշա աղջիկը, ինչ են նշանակում Յեղեգնուհու կերպա-  
րանափոխությունները և վերջնականապես աղջկա փոխվելը՝ մի  
խեղճ աղքատ պառավի մոտ ու այնտեղ թագավորի և նրա աղա-  
յի հետ հանդիպելը: կեղծ-յեղեգնուհու խարդախություն մերկա-  
ցումը:

Թագավորի տղան յերազում է սիրո յերջանկություն մա-

սին: Նրա յերազած աղջիկը ծնվում է կուսական բնությունից՝  
մարդու վտարը չդիպած գետափի յեղեգնուտի մի յեղեգնից, մարմ-  
նանալով մաքուր ջրում: Յեղեգնուհին վոչ միայն հրաշալի գե-  
ղեցկություն, այլև առաքինություն (բարություն, աշխատասի-  
րություն), անմեղություն մարմնացումն է, վորն սպաստան է  
զանում՝ իր սեփական աշխատանքով սպրող մի աղքատ բարի  
պառավի մոտ, վորդեգրվելով նրան: Ինչու աղքատ պառավի և  
վոչ թե մի հարուստ կնոջ մոտ: Վորովհետև ըստ այդ հեքիաթի,  
գեղեցկությունն ու առաքինությունը կարող են պահպանվել մի  
միայն աղքատաբայան մեջ: Յեղ ինչպես «Անահիտ»-ում, այստեղ  
ևլ թագավորի սիրած աղջիկը վերջին հաշվով պարզ գյուղական  
աղջիկ է, ինչպես Անահիտը՝ ոժտված է բնական կախարդական  
գեղեցկությամբ և աշխատասիրությունով, հրաշագործ ձեռարկետի  
հմտությամբ: Չնայած այսանգակ ու չար բոշա աղջկա չարու-  
թյուններին, գեղեցկությունն ու առաքինությունը չեն վոչնչա-  
նում, այլ միայն կերպարանափոխվում և շարունակում են սպ-  
րել՝ նսարավոր ու իրական դարձնելով ցանկալի սիրո յերջան-  
կությունը: Յեղեգնուհին ապրում է, իսկ այլանդակ ու չար աղ-  
ջիկը իր խարդախություն համար ամենախիստ կերպով պատժ-  
վում է՝ հանուն գեղեցկիկի ու առաքինության:

Այս է ահա «Յեղեգնուհի» հեքիաթի բարոյախոսությունը:  
Հեքիաթում հեքիաթայինը շատ ուժեղ է ու զբավիչ, մանավանդ  
մանուկ ընթերցողի համար և այդ էլ հենց նրա մեծագույն ար-  
ժանիքն է, հեքիաթի արվեստի ուժը, վոր անցյալում տգիտ քն-  
նադատությունը թերություն է համարել:

«Զանգի-Զրանդի» հեքիաթի լուրջ, բանիմաց քննադատու-  
թյունն էլ կպարզի Յերվանդ Դավարյանների սխալը:

Աղայանը մեղադրվել է և նրանում, վոր իբր այս հեքիա-  
թում ամեն ինչ յենթադրյալ յե կույր ճակատագրին, իսկ մարդու  
գիտակցական գործունեությունը ժխտված է: Այս մեղադրանքն  
էլ հեքիաթը չհասկանալու հետևանք է:

Իրականում ինչ է ներկայացնում իրենից «Զանգի-Զրան-  
դի»-ն, ինչ արժեք, բարոյակրթական ինչ նշանակություն ունի  
այդ հեքիաթը: Ահա թե ինչ:

Ի հարկե այստեղ ամենից առաջ աչքի յե ընկնում մի շատ  
անսովոր ու ահուկի մոմենտ, այն, վոր գեռ սրբոցում, բարու-

բի մեջ գտնվող աղջիկը սարսափելի շատակեր է, խոչ հետո այդ աղջիկը մարդակեր հրեշ է դառնում, ուտում է իր ծնողներին և փորձում է ուտել իր հարազատ յեղբորն էլ: Այդ շատ է անսովոր, անբնական: Բայց հեքիաթի համար հենց անսովորն ու անբնականն է սովորական ու բնական: Այլ կերպ հեքիաթ չի լինի, այլ կլինի պարզ, իրական պատմվածք, իրական խարակտերներ, իրական հանգամանքներում: Յեղ չե՞ վոր մարդակերութունը բոլորովին չլրացած մի բան չե՞նույնիսկ իրական մարդկային կյանքում, իսկ հեքիաթի համար առավել է: Բայց Չանգի-Չրանգի հեքիաթում կարևորը և եյականը վոչ այնքան մարդակեր քրոջ մոմենտն է, այլ նրա յեղբոր խիզախութունը, հնարալիտութունը և առաքինութունը: Հեքիաթի հերոսը, մարդակեր աղջկա յեղբայր Թաթուխը, յերբ հեռանում է անից, վորդեպրվում է անդամակ և քաջքերի կողմից կուրացած, ազատ բնության գրկում ապրող մի դույզ ամուսիններին, վորոնք ապրում են իրենց վոչխարի հոտով:

Չնայած իր նոր ծնողների պատվերին, վոչխարն արածացնելու գնալիս՝ միտջ աջ և վոչ ձախ սարք տանելու մասին, Թաթուխը խիզախում է յերկու սարերն էլ գնար Չախ սարում նա թեև իր ծնողներին կուրացնող քաջքերի կողմից բռնվում է, բայց հետո իր հնարագիտությամբ ազատվում է՝ վոչնչացնելով նրանց և ապա վերադարձնում՝ իր ծնողների ուղեքերը, տեսողութունը: Իսկ աջ կողմի սարը գնալիս Թաթուխը հանդիպում է մի անոռի գայլաման գաղանի, նրա յերկուսքի պահելու Այստեղ էլ խիզախ յերիասասարը մի հնարքով աղատվում է այդ գաղանից, պահելով ու իր հետ բերելով նրա նորածին յերեք ձագերից յերկուսին, վորոնց և անվանում է Չանգի-Չրանգի: Խիզախությամբ ու ճարպիկությամբ բերված այդ յերկու գաղանիկներն էլ հնազայում դառնում են Թաթուխի հավատարիմ պաշտպանները՝ ամենամեծական մոմենտին հասնում ու ազատում իրենց սիրելի տիրոջը՝ նրա հրեշ քրոջից և վոչնչացնում են այդ մարդակեր աղջկան, վոր սուկալի աղետ իր վոչ միայն իր ծնողների, այլև վոչ շրջապատի համար:

Մի կողմից յերիասասարդ Թաթուխի մարդասիրութունը (կույր ամուսիններին վորդեպրվելը և նրանց տեսողութունը բժշկելը), խիզախութունն ու ճարպիկութունը՝ ամենասարսափե-

լի մահացու վտանգներից ազատվելու, մյուս կողմից վայրի գազանի ձագերին մեծացնելը և նրանց հավատարմութունը մարդուն, ոգնելով վերջինիս շարությունը վոչնչացնելու գործում՝ անհայտ է «Չանգի-Չրանգի» հեքիաթի իմաստը, նրա բարոյախոսութունը: Բացի այդ, ուշադրով է նաև մի շատ աննշան ու անկարևոր թվացող մոմենտ: Յեթե հախորդ հեքիաթում («Յեղեղնուհի») Պեղեցիկի ու Բարու մարմնացումը հանդիսացող Յեղեղնուհին դանադան կերպարանափոխության մեջ ապրում է, չի վոչնչանում, ապա այս հեքիաթում ցույց է տրված, վոր Չարն էլ այդպիսի կենսունակութուն ունի և վոր Չարը վոչնչացնելու համար՝ նրա ամենաչնչին մնացորդն անգամ չպետք է խնայել: Այդ պատկերված է հեքիաթում հեռակալ մոմենտում: Հիշենք այն Չանգի-Չրանգին, վրա յեն հասնում այն մոմենտին, յերբ մարդակեր աղջիկը յերբորդ ծառն է կտրում, վոր յեղբորն ուտի, Թաթուխն իր հավատարիմ գայլածին շնորին պատվիրում է՝ «հենց հուսի տվեք, հենց կուլ տվեք, վոր մի պուռ արյուն կաթի»: Իսկ այդ պուռ արյունը՝ կաթում է մի տներև վրա: Թաթուխը վերցնում է արյունստ տերևը, իր ծայն և դնում, բայց մարդակեր հրեշ աղջկա արյան այդ կաթիլը դառնում է «մի անագին ոճ» և փորձում է յայթել Թաթուխի կողորդը ու յեղդել նրան: Թաթուխն իսկույն նկատում է դեն և շարտում ոճը, վոր «ամեն վայրկյանում հաստանում, յերկարում եր, վոր վիշաղ դառնա»: Ապա Թաթուխը դիմում է իր հավատարիմ պաշտպաններին.

— «Չանգի-Չրանգի, հենց հուսի տվեք, հենց կուլ տվեք, վոր վոչ մի պուռ արյուն չկաթի: Ծնեքն այսպես էլ արին, և վիշաղ աղջկա հետքը կորցրին»:

Հեքիաթի իմաստը շատ է պարզ ու ցայտուն: Չարը դարձյալ խաղաղ պարտվում է, իսպառ վոչնչացվում, հաղթանակում է Բարին՝ խիզախության, անվեհերության և հնարալիտության շնորհիվ: Ինչքան էլ ստրասիելի մոմենտներ կան այս հեքիաթում, այնուամենայնիվ մահուկ պատանի ընթերցողը (եղ չենք խոսում Յերվ, Ղաղարյանի և նրա հասակի ընթերցողների մասին) չի վախենա, վորովհետև հեքիաթն ընթերցելիս նրան ուղեկցում է հեքիաթի անվախ, քաջասիրտ հերոս Թաթուխը:

Սոցիալական բարոյախոսության խորը լիցքով են հյուսված

Աղայանի մյուս բոլոր հեքիաթներն եւ Նշենք գրանցից մի քանիսի ընդհանուր գծերը միայն: Իրենց տարբերություններով հանդերձ՝ Աղայանի բոլոր հեքիաթներն եւ միանում են մի շարք ընդհանուր գծերով՝ համաձայն այն ընդհանուր հիմնական նպատակի, վոր հետապնդել է հեղինակը: Իսկ այդ նպատակը յիշել է «հեքիաթով հեքիաթական աշխարհը մտցնել յերեսայինն և այդ աշխարհում կրօնորական գեր շտալ, այլ ներգործական, վոր յերեսան էր յերեսակայությամբ մտնի հերոսի գերի մեջ, այն անի, ինչ վոր հերոսն է անում, նրա պես անվեհեր, նրա պես հնաքապետ, նրա պես վեհանձն ու ազնիվ» — Այսպես ընտելացրելով իր նպատակագրումը, Աղայանն իր բոլոր հեքիաթներում հետևողականորեն իրականացրել է այն մեծագույն հանդուրժյամբ: Նրա հեքիաթները հերոսները բոլորն եւ հերքուլեայան խիզախություն, անվեհերություն ունեն և անպայման հաղթում են ամեն տեսակի թշնամիների, հնարագիտությամբ ազատվում ամենավառնազավթի գրությունից: Յեւ ուշագրավ է, վոր այդ գրական հերոսները մեծ մասամբ աշխատավոր ժողովրդից են ծնված, իսկ յեթի իրենց ծագումով ու գրությամբ պատկանում են թագավորական տոհմին, ապա հենց այդպիսիներն եւ իրենց վարքով, վերաբերմունքով վոչնչով նման չեն ժողովրդի գլխին նստած՝ իրական դաժան ու շար աւերերին, թեկուզ կրկնապիսիներն նրանց անունները և հագուստները: Արինակ, Անահիտը վոչ միայն աշխատասիրության ու ասաքինության մարմնացումն է, այլև արիասիրտ է ու քաջ, նա գործով գնում է և զենքի ուժով՝ անձամբ կովելով խորտակում է Պերոս քաղաքի ստորերկրյա գոխքը, տանջանքից ու վաչնչացումից ազատելով անթիվ մարդկանց: Արիասիրտ է նաև Արևատը, նա չի վախենում, յերբ իմանում է, վոր իրեն բերել են թագավորի վիշապոս վարդուն տալու իրեն կերակուր: Վիշապին կերակուրով տեսնելով Արևատի գեղեցիկութունը, ախտաւում են նրան, ուղում են ազատել և նրա վախարեն վախենում են վիշապի սենյակի դուռը քայ անել: Իսկ Արևատն ասում է. «Հարկավոր չի, ավեր ինձ այս գոտերի բանավերջները, դուք գնացեք, յես վիշապից չեմ վախենում»<sup>1)</sup>: Յեւ յերբ ներս է մտնում, սկզբում անից սարսուղ

<sup>1)</sup> «Հեքիաթներ», էջ՝ 87:

և, բայց հետո արիանում է և Արևատը անունից հրամայում է վիշապոսին՝ զուրս դալ իր խորխից: Նրա խոսքից պատվում է ոճի խորիը և գուրս և գալին մի հրաշալի մանուկ՝ Ռձամանուկը, վորի հետ յերջանիկ սիրով ամուսնանում է Արևատը: Գրուցադնուէի յե մանավանդ Արեղնադանը. նա թագավորին ազատում է հսկա վայրի արջից. «զու ժամանակին դյուցազանց կարող էլնհնու և հենց այժմ ել մի փոքրիկ դյուցազն էս», ասում է թագավորը նրան այդ զեպքի տաթիվ: Արեղնադանն ավելի արիասիրտ աղջիկ է, վոր հետո տղա չե դանում, ընկնում է կախարդական աշխարհ, անմահական ջուր է բերում և վերակենդանացնում է Քարե քաղաքը, վոչնչացնելով քաղաքը քարացնող կախարդին՝ հրեշ պառավին, խելիով ու ծովը նետեքով նրա շար կախարդական գավազանները և շար վեգիների ու նրանց արքանյակները իշխանությունը վերացրեց աշխարհից»:

Մի այլ հեքիաթի հերոս, — Գուրջեն անունով («Մանկ. աշխ. կամ Մութ և Լույս աշխարհները»), խիզախում է իջնել տեղիկ հորը, հրեշ զեին սպանում և ազատում է իր սիրած աղջկան՝ Աննամանին, հետո ընկնում է Մութ կամ Ներքին աշխարհը, ուր մարդիկ աստապում են ջրի պակասությունից «մի անագին վիշապի» պատճառով, վորը ըուն է զրել քաղաքի միակ աղբյուրի ակունքի վրա, թույլ չտալով, վոր ջուրն աստաորեն հոսի: Գուրջենը խիզախությամբ սպանում է շար վիշապին, ազատում է թագավորի աղջկան կորստից, իսկ ամբողջ ժողովրդին՝ այդ շար վիշապի իշխանությունից և հետո «թոշուները մոր» թեկերին նստած Մութ աշխարհից նորից գուրս և գալիս Լույս աշխարհը:

Ռշագրավ է մի ուրիշ հերոս՝ դա Մանուկ-խանն է, «մի տասնեփուռ տարեկան պատանի, վոր մարդկանց սրտերի խորքերն է թափանցում, նրանց վատ արարքները յերեսներին զարկում է հրամայում իր փառաշներին, վոր ձեծեն անխնա և տուկանք ամեն հանցավորներից»: Յեւ «շատերին, վորոնք զրկված էյին, խելձ էյին և թշվառ, նրանց ել կանչում եր, մխթարում, խրատում և հավաքած տուգանքներից մի բան տալիս, վոր տանեն իրենց պակասությունը հոգան»:

Ահա այսպիսի բարոյախոսությամբ են ստգորված Աղայան

նի բոլոր հեքիաթները, վորոնցով պատկարակվել են բաղմաթիվ սերունդներ՝ անցյալ դարի 80-ական թվականներից սկսած մինչև մեր սերը:

Առանձնապես հեքիաթալրութեան, մանկական բանաստեղծութեան, ինչպես և դուրսդուրսութեան բնագավառում Աղայանն ունեցավ իր գործի մեծ շարունակողն ու զարգացնողը՝ հանձին Հ. Թումանյանի: Աղայանն ու Թումանյանը մեր գրականութեան մեջ հայտնի չեն իրենց անորինակ մտերմութեամբ, հոգեհարազատութեամբ, վորն արտահայտութեանն էր նրանց աշխարհադասման ու աշխարհաբնութեան և դրական ստեղծագործական ներքին հարազատութեան:

Թումանյանն իր ստեղծագործութեան սկիզբն առնում է Աղայանից: Անկասկած Աղայանի ընկերական հարապարտութեան տակ և աճել, հասակ առել Թումանյանը: Այդ մասին վկայում են բոլոր ժամանակակիցները և ինքը Թումանյանը:

«Հովհաննես Թումանյանին ճանաչար՞ ցույց տվողն Աղայանն էր, վոր դեկապարեց նրան մինչև կատարյալ հասունութեան», — գրել է Շիրվանդադեն իր մեմուարներում<sup>1)</sup>:

«...իր հոգևոր ստնն էր Հովհաննես Թումանյանը», — նկատել է դարձյալ Շիրվանդադեն<sup>2)</sup>: Աղայանը վորպես մանկական գրող ու հեքիաթագիր «ունեցավ և իր հետևողները, վորոնց մեջ, ի հարկե, առաջին տեղը Հովհաննես Թումանյանն է: Իսկ դա ինքնատիւնքան քիչ բան չէ»<sup>3)</sup>: — իրավացի կերպով նշել է Շիրվանդադեն:

Գրական արյունակցական այդ կապի վրա յիլ հիմնված էր Աղայանի և Թումանյանի հիասքանչ մտերմութեանը, վոր, ինչպես նկատեցինք, նմանը չունի մեր գրականութեան պատմութեան մեջ:

Անժխտելի չե, վոր Թումանյանի ստեղծագործութեան մտավորաբանութեան ակունքներից մեկը յիցել է Աղայանի ստեղծագործութեանը. հենց ինքը՝ կենդանի Աղայանը, վորից շատ բան է ստխրել Թումանյանը:

Աղայանը հիանալի որինակ և յեղել իր «Ասլան Բալայի»

<sup>1)</sup> Շիրվանդադեն — Կյանքի թովից, ա. էջ՝ 306:

<sup>2)</sup> Նույն տեղ, էջ՝ 309:

<sup>3)</sup> Նույն տեղ էջ՝ 309:

համար, ժողովրդի բանավոր ստեղծագործութեան գանձերն սղտագործելու, ժողովրդական գրույցները, ավանգուսթյունները, յերգերը գեղարվեստորեն մշակելու, գրավոր գրականութեանը ֆոլկլորի գանձերով հարստացնելու գործում:

Աղայանի ամբողջ ստեղծագործութեանը ներթափանցված է ֆոլկլորով: Արտվյանից հետո, հայ գրականութեան պատմութեան մեջ Աղայանը յերկրորդ մեծ հեղինակն է, վորն անչափ մտ և յեղել ժողովրդի բանավոր ստեղծագործութեանը և շատ լայնորեն ու գրական բաղմաղան ձևերում ոգտագործել և այն իր ստեղծագործութեան մեջ:

Աղայանի վողջ ստեղծագործութեանը հիմնված է ֆոլկլորի վրա: Հենց նրա վերական գործերը («Արուսթյուն և Մանվել» և այլն) լի չեն ֆոլկլորի գանձերով, իսկ մյուս ժանրի յերկերի (բանաստեղծութեաններ, հեքիաթներ, շափածո գրույցներ է) ստեղծագործական աստղձն ամբողջապես վերցված է ֆոլկլորից:

Այդ ամենից հասկապես կարելի է հիշել, վոր ժողովրդական բանահյուսութեան և Աղայանի ստեղծագործութեան միջև յեղած սրբանական կապի ամենալայն արտահայտութեանը նրա մշակած հեքիաթներն են: Ոգտագործելով ֆոլկլորի ամենահարուստ, ժողովրդի հոգեկան գանձերով լի այս բաժինը՝ հեքիաթները, Աղայանը ցույց է ավել իսկական գեղարվեստագետին հատուկ մեծ ինքնուրույնութեան, հմտութեան, նոր եջբաց անելով մեր կրթիկ գրականութեան պատմութեան մեջ: Աղայանից հետո և նրա ազդեցութեամբ միայն հետագայում սկսվեց ժողովրդական հեքիաթների գրական-գեղարվեստական մշակումը (Թումանյան, Բասնակյան):

Այն սխալ կարծիքն է արտահայտված յեղել (Կեվոն Մանվելյանն իր «Թուսահայ գրականութեան պատմութեան» մեջ, պրակ դ. 1911 թ. էջ 36), թե իբր «Անահիտ»-ի սյուժեն Աղայանը վերցրել է Թադիսայանի «Վեպ Ղարսեանի» վերնագրով հեղինակութեանից և վաղ թե՛ ժողովրդական վարյանաներից:

Այդ կարծիքը լսելով՝ Աղայանը պատրաստվում էր հանդես գալ և հերքել այն, բայց ժամանակ չունեցավ, անապատելի մահը խանդարեց նրան: Բայց նրա փոխարեն՝ Լ. Մանվելյանի հայտնած այդ կարծիքը հերքեց Հ. Թումանյանը 1912 թ. սեպ-

տեմբերին, գրելով մի հասուկ հոդված Աղայանի «Անահիտ»-ի մասին<sup>1)</sup>։

Թումանյանն իր այդ հոդվածում պնդում ու հաստատում է, վոր Աղայանի «Անահիտ»-ը ժողովրդական հեքիաթ է վորի մի վարյանան էլ «Փեշաղը վոսիլը յա» վերնագրով տպված է նավասարդյանի հեքիաթների ժողովածվում, են ել Լոռու վարյանուր, վոր Աղայանը գիտեր մանկուց, —ասում է Թումանյանը և հիշատակում այդ հեքիաթի վրացական վարյանար՝ «Թագավորն ու արհեստավորը» վերնագրով, տպված «Աղբյուր» ամսագրում՝ 1883 թվին (№ 1)։

«Աղայանը, —վկայում է Թումանյանը, —մինչև անգամ պընդում էր, վոր Թաղիադյանի վեպը փոխադրություն է իտալականից, տալիս էր իտալացի գրողի անունը և խոստանում էր ապացուցել։ Աղայանի «Անահիտ»-ի և Թաղիադյանի «Վարսենիկ»-ի մեջ, —շարունակում է Թումանյանը, —չիս են նմանությունը, ինչ վոր կա հայ ժողովրդական հեքիաթի և Աղայանի գործի մեջ, վոր նույնն է ամենայն հարադասությամբ։ Աղայանն էդ նյութն առել է մեր ժողովրդական հեքիաթից, վոր ջատագովում է արհեստը։ Մի հեքիաթ, վոր ունեն ըստ ժողովուրդներից, ըստ էյության նույնը, մանրամասնությունների մեջ իրենց առանձնահատուկ յերանգով ու կյանքով։ Ինչպիս գրեթե ըստը հեքիաթները»։

Վերջում Թումանյանը վկայում է նաև այն, վոր «Աղայանը գիտեր էդ հեքիաթի հայկական յերկու վարյանար։ Ես ըստեյիս յես իմ ձեռքի տակ ունեմ նույն հեքիաթի վեց վարյանար։ Մի վարյանար էլ կա ուստերին լեզվով գրի առած իբրևի վայ ժողովրդական հեքիաթ, վորը ուրիշ բան չե, այլ հենց Աղայանի «Անահիտ»-ի թարգմանությունը»։ «Իսկ թե ինչու յե Աղայանը ևս հեքիաթին ավել պատմական գրույցի կերպարանք ու փոխադրել Աղվանք՝Վաչագան թագավորի ժամանակները, էդ էլ կարելի յե պարզ տեսնել են «Հավիկվածք»-ից, վոր գրել է նույն (այսինքն 1881 թվի) հրատարակության վերջում»։

Թումանյանի այդ հիմնավոր ու ճիշտ պնդումը մեր բանասիրության մեջ առաջին անգամ լայն ու խորը ուսումնասիր-



Ղ. ԱՂԱՅԱՆ ՅԵՎ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

<sup>1)</sup> Հ. Թումանյան — Ղ. Աղայանի «Անահիտ»-ը, «Հորիզոն», 1912 թ. № 205.

ընթացումը հաստատել է մեր խորհրդային յերիտասանող բանասեր-Ֆոլկլորիստ Արամ Ղանալանյանը, վորը միաժամանակ տվել է «Անահիտ»-ի հաջող վերլուծությունը իր «Ղ. Աղայանի «Անահիտը» հոդվածում, տպված ԱՐՄՖԱՆ-ի Գրականություն և Լեզվի Ինստիտուտի «Տեղեկագրի» 1-ին գրքում՝ 1938 թվին:

«Անահիտ»-ում Աղայանը միացրել է՝ Աղվանների թագավոր Վաչագանի ու, համաձայն ավանդություն, նրա ժամանակում յեղած չար և դիվական աղանդների մասին պատմական ավանդությունը, արհեստի նշանակությունը նվիրված ժողովրդական հեքիաթների հետ:

Վաչագանի ու նրա «ժամանակումն յեղած չար ու դիվական աղանդների մասին» հայտնի պատմական աղբյուրներից մեկը՝ Մովսես Կաղանկատուացու տված տեղեկությունը, Աղայանը կցել է իր գրույցի առաջին հրատարակությունը, իբրև հավելված, հետևյալ վերնագրով, «Մովսես Կաղանկատուացու պատմությունից մի ծանոթություն Վաչագանի ժամանակումն յեղած չար և դիվական աղանդների մասին»:

Մ. Կաղանկատուացին հաղորդում է, վոր Վաչագանը իր ժամանակում տարածված այդ չար և դիվական աղանդների (հիշված են հատկապես զրանցից յերկուսը՝ «մատնահատների» և «դեղատունների» աղանդները) վերացման հիմնական միջոց համարում էր ուսման—կրթության և քրիստոնեություն տարածումը աղանդավորների մանուկ սերնդի մեջ: Այդ նպատակով—ասում է Մ. Կաղանկատուացին,— «Վաչագանը հրամայեց ժողովել կախարհներին, դյուժերին, քուրմերին մատնահատների և դեղատունների մատնակիցներին և դպրոցներում ընդունել, սովորեցնել նրանց աստվածեղեն ուսումը և ընտելացնել քրիստոնեական կյանքին, վոր հաստատվեն նրանում»:

Անկասկած է, վոր Աղայանն ահա պատմական այս տեղեկությունն է ոգտագործել, վորպես իր «հին զրույցի» աղբյուրներից մեկը: Իսկ մյուս, ավելի հիմնական աղբյուրն Աղայանի համար յեղել են՝ արհեստի նշանակությունը նվիրված այն հեքիաթները, «վորոնցից, ինչպես վկայում է Թումանյանը, Լոուս վարիանտը, Աղայանը գիտեր մանկուց»:

Յեվ իրոք, յերբ համեմատում ենք այս հեքիաթի Աղայանին ծանոթ հայկական մի վարիանտն<sup>1)</sup> ու վրացականը («Թագավորն ու արհեստավորը» վերնագրով՝ 1883 թ. տպված «Աղբյուր»-ի № 1-ում) և Թաղիադյանի «Վեպ Վարսենկան»-ը՝ Անահիտ»-ի հետ, տեսնում ենք, վոր իրոք, ինչպես ճիշտ նկատել է Թումանյանը՝ Աղայանի «Անահիտ»-ի և Թաղիադյանի «Վարսենկի» մեջ չկա են նմանությունը, ինչ վոր կա հայ ժողովրդական հեքիաթի և Աղայանի գործի մեջ, վոր նույնն է ամենայն հարագատությունը:

Արհեստի նշանակության մասին յեղած հեքիաթի վրացական ու հայկական վարիանտներն ինչքան ել ասրբեր են, բայց ընդհանուր առմամբ հիմնական իդեայի և սյուժետի տեսակետից նման են կամ գրեթե նույնն են: Ակնհայտ է, վոր Աղայանն իր «Անահիտ»-ը գրելիս նրա սյուժետը և իդեան վերցրել է ժողովրդականից:

Յեվ իդուր չե, վոր «Անահիտ»-ի առաջին՝ 1881 թվի հրատարակության շապկի վրա նշված է. «Հին զրույց, աղբյուրն բանավոր զրույցներից առած»: Բացի այդ, նա իր այս ստեղծագործության վորպես բնաբան, հիշյալ խոսքից հետո, գրել է Խորենացուց վերցրած հետեվյալ քաղվածքը.

«Պատմեցից ձեզ... զրույցս անգիրս յավանդութենեն, ի մեզ ասեալ, զոր բագումք ի գեղջկաց զրուցեն միշտլ ցայժմ»:

Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր Աղայանն ոգտվել է հայ ժողովրդի «աղբյուրն բանավոր զրույցներից», բայց վոչ Թաղիադյանից, վորի «Վեպ Վարսենկանը» շատ ավելի յս տարբեր «Անահիտ»-ից, քան ժողովրդական վարիանտները:

Յեվ վոչ միայն «Անահիտ»-ը. Աղայանի բոլոր հեքիաթներն ել վերցված են ժողովրդից, ըստ վորում գգալի չավով վոչ գրավոր, այլ բանավոր աղբյուրներից: Ինքը, Աղայանն անձամբ լսել է ժողովրդից, հեքիաթասացներից: Դեռ մանկության տարիներում լսածը վառ կերպով մնացել է նրա հարուստ ու սուր հիշողության մեջ, իսկ հետո, 80-ական թվերի սկզբից սկսել է յեռանդուն կերպով մշակել իր հավաքածուներից լավագույնները, մշակել վարպետությունը ու ճաշակով, հասցնելով բարձր գեղար-

<sup>1)</sup> Տե՛ս՝ Տ. Նավասարդյան — Հայ ժողովրդական հեքիաթներ, 5-րդ զիբը 1889 թ. «Փեշակը վոսկի ա» հեքիաթը, էջ՝ 76—78:


վեստահանութեան, ցույց տալով իր ինքնուրույն ստեղծագործական մեծ կարողութիւնը, հատկապէս այս բնագավառում:

Ֆոլկլորի և գրականութեան միջև կապի զարգացման ասպարիզում Աղայանն անկասկած հսկայական դեր և կատարել շատ հետեղականորեն շարունակելով հայ նոր գրականութեան նախահոր՝ Ս. Աբովյանի՝ զի՞ճը՝ զեղարվեստական ստեղծագործութիւնը ժողովրդի հոգեւոր զանձերով հարստացնելու, գրականութիւնը ժողովրդին հարազատ դարձնելու և նրան ծառայեցնելու դեմոկրատական գի՞ճը, վորն անշեղօրէն անցել ու զարգացել և հետագա մյուս գրողների՝ Պետրոսի, Սունդուկյանի, Հովհաննէս Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Իսահակյանի, զասակարգային-հեղափոխական հիմքով նաև՝ Հ. Հակոբյանի ու Շ. Կուրղինյանի ստեղծագործութիւններում:

Ժողովրդական բանահյուսութեան հետ Աղայանի ունեցած այս սերտ որգանական կապն և նրա ստեղծագործութեան ժողովրդայնութեան հիմքը: Հենց նույն այս կապը և ժողովրդի կյանքի նկատմամբ ունեցած հարազատութիւնը, ժողովրդին կրթելու, լուսավորելու, հոգեպետ-մտավորապէս բարձրացնելու Աղայանի ունեցած նվիրական ձգտումը՝ խթան են հանդիսացել նաև այն բանի համար, վոր Աղայանը շատ մեծ գործ և կատարել հայոց լեզվի պատմութեան ու բարբառների ուսումնասիրութեան և մեր գրական լեզվի զարգացման գործում:

Աղայանը յերկարատե՛ ու հետեղական պայքար և մղել գրական լեզվի զարգացման համար, այս բնագավառում ևս հավասարմութեամբ շարունակելով Ս. Աբովյանի և Մ. Նալբանդյանի գեմոկրատիզմի գի՞ճը:

Նախ նկատենք, վոր 19 և 20-րդ դարերի հայ գրողներից ու մանկավարժներից թերևս վոչ վոք այնքան շատ ու այնքան նվիրվածութեամբ չի զբաղվել լեզվի ու լեզվաշինարարութեան հարցերով, ինչքան Աղայանը: Նա մի քանի տասնյակ հոգվածներ ու մի քանի բրոշյուրներ և գրել հայոց լեզվի պատմութեան, բարբառների ու գրական լեզվի, նրանց զարգացման խընդիւրների և մասնավորապէս ուղղագրութեան ու մայրենի լեզվի ուսուցման մեթոդիկայի հարցերի շուրջը: Լեզվի վերաբերյալ Աղայանի գրածները յեթե ի մի հավաքվեն, կկազմեն մի մեծ հատոր:



Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, Պ. ՊՈՒՇԵՍԱՆ ՅԵՎ Ղ. ԱՂԱՅԱՆ

Աղայանը շատ և զբաղվել է այ ժողովրդական բարբառնե-  
րից մի քանիսի (առանձնապես Ղարաբաղի) ուսումնասիրու-  
թյամբ և փորձել կազմելու նրանց քերականությունը: Իր՝ «Մ  
տառի հնչյունը Ղարաբաղի բարբառում» հոդվածում Աղայանը  
հայտնում է այդ բնագավառում կատարած իր մի աշխատանքի  
մասին:

«Ահա քանի ժամանակ է, վոր ուսումնասիրում եմ Ղարա-  
բաղի բարբառը և արդեն վերջացնելու վրա յեմ նրա մեկ մա-  
հալի, այն է՝ Սահանու բարբառի քերականությունը և բառա-  
բանը, վորից հետո սկսելու յեմ մյուս մահալներինը և քաղաքինը»:

Յեզ իրոք, Աղայանի արխիվում (Պետ. Գրակ. Թանգարա-  
րանում) նախնական սեպտեմբր վիճակում մնացել է նրա այդ բա-  
վական մեծ ծավալի աշխատանքը, վոր արժեքավոր է հայ բար-  
բառագիտության համար:

Թե իր գեղարվեստական յերկերի լեզվով, թե լեզվի հար-  
ցերին վերաբերող իր հոդվածներով և թե մայրենի լեզվի ու-  
սուցման համար իր կազմած դասագրքերով Աղայանը կղերա-  
պահպանողական բանակի հարձակումներից հեռուղականորեն  
պաշտպանել ու կիրառել է հայ գրական լեզվի զարգացման այն  
առաջադիմական-դեմոկրատական սկզբունքները, վորոնց համար  
նրանից առաջ պայքարում էին Արովյանն ու Նալբանդյանը,  
կանգնած լինելով գրականության, ուրեմն և գրական լեզվի ժո-  
ղովրդայնության զիրքերում:

### III. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Յարական դեպքոտի դմի ձերաններում ճնշված բազմաթիվ  
ազգությունների, այդ թվում և հայերի կուլտուրական-դպրոցա-  
կան դարձը թշվառ պահեք ունեք:

Այդպես եր միշտ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը՝  
բայց առաջիկ վատ եր գրությունը 60—70—80-ական թվական-  
ներին: Յեղած կրթությունն էլ ամբողջովին վանական, կղե-  
րական-կրոնական բովանդակություն ունեք:

«Հայոց դպրոցներում, ուր ել վոր կային, — գրել է Աղա-  
յանը, — գիտությունն չեր ավանդվում, այլ միայն կրոն և հայոց  
լեզու: Գիտության տարերք կարելի յեր ձեռք բերել միմիայն  
գիմնադիաներում, բայց գիմնադ ել մեկ հատ կար և այն ել մի-  
այն Թիֆլիսում: Մյուս տեղերում կային միայն «գավառական»  
ասված դպրոցներ...»

Մեր դպրոցները տալիս էին մտնիք և տիրացուներ, իսկ  
պետության դպրոցները՝ գրագիրներ...»:

— «Հին վանական կրթությունը ևս մի տեսակ սարկական  
լուծ եր, պետք եր նրանից նույնպես ազատվել: Կյանքը և գրա-  
րոցը մի ուղղությամբ չէին ընթանում, դպրոցում լավածը՝  
հերքվում եր կյանքի մեջ»<sup>1)</sup> — նկատում է Աղայանը: Նա տես-  
նում եր դպրոցում տիրապետող կրթական-դաստիարակչական  
սիստեմի ահռելի ծանրությունն ու կործանարար բնույթը մա-  
նուկ սերնդի համար: Նա տեսնում եր, վոր դպրոցը վոչ թե  
կրթարան է, այլ տանջարան, պատժարան մանուկների համար,  
վորովհետև նրանում աշխատողները վոչ թե ուսուցիչներ ու

<sup>1)</sup> Ղ. Աղայան — Մի յերես մեր նորագույն պատմությունից, 1891 թ.,  
հջ՝ 19—20, 26:

դաստիարակներ էյին, այլ դահիճներ: Յեւ յայտնաբերուեալ զայս անհատում ե Աղայանը, վոր կոչված եմ խարազանով սրբել, մաքրել մեր կրթութեան տաճարները բարոյական ավազակներէ: Այս զգացումն իմ մեջ մինչև ֆանատիկոսութեան հասավ»<sup>1)</sup>:

Հարկավոր եր անս գոյութեան ունեցող այդ սխառեմը վերջ վար անխնա քննադատութեան յենթարկել և ձեռնարկել այն՝ հիմնովին վերափոխելու զժվարին գործին: Ա

«Մանկավարժական ասպարիզում ինձ վիճակից յերկու իրարից տարբեր ուղղութեան դեմ պատերազմելու.— մի կողմից խալիֆայականի և մյուս կողմից կապիւրտը հետեղներէ և թարգմանողներէ»<sup>2)</sup>, — գրում ե Աղայանն իր մտայն: (Յեւ իր քննարկումը զպրոցական-մանկավարժական գործունեյութեանը յերկարատե ու համառ մի պատերազմ և այդ յերկու ուղղութեամբ, պատերազմ, վորն ընթացքում Աղայանը՝ հինը քանդելուն զուգընթաց, մեծ շինարարութեան և կատարել՝ ստեղծելով մի ամբողջական մանկավարժական-գաստիարակչական սխառեմ՝ իր բոլոր անհրաժեշտ տարրերով, մասնակ սերնդի կրթութեան ու գաստիարակչութեան վողջ գործի լրիվ ընդգրկումով: Ա

Աղայանի մանկավարժական գործունեյութեան ընթացիկ ե նրա գրական գործունեյութեան հետ միաժամանակ նա հենց սկզբից գործունեյութեան ասպարիզ մտով վոչ միայն վորդես գրող, այլև վորդես մանկավարժ:

«Յես գես Պետերբուրգում սեր ձգեցի մանկավարժութեան վրա ու մասնավորապես այդ նորածիլ ու թարմ գրականութեանը նվիրվեցի: Այդ գրականութեանն իմ հոյացքներէ մեջ հեղափոխութեան ձգեց, ամեն բանի վրա յես սկսեցի նայել բարոյակրթական տեսակետից, վորով իմ վիպական գրածներս անգամ ստացան այդ գրողը: Նոր էյին դուրս գալիս մին-մինի յետևից Ֆրեդրիխ, Պետալոցցու, Դիստերվեզի, Բեհրի թարգմանութեանները և ուսս մանկավարժների ինքուրույն գրածները: «Ուշիտել»<sup>3)</sup> (ուսուցիչ) պարբերական թերթը կարգում էյինք

ամենայն սիրով և հետաքրքրութեամբ, մանավանդ նրա փորձնական գասերը զանազան աւարկաներից»<sup>1)</sup>: Աղայանի այս վկայութեանն արդեն մեզ համար պարզում ե նրա մանկավարժական ուսուցանութեան արդյունքները:

Ուշագիւր քննելով Աղայանի մանկավարժական գործունեյութեանը և նրա կրթական-գաստիարակչական գաղափարները, մենք գալիս ենք այն յեղրակացութեան, վոր նրա հոյացքներն այս բնագավառում կազմակերպվել են յիւրոպական ու ուսուցան կրթիկ մանկավարժներէ յերկերի ազդեցութեամբ: Արեւել-տա-յեւրոպական մանկավարժութեանից նա յուրացրել և Ամաս կոմիտեի, Ժ. Ժ. Ռուսոյի, Պետալոցցու, Ֆր. Ֆրեդրիխ, Դիստերվեզի, ինչպես և ֆրանսիական լուսավորիչների գաղափարները, ուսուցանից՝ 50—60-ական թվականների լուսավորիչներէ (Չերնիշևսկի, Դոբրոլյուբով, Պետրի, ինչպես և Կ. Գ. Ուշինսկու, Պաուլսոնի, զգալի չափով նաև Լ. Տոլստոյի լուսավորական ու կրթագաստիարակչական հոյացքները: Ա

Սովորելով ուրիշներից Աղայանը, ի տարբերութեան իր ժամանակի հայ մանկավարժներէ, կուրորն չի հետևել, մեխանիկորեն չի կրկնել վերահիշյալ մանկավարժներին, այլ մեծ ինքնուրույնութեան ե հանդես բերել՝ նրանցից սգովելով, քննադատաբար վերցնելով այն, ինչ վոր անհրաժեշտ ու հարմար ե գտել հայերի կրթական գործի համար մեր կուրուրական գաղափարն ուղղակ պայմաններին համապատասխան:

Հանդես գալով այս բնագավառում, Աղայանը հայ իրակասութեան մեջ մեծ նախորդներ չունի, վորոնք մշակած լինեցին ինքնուրույն սխառեմներ: Հայ իրականութեան մեջ թի 30—40-ական և թի 50—60-ական թվականներին, — ինչպես գրել ե Աղայանը, — «մանկավարժութեանը ևս մի մշակված սխառեմ չունի: Ամեն վոք ինքը պետք ե շինել մի ամբողջութեան, ցրված նյութերից մի շենք շինելով»<sup>2)</sup>: Այդ տասնամյակներին հանդես յեկած Ալամարայանը, Թադիսայանը և Աբովյանը սկսել էյին պայքարը նոր գաղափար ու նոր մանկավարժութեան համար. բայց միայն սկսել էյին: Նրանք միայն նախակարգապետներ էյին,

1) «Իմ կյանքի զլխավոր դեպքերը», 1893 թ., էջ՝ 129:  
2) «Իմ կյանքի զլխավոր դեպքերը», էջ՝ 139:  
3) Նույն եր տեղում ուսս հայտնի մանկավարժ Ի. Ի. Պաուլսոնի (1825—1898) խմբագրութեամբ, 1861 թվից սկսած:

1) «Իմ կյանքի զլխավոր դեպքերը», էջ՝ 138:  
2) Նույն տեղ, էջ՝ 139:

գործն սկզբնավորողները, վորոնք բաց արին աշխարհիկ կրթութեան ու դաստիարակութեան «նախաշավիղը» միայն, իսկ գործի լայն ծավալումը, բուն ճակատամարտը սեղի ունեցավ 60—70-ական թվականներին, Աբովյանին ու Նալբանդյանին հաջորդած սերնդի շնորհիվ: Յեւ վայ նոր սերնդի շարքում հայ մանկավարժութեան ու դպրոցական գործի պատմութեան մեջ Լազարոս Աղայանը շատ ինքնատիպ և շատ նշանակալից դեմք է: Հետ-Աբովյանական, հետ-«Հյուսիսափայլ»-յան շրջանում հայ իրականութեան մեջ 19-րդ դարի յերկրորդ կիսում յերևան յեկան մանկավարժական մտքի մի շարք փայլուն ներկայացուցիչներ (Առ. Բահաթրյան, Սեդ. Մանդլինյան, Ս. Բեգնազարյան, Հ. Դուկասյան, Ն. Տ. Դեվոնդյան, Ավ. Բարսեղյան, Իս. Հարությունյան և ուրիշներ), բայց նրանցից վոչ մեկն այն մեծ դերը չի խաղացել հայ դպրոցական գործի, հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ, ինչպիսին վոր խաղացել և Աղայանը: Նա այս բնագավառում սովելի ինքնուրույն և քան վորևե ալ մանկավարժ հայտնի հայ մանկավարժներից: Ինքը, Աղայանը շատ մեծ նշանակութուն էր տալիս մանկավարժական գործում ինքնուրույն լինելու հարցին: Նա վնասակար էր համարում և ասում էր ուրիշների ասածի մեխանիկական կրկնութունը մանկավարժութեան բնագավառում: «Տասնհինգ-քսան տարվան գիտակցական փորձս ինձ վրա սրբազան պարտականութուն և թողնում,— գրել է Աղայանը, մեզ հետաքրքրող հարցի սուբիվ,— վոր իմ ձեռք բերած նկատողութուններս թողնեմ հետնորդներին իբրև ժառանգութուն... Յես չգիտեմ մեզանում, մի ուրիշը, վոր ինձնից շատ ավելի լինի սիրելիս այդ արվեստը (այսինքն մանկավարժութունը— Ա. Ա.): Բայց այդ մասնագիտութունը մանկավարժական մասնագիտութուն է, վոր նման չի աստղապետի ու բնագետի մասնագիտութեան»<sup>1)</sup>:

Ըստ Աղայանի հիմնականում ճիշտ դիտողութեան՝ «վոչ մի նշանավոր մանկավարժ մասնագետ չի յեղած»: Իսկ յեթե մասնագետներ են յեղել, նրանք մեծ մասամբ սահմանափակ ու կույր հետևողներ են յեղել ուրիշներին, չցուցաբերելով վոչ մի ինքնու-

<sup>1)</sup> Աղայան. — Գրադիտութուն ուսուցանելու ուղիղ ճանապարհը և նորանից խոտորվելը, «Վարժարան», 1883 թ., № 8, էջ՝ 25:

րոյնութիւն: «Մասնագետ մանկավարժներն ըստ մեծի մասին բխամիտ են լինում, ինչպես մասնագետ հայկաբաններն ու աստվածաբանները, նոքա միայն հետևում են սորան-սորան աղանդավորի մոլեռանդութեամբ, բայց նոր ստեղծելու շնորհ չեն ունենում»<sup>1)</sup>:

Ի պատիվ Աղայանի, նա հանդես է յեկել հենց այդ շնորհքով՝ «նորն ստեղծելու» և յեղած լավը կատարելագործելու անհուն շնորհքով ու յեռանդով:

Բայց Աղայանն իր մանկավարժական սխտեմը չկառուցեց յեվրոպական ու ուսսական մանկավարժներից յուրացրած գաղափարներով միայն, այլ և իր դպրոցական-ուսուցչական գործունեութեան փորձի հիման վրայ իր պրակտիկ աշխատանքի արդունքների և մանկավարժական գիտութեան յեզրակացութունների միացումով:

1869 թվին իր խմբագրութեամբ հրատարակվող «Արարատ»-ում տպված նրա «Խորհրդածութուն դաստիարակութեան վրա» նշանավոր հոդվածը թեև հեղինակի գրքային ուսուցմասիրութեան արդունք է, բայց շատ արժեքավոր: Իսկ հետագա տարիների նրա մանկավարժական յերկերն արդեն իրենց մեջ միացնում են ուսուցիչ, պրակտիկ մանկավարժ Աղայանի փորձը, նրա՝ մեծ մանկավարժների յերկերից յուրացրած գաղափարների, տեսական դրույթների հետ:

Այսպես 1870 թվի աշնանից, Աղայանը պրակտիկ ուսուցչական աշխատանք է կատարել՝ Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Յերևանում, Լարսապոլում (Շուշի) և այլն: Յեւ հենց այդ գործնական աշխատանքի ընթացքում էլ նա կառուցել ու զարգացրել է իր մանկավարժական, կրթա-դաստիարակչական սխտեմը:

Շատ վճռական նշանակութուն է ունեցել մասնավորապես Ալեքսանդրապոլում կատարած աշխատանքը՝ 1872—1876 թվերին: Հատկապես այս շրջանում Ալեքսանդրապոլը հանդիսանում էր հայ դպրոցական գործի կենտրոններից և մանկավարժական մտքի զարգացման ոջախներից մեկը, ուր համախմբվել էին Աղայանին ժամանակակից մի շարք անվանի մանկավարժներ՝

<sup>1)</sup> Աղայան. — Գրադիտութուն ուսուցանելու ուղիղ ճանապարհը և նորանից խոտորվելը, «Վարժարան», 1883 թ., № 8, էջ՝ 25:

գործն սկզբնավորողները, վորոնք բաց արին աշխարհիկ կրթութեան ու դաստիարակութեան «նախաշավիղը» միայն, իսկ գործի լայն ծավալումը, բուն ճակատամարտը սեղի ունեցավ 60—70-ական թվականներին, Արուսյանին ու Նալբանդյանին հաջորդած սերնդի շնորհիվ: Յեւ այս նոր սերնդի շարքում հայ մանկավարժութեան ու դպրոցական գործի պատմութեան մեջ Դադարոս Աղայանը շատ ինքնատիպ և շատ նշանակալից դեմք է: Հետ-Արուսյանական, հետ-«Հյուսիսափայլ»-յան շրջանում հայ կրականութեան մեջ 19-րդ դարի յերկրորդ կիսում յերևան յեկան մանկավարժական մտքի մի շարք փայլուն ներկայացուցիչներ (Ս. Բահաթրյան, Սեդ. Մանդինյան, Ս. Բեգնազարյան, Հ. Դուկասյան, Ն. Տ. Դեվնդյան, Ավ. Բարսեղյան, Իս. Հարությունյան և ուրիշներ), բայց նրանցից վոչ մեկն այն մեծ դերը չի խաղացել հայ դպրոցական գործի, հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ, ինչպիսին վոր խաղացել է Աղայանը: Նա այս բնագավարում ալեկի ինքնուրույն և քան վորեւե այլ մանկավարժ հայտնի հայ մանկավարժներից: Ինքը, Աղայանը շատ մեծ նշանակութիւն էր տալիս մանկավարժական գործում ինքնուրույն լինելու հարցին: Նա վստահար էր համարում և ասում էր ուրիշներին ասածի մեխանիկական կրկնութիւնը մանկավարժութեան բնագավարում: «Տասնհինգ-քսան տարվան գիտակցական փորձս ինձ վրա սրբազան պարտականութիւն և թողնում,—զրել է Աղայանը, մեզ հետաքրքրող հարցի առթիվ,— վոր իմ ձեռք բերած նկատողութիւններս թողնեմ հետնորդներին իբրև ժառանգութիւն... Յես չգիտեմ մեզանում, մի ուրիշը, վոր ինձնից շատ ավելի լինի սիրելիս այդ արվեստը (այսինքն մանկավարժութիւնը—Ս. Ա.): Բայց այդ մասնագիտութիւնը մանկավարժական մասնագիտութիւն է, վոր նման չէ աստղապետի ու բնագետի մասնագիտութեան»<sup>1</sup>):

Ըստ Աղայանի հիմնականում ճիշտ գիտողութեան՝ «վոչ մի նշանավոր մանկավարժ մասնագետ չի յեղած»: Իսկ յեթե մասնագետներ են յեղել, նրանք մեծ մասամբ սահմանափակ ու կույր հետևողներ են յեղել սերիշներին, չցուցաբերելով վոչ մի ինքնու-

<sup>1</sup> Աղայան. — Գրադիտութիւն ուսուցանելու ուղիղ ճանապարհը և նորանից խոտորվելը, «Վարժարան», 1883 թ., № 8, էջ՝ 25:

րույնութիւն: «Մասնագետ մանկավարժներն ըստ մեծի մասին բխումն են լինում, ինչպես մասնագետ հայկաբաններն ու աստվածաբանները, նոքա միայն հետևում են սորան-նորան աղանդավորի մոլեռանդութեամբ, բայց նորս ստեղծելու շնորհ չեն ունենում»<sup>1</sup>):

Ի պատիվ Աղայանի, նա հանդես է յեկել հենց այդ շնորհքով՝ «նորն ստեղծելու» և յեղած լավը կատարելագործելու անհուն շնորհքով ու յեռանդով:

Բայց Աղայանն իր մանկավարժական սխտեմը չկառուցեց յեվրոպական ու ռուսական մանկավարժներից յուրացրած գաղափարներով միայն, այլ իր դպրոցական-ուսուցչական գործունեյութեան փորձի հիման վրայ իր պրակտիկ աշխատանքի արդյունքների և մանկավարժական գիտութեան յեզրակացութիւնների միացումով:

1869 թվին իր խմբագրութեամբ հրատարակվող «Արարատ»-ում տպված նրա «Թորհրդածութիւն դաստիարակութեան վրա» նշանավոր հոդվածը թեև հեղինակի գրքային ուսուցման թութեան արդյունք է, բայց շատ արժեքավոր: Իսկ հետագա տարիների նրա մանկավարժական յերկերն արդեն իրենց մեջ միացնում են ուսուցիչ, պրակտիկ մանկավարժ Աղայանի վերջը, նրա՝ մեծ մանկավարժների յերկերից յուրացրած գաղափարների, տեսական դրույթների հետ:

Սկսած 1870 թվի աշնանից, Աղայանը պրակտիկ ուսուցչական աշխատանք է կատարել Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Յերևանում, Դարբասում (Շուշի) և այլն: Յեւ հենց այդ գործնական աշխատանքի ընթացքում էլ նա կառուցել ու զարգացրել է իր մանկավարժական, կրթա-դաստիարակչական սխտեմը:

Շատ վճռական նշանակութիւն է ունեցել մասնավորապես Ալեքսանդրապոլում կատարած աշխատանքը՝ 1872—1876 թվերին: Հատկապես այս շրջանում Ալեքսանդրապոլը հանդիսանում էր հայ դպրոցական գործի կենտրոններից և մանկավարժական մտքի զարգացման ոջախներից մեկը, ուր համախմբվել էին Աղայանին ժամանակակից մի շարք անվանի մանկավարժներ՝

<sup>1</sup> Աղայան. — Գրադիտութիւն ուսուցանելու ուղիղ ճանապարհը և նորանից խոտորվելը, «Վարժարան», 1883 թ., № 8, էջ՝ 25:

Ավ. Իսաբայան, Հ. Ղուկասյան, Ս. Բեկնապարչյան, Ավ. Յեղիկյանց, Գ. Տ. Հովհաննիսյան («Տեր-Սարգսի» հեղինակը) և ուրիշները:

«Ամբողջ Կովկասում,—գրում է Աղայանը,—վաղ մի դպրոց չկար, վոր Ալեքսանդրապոլի դպրոցների բարեկարգութունն ունենար: Մանկավարժական խնդիրներ այդտեղ սկսեցին մշակվել, ամեն տեսակ հողվածներ այդտեղ սկսեցին գրվել, մանկավարժական ամեն մի խելացի պահանջ, վոր միայն գրքերումն էլին, այստեղ իրագործութունն էլին ստանում»<sup>1)</sup>:

Ահա, հայ մանկավարժական մտքի այդ սջախներից մեկումն է, վոր դարդացնում է իր գործունեությունն ինքնուս մանկավարժ Աղայանը, վորն այստեղ հանդես բերեց իր բազմակողմանի կարողութուններն ու մանկավարժական փայլուն տաղանդը: Իր այդ գործունեությունը նա շատ մանրամասն նկարագրել է իր ինքնակենսագրականում («Իմ կյանքի գլխավոր դեպքերը», 1893 թ.):

«Մասնավորապես դարձ, պետք է ասեմ,—գրում է Աղայանն իր մասին,—վոր իմ գործունեությունը թե գրական է թե ուսուցչական՝ այստեղ իմ սպասածից ավելի բեղմնավոր յեղավ: Լինելով ըստ ամենայնի անկախ, գործում էլի իմ ուզածի պես և ուրիշներին էլ վարակում էլի իմ որինակով: Այստեղ սկսեցի մշակել իմ նորագույն մեթոդը, թե ինչպես պետք է ուսուցանել մայրենի լեզուն: Նախ ցույց տվի գործով դասավանդությամբ, և հետո խմբի ցանկությունները գրեցի և հրահանգը<sup>2)</sup>, թե ինչպես պետք է ուսուցանել, հետո յեղ կազմեցի դասագիրքը: Առաջին անգամ մեր գրերը յես լուծեցի արմատական տարբերի, և գրել ավի տակտով: Այստեղ առաջին անգամ յես դաս տվի մի ծխական դպրոցում՝ «Բացարարություն ընտելության յերևույթներին» և «Տարրական ֆիզիկա»—ըստ Կրյուզերի: Այս յերկու աշխատություններն էլ յես թարգմանեցի, վորոնցից մեկը տպվեց «Արարատ»-ում<sup>3)</sup>, վորից արտատպվեց հոգուս Սահականուշյան

<sup>1)</sup> «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ՝ 141:

<sup>2)</sup> Սոսքն այն «հրահանգի» մասին է, վոր նախ տպվեց «Մեղու Հայաստանի»-ում՝ 1875 թ. № 27 = 30 («Ուսումն մայրենի լեզվի») և ապա հրատարակվեց առանձին գրքով:

<sup>3)</sup> Կրյուզերի այդ աշխատության թարգմանությունը տպվել է «Արարատ» ամսագրում՝ 1872 թ.:

ուսումնարանի, մյուսը՝ Ֆիզիկա—տպագրվեց Պետերբուրգի հայ ուսանողների հաշվով<sup>1)</sup>: Այստեղ գրեցի բազմաթիվ հողվածներ թե մանկավարժական և թե քննադատական: Այստեղ գրեցի և «Հայկական հնչյունների մասին», վորով Այվազովսկուն (խոսքը Գաբ. յեպ. Այվազյանի մասին է—Ա. Ա.) գրգռեցի իմ դեմ, ինչպես և Պարտանյանին—սրա «Մայրենի լեզվի քերականությունը» քննադատելուս<sup>2)</sup> համար: Այստեղ գրեցի և իմ «Յերկու քույրը...»<sup>3)</sup>:

Բերելով Աղայանի վկայությունն իր մասին, այժմ շատ համառոտակի պարզեմք, թե մանկավարժական դաստիարակչական ինչ դարձարներ դարգացրեց նա այդ տարիներին և հետևաբար ինչ տեղ նվաճեց իր համար հայ մանկավարժական մտքի պատմության մեջ:

✓ Ս. մենից առաջ այն հարցը, թե ինչ նպատակ ու խնդիր ունեն կրթությունն ու դաստիարակությունը: «Դաստիարակություն գլխավոր նպատակն է հին սերնդի զավակներին (այսինքքն տվյալ ժամանակի մանուկ սերնդին—Ա. Ա.) տալ այնպիսի արամագրություն, վորով ձգտեն հին սերնդից հոգեպես և մարմնապես մի աստիճան բարձրանալ Այս ձգտման շնորհիվ է, վոր տարեց-տարի, դարից-դար մարդկությունը վեր է բարձրանում աստիճանն առ աստիճան»<sup>4)</sup> ասում է Աղայանը: Իսկ դաստիարակությունը բաղկացած է յերկու հիմնական մոմենտից, այն է՝ ռուսացանկ, վոր կնշտնակի սովորեցնել մի բան», և «կրթել, վոր կնշտնակե վարժել մի բանի մեջ կամ աճեցնել, դարգացնել այն գործությունը, ընդունակությունը, վոր արդեն կա անհատի մեջ: Ահա այս յերկու պաշտոնի ի միասին կատարումը—ասվում է դաստիարակություն»<sup>5)</sup>:

Դաստիարակության խնդիրն է՝ ընդգրկել մարդու գոյություն և կուլթյան «յերեք կողմն ի միասին», այն է՝ մարմինը, հոգին և միտքը. «Մարդն ունի մարմին, հոգի և միտք և դոքա

<sup>1)</sup> Կրյուզերի «Տարրական ֆիզիկայի» այդ թարգմ. տպվել է 1877 թ.:

<sup>2)</sup> Պարտանյանի այդ աշխատության մասին Աղայանի հողվածը տպվել է «Մեղու Հայաստանի»-ի 1874 թ. № 39:

<sup>3)</sup> «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ՝ 141—142:

<sup>4)</sup> Գ. Աղայան.—«Ուսումն մայրենի լեզվի» հողվածը, «Մեղու Հայաստանի»-ի 1875 թ., № 27:

<sup>5)</sup> «Սորհրդածություն դաստիարակության վերա», «Արարատ», 1869 թ. № 1, էջ՝ 22—23:

յերեքը ի միասին են կազմում մարդու ամբողջ գոյությունը»։  
«Դոքա յերեքն ի միասին մի ամբողջություն են կազմում,  
բայց յուրաքանչյուրի հատկությունը յերևում և, և յուրաքան-  
չյուրը յուր հատկությանը հարմար պահանջմունքներ ունի»։<sup>1)</sup>

«Դաստիարակության միակ նպատակը պիտի լինի զարգաց-  
նել մարդու այդ յերեք կողմն ի միասին, վորպեսզի նա լինի  
ուժեղ, խելոք և առաքինի»։ Այդ անհրաժեշտ է, վորովհետև  
«մարդու յերեք կողմն ի միասին պիտի լինի զարգացած, վոր  
նա լինի կատարյալ մարդ»։ «Վոչ մի մարդու դաստիարակու-  
թյան կերպ պիտի չչելի այս բնական ճանապարհից միմիայն  
նորա համար, թե նա այս կամ այն կողմը պիտի ունենա,  
վասնզի մարդս նախ և առաջ մարդ է և ապա կիրակոս կամ  
Մարկոս»<sup>2)</sup>։

Այսպես վորոշելով դաստիարակության նպատակը, Աղա-  
յանը անհրաժեշտ է համարում կրթական-դաստիարակչական  
գործն իր բոլոր բաղադրիչ մասերով կազմակերպել այնպես, վոր  
ապահովվի ներդաշնակորեն զարգացնելու «մարդու այդ յերեք  
կողմն ի միասին»։ Այդ ներդաշնակ զարգացման մեջ Աղայանն  
առաջնակարգ նշանակություն և առաջին մարմնական դաստիա-  
րակությանը, մարդու Ֆիզիկական կարողությունների զարգաց-  
մանը, առանց վորի մտավոր ու բարոյական զարգացումը վոչինչ  
ե։ Իսկ Ֆիզիկական դաստիարակությունը պետք է արտահայտ-  
վի յերկու ձևով՝ մարմնամարզությամբ, վորը նպատակ ունի  
մարդու Ֆիզիկական ուժը գորացնելու, և աշխատանքային  
կրթությամբ, վորը մարդու Ֆիզիկական ուժը ոգտակար ու նպատա-  
կահարմար գործադրության մեջ է գնում։

Դաստիարակությունը մանուկներին պետք է նախատա-  
րաստի կյանքի համար, այնպես վոր նա պատրաստ և ընդու-  
նակ լինի դանկացած արհեստով կամ աշխատանքով զբաղվելու։  
Աշխատանքային դաստիարակությունը, արհեստ սովորելը պար-  
տադիր է բոլոր յերեխաների համար՝ առանց դասային-դասու-  
կարգային խտրության։ Այդ նպատակով ասում և Աղայանը՝  
«յուրաքանչյուր զպրոցին կից պետք է լինի և մի արհեստանոց»։

<sup>1)</sup> «Պրերդպություն դաստիարակության վերա», «Արարատ», 1869 թ.  
№ 1, էջ՝ 23-24:

Յեթե աղջկանց դաստիարակության մեջ ձևագործությունն ան-  
հրաժեշտ հարկավոր է համարվում, վորքան առավել հարկավոր  
պիտի համարվի աղայոց մի վորեիցե արհեստ իմանալը։ Յեվ  
այս վոչ միայն տնտեսական և մարմնամարդկան կեանք նա-  
յերով մեծ ոգտավետություն ունի, այլ նաև մտավոր և հոգեկան  
զարգացման մեծ ոգնություն և գյուրություն է տալիս, վասնզի  
մարդս միմիայն մտածելու չի ընդունակ, այլ նաև յերեակայելու  
և գարծելու»<sup>1)</sup>։ Նույն միաքը Ֆիզիկական աշխատանքի մասին  
Աղայանը պնդել է տասնամյակներ հետո։ Իր մեմուարներում  
նա գրում է, վոր «մտքի զարգացման համար Ֆիզիկական պա-  
րազմունքը անհրաժեշտ պայման պետք է համարել»<sup>2)</sup>, վո-  
րովհետև կանոնավոր կրթության ղեկըրում «Ֆիզիկական առողջ-  
լինելով, մարդը ուժեղ կլինի և մտքով»։

Ֆիզիկական դաստիարակության և արհեստների կարևորու-  
թյան գաղափարը Աղայանի մանկավարժության ամենահիմնա-  
կան գաղափարներից մեկն է, վորը և միաժամանակ նրա գե-  
ղարվեստական սահղծագործության իդեական հիմքերից մեկն է  
կազմում։ «Տորք-Անգեղ»-ը և «Անահիտ»-ը այդ գաղափարի հիա-  
նալի գեղարվեստական մարմնացումներն են Աղայանի ստեղծա-  
գործության մեջ։

Իսկ դպրոցներին կից արհեստանոցներում ինչ արհեստներ  
է առաջարկում սովորեցնել Աղայանը։ «Արհեստները կարող են շատ  
հասարակներից լինել, ինչպես են՝ կոշիկարությունը (ի հարկե  
ավելի կատարելագործյալ ձևով), դերձակություն, հյուանություն,  
յերկրագործություն, կազմարարություն և այլն այսպիսիք»<sup>3)</sup>, ըստ  
վորում, նկատում և Աղայանը՝ «մենք մեր դաստիարակության  
վորում, նկատում և Աղայանը՝ «մենք մեր դաստիարակության  
կերպը մեր ազգի վիճակին պետք է հարմարեցնենք, ինչ հար-  
կավորություն կա կուրորեն հետևել սուտ աղբաց»<sup>3)</sup>։ Այս ասե-  
լով, Աղայանն անհրաժեշտ էր համարում հաշվի առնել հայերի  
տնտեսական ու կուլտուրական զարգացման աստիճանը և այն  
կոնկրետ պահանջները, վորոնք և պետք է պայմանավորեին

<sup>1)</sup> «Պրերդպություն դաստիարակության վերա», «Արարատ», 1869 թ.  
№ 2, էջ՝ 48:

<sup>2)</sup> «Իմ կյանքի զլավոր ղեկքերը», էջ՝ 75:

<sup>3)</sup> «Պրերդպ. դաստ. վերա», «Արարատ», 1869 թ., № 2, էջ՝ 48:

կրթութեան գաստիարակութեան գործի բովանդակութիւնը և ուղղութիւնը:

Չժխտելով ժառանգականութեան մոմէնտը, Աղայանն այնուամենայնիվ ճիշտ ել հասկանում եր, վոր ծնողներէց փոխանցվող հատկութիւնները չեն, վոր վճռելու յեն յերեխաների մտավոր ու բարոյական զարգացման բախտը: «Մենք չենք հերքում ամենեին, վոր ծնողաց հատկութիւնքը անցնում են իրանց զավակացը, բայց այդ չի ցույց տալիս, վոր յեթե ծնողք ուժեղ են, նոցա զավակներն ևս անշուշտ ուժեղ կլինեն, յեթե խելք՝ խելք, յեթե առաքինի՝ առաքինի»: Այդպէս չե, վորովհետեւ «աշխարհս մի յերկրորդական արգանդ ե, վորից մարդս հարկադրված ե կրկին ծնվելու, յոր անվան վրա մի այլ անուն կամ կոչում ավելացնելու»: Մարդիկ ծնվում են՝ ուժեղ, առաքինի և խելք լինելու ընդունակութեամբ և վոչ իսկապէս ու կատարելապէս խելք, ուժեղ և առաքինի: Այս վերջին գործը մարդկային էյակի կյանքի վերա ազդեցութիւն: ունեցող հանդամանքների պաշտոնն ե»<sup>1)</sup>:

Դաստիարակութեան—կրթութեան խնդիրն ե անա կազմակերպել մարդու բնական ընդունակութեան ցանկալի ուղղութեան զարգացումը, չեզոքացնելով շրջապատող հանդամանքների բացասական ազդեցութիւնը: Մանկավարժութիւնը պետք ե ի նկատի ունենա, վոր «մարդուս բարի կամ չար ձգտողութեանց պըրյուրը նրա վոյեկան աշխարհի մեջ չպետք ե փնտռել, թեև արամազրութիւն ևս լիներ նորա մեջ,—այլ ընտանեկան և ազգային կյանքի մեջ»<sup>2)</sup>:

Այս ճիշտ յելակեան ել Աղայանը դարձնում ե հիմք յերեխաների մտավոր ու հոգեկան-բարոյական դաստիարակութեան խնդիրները վորոշելու համար, համաձայն հայերի կուլտուրական զարգացման պահանջների:

Ֆիզիկական ու աշխատանքային դաստիարակութեան հետ ե սերտորեն կապվում նաև մտավոր ու բարոյական կրթութիւնը: Այստեղ ի հակադրութիւն իր ժամանակի արբող կրոնաբարոյական դաստիարակութեան պահանջի, վորով հիմնականը և

առաջնայինը համարվում եր կրոնական իմաստով բարոյական կրթութիւնը, Աղայանն՝ առաջնայինը և հիմնականը համարում ե մտավոր կրթութիւնը, յերեխայի մտավոր կարողութեան զարգացումը: Սրան համապատասխան զարոցում ավանդվող առարկաների շարքում Աղայանը հավասար ուշադրութեան ե արժանացնում թե պատմական ե թե բնագիտական առարկաները, վորոնք իրենց էյութեամբ հակադրվում են՝ կրոնական խավարամտութեանը: «Մեզանում կրթութեան գործը միայն կրոնին են հասկացնում»,—ասում ե Աղայանը և հարցնում՝ բայց «միթե՞ պատմական, թվարանական, բնագիտական և այլ առարկաները կրթողական և այն բարոյական նշանակութիւնը չունեն, յերեխայոց մեջ՝ ինքնազարգացման և այլ գովանի բնավորութեան հիմք գնելու հատկութիւն չունեն...»: Ըստ Աղայանի, զարոցում ավանդվող բոլոր առարկաներն ել պետք ե մեկը մյուսից վոչ պակաս չափով դաստիարակչական նպատակ հետապնդեն. «Մարդուս բարոյապէս զարգացնելը յես չեմ հատկացնում մի վորոշ առարկայի, այլ այդ հատկութիւնը միապէս տալիս եմ բոլոր առարկաներին, պատճառ, նոքա ամենքը միապէս կրթողական պետք ե լինեն»<sup>1)</sup>:

Աղայանի կրթական սիստեմում մեծ տեղ ե գրավում աղջիկները—կանանց ուսման ու դաստիարակութեան հարցը: Աղայանը հանդիսանում ե այս հարցի յեռանդուն պրոպագանդիստներից մեկը և իր յերկերում բազմիցս անդրադարձել ե այդ խնդրին:

1872 թվի փետրվարին Ալեքսանդրապոլի Սահականուշյան որիորդաց զարոցի հանդէսին Աղայանի արտասանած ճառից (անտիպ) իմացվում ե, վոր նա այդ հարցում իդեական օտիմուլ ե ստացել Ֆենիլոնի՝ «Աղջիկների դաստիարակութեան մասին» աշխատութիւնից և այն՝ Դ. Ի. Պետրեի միջոցով, թեև միայն արտահայտութիւնը. «Կանայք այնպիսի պարտականութիւններ ունեն կատարելու, վորոնք մարդու բոլոր կյանքի խարխիւններն են»: Այդ կապակցութեամբ Աղայանն ասում ե, վոր՝ «մանուկները ուրիշ բան չեն, բայց յեթե ազգի կյանքը, և այդ կյանքը

<sup>1)</sup> «Սորհրդ. դաստիարակութեան վերա», «Արարտ», 1869 թ. № 2, էջ՝ 45:  
<sup>2)</sup> Նույն տեղ, № 5, էջ՝ 125:

<sup>1)</sup> «Գլոց» ամսագիր, 1874 թ., № 2:

կնոջ ձեռքին է, հետևաբար ազգի բախտը, ապագան ընտանյաց մայրերի ձեռքին է»<sup>1)</sup>։ Ըստ Աղայանի, կանանց կրթությունն ու դաստիարակությունը ազգային վերածնության նախապայմաններից մեկն է. «Ինչպես ծառը արմատից կանի, կղաղբի, նույնպես է կյանքը, ընտանեկան կյանքը մայրերից կանի, կղաղբի... Հագարավոր դպրոցներ ել վոր բանանք մեր արու զավակաց համար, դորանով միայն կաստեղացնենք մեր օրիորդաց դաստիարակությունը, վասնզի լոկ արու զավակաց դաստիարակությամբը մենք ընտանեկան բարեբաղդ կյանք չենք կարող ստանալ։

... Մեկ մայրեր են պետք, իրանց զավակաց կրթության հոգ տանող մայրեր...»<sup>2)</sup>), —ասում է նա իր այդ ճառում։

Այսպիսով՝ աղջիկները—կանանց կրթության հարցն Աղայանի մոտ որդանապես կապակցվում է յերեխաների ընտանեկան դաստիարակության հարցի հետ, վորին նույնպես հասուկ ուղարկություն է նվիրել նա։

«Յերեխան կյանքի մեջ մտնելուն պես, նորան մ՞ի առաջնորդող պետք է, բայց վօչ կույր առաջնորդ, այլ յերեխայական բնության քաջամուտ և զավակասեր, մի ծնող...» — գրում է Աղայանը։ Ծնողների՝ թե հոր և թե մանավանդ մոր ազդեցությունը, նրանց բարոյական օրինակը և նրանց մտավոր զարգացումը վճռական նշանակություն ունեն յերեխաների դաստիարակության համար։ Ինչպես ծնողներն են, նույնը նրանց օրինակով լինում են և զավակները։ Առաջին դաստիարակը ծնողն է և նրանից շատ բան է կախված։ Մայրերի՝ թե մտավոր զարգացումն ընդհանրապես և թե ժանկավարժական վերոջ պատրաստությունը մասնավորապես՝ անհրաժեշտ են յերեխաների հետ վարվելու և նրանց զարգացումը ճիշտ ուղղությամբ տանելու համար՝ առանց գիմելու ֆիզիկական ուժի։ «Բայց մեր և ըստ արժանվույն հասկացող մայր, վոր փոխանակ նյութական զենքի, բարոյական զենք դորձ զնի... Մեր մեջ յերեխայք ստրուկ են։ Յեթե մինը մի խելք բան է անում, բարկանում են վերան, և մինչև անգամ ձեծում, թե եզ քո գիտենալու բանը չե, դու հիմար ես։ Յեկ յեթե հիմարություն է անում, զարձյալ ձեծում



Պ. Ա. Ղ. Ս. Յ. Ն. Ե. իր մի խումբ անդամների հետ (Արևմտահայաստան)

1) Հայաստանի ՊԳԹ, Աղայանի արթիվ, № 11 ձեռագիրը։

2) Նույն տեղը։

են, թե ինչու չհասկացալ, վոր այդ հիմարությունն է: Իսկ սրան հետեանքը լինում է այն, վոր «յերեխան դալիս է այն համոզման, թե ինքը վոչինչ է, և սկսում է վոչնչանալ իսկապես, կորցընելով իր հետաքրքրությունը և ինքնակայունությունը...»<sup>1</sup>):

«Բայց վորպեսզի այդ չլինի, — սսում է Աղայանը, — պետք է նախ կրթված մայրեր դաստիարակել՝ աղջիկներին համար ևս դպրոցական կրթությունը պարտադիր դարձնելով», բացի այդ՝ ընտանիքը և դպրոցը պետք է համագործակցեն յերեխաների կրթության ու դաստիարակության գործում:

Մտոզներից հետո՝ Աղայանը վճռական նշանակություն է տալիս ուսուցչի անձնավորությանը: Ուսուցչի անձնավորության հարցի հետ է կապում Աղայանը դպրոցական կրթության ու դաստիարակության բոլոր հարցերը:

Իսկ ինչպիսին պետք է լինի ուսուցիչը, վոր կարողանա ազդել մանուկների վրա: «Ազդել յերեխայի հոգու վրա, նրան դեպի բարին առաջնորդել այնքան դյուրին է, ինչքան մի փափուկ մոմ ծռելը, հարկավոր է, վոր դաստիարակն ինքն լինի իր պաշտոնը բարեխղճությամբ կատարող, մանկանց հոգին ճանաչող մի անձնավորություն»: Ուսուցչի և աշակերտների սիրալիք մըտերմական փոխհարաբերությունը վճռական նշանակություն ունի կրթության գործի մեջ՝ դպրոցում: Աշակերտները յեթե սիրեցին իրենց ուսուցչին, ապա ուսման հաջողությունն ապահովված է: Իսկ «ուսուցիչը կարող է սիրելի դառնալ միայն յուր մարդավայել վարմունքովը, յուր մեծահոգությամբ, հասարակության մեջ յուր ունեցած համարմունքովը: Նա վե՞ պետք է լինի աշակերտաց աչքումը և պիտի վորոշվի նոցա ծանոթ շատ մարդկանցից, նա պիտի լինի կենդանի կատարելատիպ աշակերտաց համար յուր առաքինությամբը, յուր ջանասիրությամբը և այլն»<sup>2</sup>):

Ուսուցչի՝ իր աշակերտների նկատմամբ ունեցած վերաբերմունքն Աղայանը վորոշում է հետևյալ արտահայտությամբ. «Մի լինիք այնքան քաղցր, վոր բեզ կուլ սակ և վոչ այնքան դառը, որ քեմ վ րադ»:

<sup>1</sup> «Արարատ», 1869 թ., № 6, էջ՝ 175—176, «Մորհրդածություն դաստիարակության վերա՝ հոգվածը:

<sup>2</sup> «Ուսումն մայրենի լեզվի», «Մեղու Հայաստանի», 1875 թ., № 27:

Բայց այդ դեռ քիչ է: Ուսուցիչը պետք է հոգեպես նվիրված լինի իր գործին, ապրի ու խանդավառվի մանուկների դաստիարակության աշխատանքով: Նա ուսուցման գործի մեջ պետք է իր սիրան ու հոգին դնի՞ «Ի՞նչն է պատճառը, վոր մեր դպրոցներն ունենում են այլ և այլ շրջաններ՝ լավ ու վատ, յեթե վոչ այն, վոր այդ շրջաններից մեկում ուսուցիչները վոգևորված են լինում, իրենց վոգին պատվաստում են աշակերտներին մեջ, իսկ մյուսներում՝ անհոգի և անկոչ մարդիկ են լինում, աշակերտներին հոգի չեն տալին, չեն կարողանում թեև վերել ու թույնել: Հոգի չեղած տեղն ի՞նչ աճելություն, ի՞նչ զարգացում կարող է լինել», — գրել է Աղայանն իր «Ուսուցման հոգին» հոդվածում: Իսկ մի այլ հոդվածում Աղայանը դաստիարատում է այն ուսուցիչներին, վորոնք դաստիարակության գործը կատարում են «վարձկանի պես», առանց անկեղծ վոգևորության: «Ում չի վոգևորում դաստիարակության գործը, սվ վոր այդ պաշտոնը վարձկանի պես է կատարում, լավ կլինի, յեթե այդպիսին որ ասա՞ չքվեր այդ սուրբ վայրից: Ասած է, մի ծաղկից սձը թուլն է շինում, ճանճը մեղր: Յեթե վարձապետը վարժապետի հոգի չունի, այնպիսին ամեն մի իսկապես կենդանացուցիչ ձևից մեռյալ դեակ կշինի»<sup>1</sup>):

Ուսուցչի անձնավորության հարցի հետ են կապվում նաև պատժի, աշակերտների կարգապահության և դրան հարակից հարցերը:

Այդ հարցին Աղայանը շատ անգամ և անգրագարձեր բայց ամենից ուշագրավը Ալեքսանդրապոլի ուսուցչական ժողովներից մեկում՝ 1874 թվին՝ նրա կարդացած մի գեղուցումն է՝ «Իպրոցի մեջ կարելի՞ չի պատիժը վորպես կրթողական հնարներից մեկն ընդունել թե վոչ» թեմայով, վորը տպագրվել է նախ «Իպրոց» ամսագրում՝ 1874 թ. № 2-ում նույն վերնագրով, ապա՝ «Մեղու Հայաստանի»-ում՝ 1875 թ. № 30-ում «Պատժի մասին» վերնագրով: Աղայանի այդ հոդվածի մեջ արտահայտված մտքերն իրենց թարմությունը և նշանակությունը պահում են մեր դպրոցի համար ևս. խորհրդային դպրոցի ամեն մի լուրջ ուսուցիչ չի

<sup>1</sup> «Ուսումն մայրենի լեզվի» հոդվածը, «Մեղու Հայաստանի», 1875 թ. № 28:

կարող չընդունել մեծ գեմոկրատ մանկավարժի հայացքը պատժի մասին, յերեխաներին առանց պատժի դաստիարակելու անհրաժեշտութեան մասին:

Մզայանի հիմնական գաղափարն այս հարցում հետևյալն է. «...Կամ պիտի աշխատենք կրթել առանց պատժելու և կամ առանց կրթելու պիտի պատժենք՝ անկրթութեան նշան ցույց տվող աշակերտներին. միջին նախապարհ չկա»:

Մզայանը գտնում է, վոր աշակերտների անկարգութեան համար մեղավոր են ուսուցիչները, վորոնք հաճախ՝ աշակերտներին աշխուժութեանը, կենսուրախութեանը կամ անհաջող ու անհետաքրքիր դասի նկատմամբ արտահայտած դժգոհութեանը, անհետաքրքրութեանը և կամ թե «այս կամ այն սուտրկայի մեջ թույլ գտնվելը» և այլն հանցանք են համարում և պատժի ոգնութեանը դիմում: Բայց յեթե այդպիսի դեպքերում հարկավոր է համարվում պատժել աշակերտներին, «ասլա ուրեմն հարկավոր է և պատժել վարժապետներին. հարկավոր է պատժել և պատվելի հոգաբարձուներին, պատճառ, վարժապետները և ռուս-վելապետ հոգաբարձուք շատ ավելի թույլ են գտնվում իրանց գործը բարելոգութեամբ կատարելու մեջ, քան թե նույն կարեկցութեան արժանի անմեղ մանուկները, վորոնք զեռ չգիրտեն ինչ կնշանակի պարտք պարտականութեան: Աշակերտական հանցանքը անդրադարձութեան է վարժապետական հանցանաց, իսկ վարժապետական հանցանքը անդրադարձութեան է հոգեբարձական հանցանաց»: Ուսուցիչները պարտավոր են անկեղծորեն սիրել իրենց աշակերտներին: Ուսուսնարանը կրթարան է և վոչ թե սանձարան կամ պատժարան. «Ուսուսնարանը չէ և ուղղաբան որինոք հանցավոր համարված յերեխաների: Ուսուսնարանը մի կրթարան է: Այդտեղ տալիս են անմեղ մանուկներ, վոր նոքա զիտակցութեան ստանան, ճանաչեն իրանց չարն ու բարին, մի խոսքով՝ զարգանան բարոյապետ և մտավորապետ»: Թե ընտանիքում և թե դպրոցում յերեխաների վրա պետք է ազդել բարոյապետ: Իսկ յեթե փոխանակ բարոյական ուժի, վարժապետներին ձեռքը տանք պատժելու իրավունք, յես ամենայն հոգով հավատացած եմ, վոր այնուհետև ուսուսնարանը կդառնա պատժարան և վարժապետները կլինեն մի-մի դահիճ»<sup>1)</sup>:

Այնուհետև Մզայանը վորոշում է «պարտավորութեանը վարժապետաց», թե ինչպես պետք է վերաբերվեն ուսուցիչները և՛ իրար նկատմամբ, և՛ աշակերտներին նկատմամբ դպրոցում՝ պարտավունքի ժամանակ, նաև դպրոցից դուրս՝ իրար հանդիպելիս. «Վարժապետաց հարաբերութեանն աշակերտաց հետ պետի լինի յեղբայրական սիրով, այդ սերը պիտի դպալի լինի աշակերտներին», այնպես «վոր աշակերտն ուր և իցի վարժապետին տեսնելիս ուրախանում է, և վոչ թե վարժապետի շվաքը տեսնելուն պես փախչի և ծակամուտ լինի»<sup>1)</sup>:

Մզայանի այս հումանիտական գաղափարները դաստիարակութեան խնդրում՝ իրարանցում և կատարութեան առաջադրին մանկավարժների և ուսուցչութեան կլերա-պահպանողական մասի մեջ: Բայց Մզայանն իր հակառակորդներին չգիշեց, անարատ մնալով իր գաղափարների մաքրութեան մեջ, բարձր պահելով ժողովրդական ուսուցչի կոչումը:

Սակայն Մզայանի ծոտայութեանը, վորպես մանկավարժի, չի սահմանափակվում դաստիարակութեան այս ընդհանուր խնդիրներին ու պահանջներին վորոշումով: Նրա մանկավարժական գործունեությունն ընդգրկում է դպրոցական ուսման ու կրթութեան գործն իր բոլոր մասերով: Կարող ենք հաստատապես ասել, վոր Մզայանն իր ժամանակին նույն զերն է կատարել հայ իրականության մեջ, ինչ զեր վոր կատարել է ռուս մեծ մանկավարժ Կ. Գ. Ուշինսկին ուստական իրականության մեջ և Պետալոցցին իր հայրենիքում, վորոնցից նա շատ բան է սովորել և իր գործունեությունն շատ կողմերով անչափ նման է նրանց:

Ինչպես Ուշինսկու, նույնը և Մզայանի մանկավարժությունը անմիջական առումով տարրական դպրոցը նկատի ունի: Նրանց յերկուսի համար էլ տարրական դպրոցը կամ սկզբնական կրթութեանն է գործունեություն հիմնական ասպարեզը, ընդունելով այն վորպես ժողովրդական կրթութեան ամբողջ սիստեմի հիմքը: Ուսումը, կրթութեանը և դաստիարակութեանը տարրական դպրոցում, այդ դպրոցի դասադրքերը, ծրագրերը և դիպակատիկայի տեսական ու գործնական հարցերը, ինչպես և ընտանիք

<sup>1)</sup> «Դպրոց», 1874 թ., № 2:

<sup>1)</sup> «Դպրոց», 1874 թ., № 2:

քի ու դպրոցի փոխհարս-բերութիւնը, ուսուցչի անձնավորութեան պարբերակը և այլն—անա այս և զբաղեցրել թե ուսման մեծ մանկավարժին և թե նրա հայ ժամանակակիցն ու աշակերտին: Այս բնագավառում հանդես բերած իր ինքնուրույն տաղանդի շնորհիվ Աղայանը համարձակ կարող և կանգնել իր ուսուսուցչի կողքին, վորպէս նրանից վոչ պակաս մեծութիւնը:

Աղայանն Ուշինսկուսն և հիշեցնում, մասնավորապէս և այն բանով, վոր նա և՛ ուսուսման մանկավարժի նման՝ տարբերակն դպրոցի հիմնական աշխատանքը համարում և մայրենի լեզվի ուսուցումը՝ բնագիտական և պատմական դիտութիւնները նախնական տարրերով: Նրանք յերկուսն էլ այն հայացքն ունեն, ըստ վորի տարբերակն դպրոցի բովանդակութիւնը և խնդիրները վորոշվում են մայրենի լեզվի ուսուցման պահանջներով, նրա դերով ու նշանակութեամբ:

Ինչպէս Ուշինսկուսն, նույնպէս և Աղայանի դիպակախայում ամենագլխավոր տեղը գրավում են մայրենի լեզվի ուսուցման նշանակութեան, բովանդակութեան և մեթոդիկայի հարցերն իրենց վողջ բաղադրանքով: Աղայանին ժամանակակից շատ մանկավարժներ ևս զբաղվել են մայրենի լեզվի մեթոդիկայի հարցերով, կազմել են այբբենարաններ ու ընթերցարաններ (Առաքել Բահաթրյան, Ս. Մանդինյան և ուրիշներ), գրել են բաղադրիչ հոգվածներ, բայց այնուամենայնիվ՝ Աղայանն այս ասպարեզում—հենց նույն այդ մանկավարժները իսկ խոստովանութեամբ, յեզակի դործ և կատարել, նովատորի գեր և խաղացել:

Առանձնապէս նշանակալից են Աղայանի կազմած մայրենի լեզվի դասագրքերը («Ուսումն մայրենի լեզվի», հետագայում նաև «Արևիկ», ինչպէս և «Պատկերազարդ այբբենարանը»), վորոնք արժեքավոր են իրենց պարունակած գեղարվեստական նյութերով—մանուկների կյանքը, հայրենի կենդանի բնութիւնը, կենդանական աշխարհը և ժողովրդի կյանքն ու աշխատանքը պատկերող մանուկներին միանգամայն մատչելի ու գրավիչ վոտանավորներով, նկարագրութիւններով ու զրուցներով: Աղայանի դասագրքերում միացել են մեծ մանկավարժի հմուտութիւնը և տաղանդավոր մանկական գրողի ստեղծագործական

ավյունն ու Ֆանտազիան: Ուրիշ վոչ մի դասագիրք այդ արժանիքը, այդ առավելութիւնը չունեն:

Կազմելով իր «Մայրենի լեզվի» դասագրքերը, դրան գուցե ընթաց Աղայանը գրել և բաղադրիչ հոգվածներ, վորոնցում կոնկրետ մշակված են մայրենի լեզվի ուսուցման—դասավանդման խնդիրներն ու մեթոդիկան՝ ամենայն մանրամասնութեամբ:

Հիշենք այդ հոգվածներից ու բրոշյուրներից մի քանիսը. —«Ուսումն մայրենի լեզվի»—մեթոդական հրահանգ ուսուցիչների ու ծնողների համար, 1875 թվին:

—«Գրագիրութիւն ուսուցանելու ուղիղ ճանապարհը և սորանից խոտորվելը»:

—«Հայերեն գրագիրութիւն ուսուցանելու բանավոր նախապատրաստութեան մասին՝ ուսուցիչները համար»:

—«Հարկավոր և արդէոք ը հնչյունի ոճանգակութիւնը գրագիրութիւնն ուսուցանելիս»:

—«Նախագիտելիք գիտակցաբար կարգացնելու մասին. վեց որինակելի դաս ծնողաց և վարժապետաց համար»:

—«Մի թեթև հրահանգ մեր լեզվի ուղղագրութեան մասին»:

—«Մեր ուսուցիչներին ընկերական նվեր—հայերենի ուղղագրութեան ուսուցման մասին մեթոդական ուղեցույց» և այլն, և այլն:

Անդրադառնալով դասավանդման մեթոդների հարցին, սասնք, վոր Աղայանը յեւնում և սովորողների մտավոր, հոգեկան ու բարոյական զարգացման վիճակից, ինչպէս ուսման նյութի ծավալն ու մատչելիութիւնը, նույնը և ուսուցման մեթոդները նրա մոտ վորոշվում են աշակերտների կարողութեամբ: Այդ մասին Աղայանը գրել և. «Դասավանդութեան յեղանակներից մենք այն ենք համարում հարմարագույնը, վոր հարմարեցրած և մանկան ամբողջ բնութեանը, նրա մտավոր, բարոյական և ֆիզիկական կարողութեանց զարգացնելուն»<sup>1)</sup>:

Դժբախտաբար մենք չենք կարող այստեղ ավելի մանրամասն կանգ առնել Աղայանի մանկավարժական-դաստիարակչական բոլոր հայացքների վրա, այդ բավարար չափով կարելի

<sup>1)</sup> «Ուսումն մայրենի լեզվի» հոգվածը, «Մեղու Հայաստանի», 1875 թ.,

յե անել առանձին աշխատութեամբ: Իսկ այստեղ նպատակ ելինք դրել շատ ընդհանուր գծերով ժխտն և այն վոչ բոլոր հարցերի ընդգրկումով՝ մասամբ գաղափար առլ հայ մեծ գեմեկրատ լուսավորիչի մանկավարժական գործունեյութեան ու գաստիարակչական գաղափարների մասին:

#### IV. ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աղայանի մտա կես դար ընդգրկող բազմակողմանի հարուստ գործունեյութեան մեջ մի շատ հետաքրքրական բնագավառ ել կա, վորը շատ և թերագնահատված և լրջորեն չի ուսումնասիրված: Այդ նրա հրապարակախոսութեունն է: Աղայանը վորպես հրապարակախոս—գա մի առանձին մեծ թեմա յե, վորին այստեղ մենք հնարավորութեուն չունենք անդրադառնալու: Միայն նշենք, վոր մեծ գեմեկրատ հեղինակը՝ գրողը—բանաստեղծը, մեծ մանկավարժը միաժամանակ նշանակալից գործունեյութեուն և հանգես բերել նաև հրապարակախոսութեան ասպարիզում՝ ակտիվ մասնակցութեուն ունենալով հայ հասարակական կյանքի ակառաւ հարցերին: Աղայանը հիանալի հասկանում էր հրապարակագրական խոսքի կարևորութեունը. «Պատերազմը մղվում է վոչ միայն զինքով, այլ և խոսքով ու զրշով...» «Բայց ի՞նչ է խոսքը... Ճշմարիտ խոսքը գործի սերմն է: Գործը կարող չէ ծնունդ առնել առանց խոսքի...»,—ասում է նրա հերոսներից մեկը<sup>1</sup>):

Հավատալով «ճշմարիտ խոսքի» վճռական նշանակութեանը—Աղայանն իր վոչ զործունեյութեան ընթացքում բուն «պատերազմ և մղել խոսքով ու զրշով» իր բազմաթիվ հակառակորդների դեմ, անխնա, անզիջում պատերազմ՝ իր գաղափարների պաշտպանութեան համար: Ինչպես իր գործունեյութեան մյուս ճյուղերում—նույնը և այստեղ՝ հրապարակախոսութեան բնագավառում՝ Աղայանը միշտ կանգնած էր գեմեկրատիզմի դիրքերում, այն գեմեկրատիզմի, վորն սկզբնավորվել էր «Հյուսիսափայլ»-ի կշերում՝ կոմս Եմմանովի հրապարակախոսութեամբ:

Աղայանն իր աշխարհայացքի ու հրապարակախոսական գործունեյութեան շատ կողմերով, հիմնական մոմենտներով միանում է հայ մեծ հեղափոխական-գեմեկրատ Միքայել Նալբանդյանի հետ: Նրանց իրական, աշխարհայացքային ազգակցութեունը—արյունակցութեունը մեզ համար անկասկած է և ակնբախ:

1) Դ. Աղայան.—«Փամանակալից քեֆ», «Մշակ», 1895 թ., № 85.

Պատահական չէ, վոր 90-ական թվականներին՝ կրքոտու-  
թյամբ արտահայտվելով ժամանակի հայ մամուլի դեմ, Աղայա-  
նը մարտական վոզեշնչմամբ գրել է.

«Մեր ժամանակ մեմք Մասկվայից սպասում ենք վաչ թե  
«Ճոռաֆայի» մրուրք, այլ Հյուսիսաֆայի վոզին, նայրանդյանի  
կովական գոչունը»<sup>1)</sup>:

Վորպես հրապարակախոս, Աղայանը հայ իրականության  
մեջ առաջինն է, վոր պաշտպանել է՝ սոցիալական անհավասա-  
րության, մասնավոր սեփականության վերացման դադափարը՝  
հանդիսանալով մինչև-մարքսյան սոցիալիզմի ներկայացուցիչը  
մեղանում: Սոցիալական անհավասարության վերացման ուղի-  
ների վորոնումով, Աղայանը կառուցում է իր սոցիալական ու-  
տոպիան (նրա «Ժամանակակից ատենախոսությունը», ամերի-  
կացի գրող Եղուարդ Բելլամիի «100 տարի հետո» ուտոպիական  
վեպի թարգմանությունը և այլն), վորը շատ նշանակալից տեղ  
է գրավում թե նրա հրապարակախոսության մեջ և թե հայ հա-  
սարակական մտքի պատմության մեջ ընդհանրապես:

\* \* \*

Աղայանի կյանքի ու ստեղծագործությունների նկատմամբ  
մենք հարազատություն ենք զգում վորովհետև Աղայանը շատ  
մտտիկ էր կանգնած այն ուղիներին, վորոնցով նրա սիրած ժողո-  
վուրդը հասավ իր ազատագրմանը:

Այդ մտտիկության լավագույն արտահայտությունն են նրա  
թե վիպական ու բանաստեղծական, թե հրապարակախոսական  
ու մանկավարժական գործերը, վորոնք շնչում են գյուղացիա-  
կան զեմոկրատիզմի վոզով, անկեղծ սիրով դեպի աշխատավոր-  
ների հոգսերն ու կարիքները, դեպի նրա լավագույն ազագան:

Աղայանի, գյուղացիական այդ ազնիվ զեմոկրատի հայացք-  
ները զարգացել ու ձևավորվել են անցյալ դարի հեռ-սեֆոր-  
մյան և նախահեղափոխական (մինչև 1905 թիվը յեղած) դարա-  
շրջանում, յերբ նա՝ հայ հասարակական հարաբերությունների  
հետամնացության հետևանքով չկարողացավ հասնել տիրող հա-  
սարակական նողկալի կարգերի հեղափոխական վերափոխման  
պրոլետարական յելքին:

<sup>1)</sup> ՊԳԹ, Աղայանի արխիվ, «Պեռք չի հավատար» ձեռագիրը (անտիպ  
հոդված):

Բայց նրա հայացքներում, նրա ստեղծագործություններում  
վառ հույս, խոր հավատ կա մարդկության լավագույն ապա-  
գայի նկատմամբ: Նա խորապես ատում էր տիրապետող կար-  
գերը, ատում էր արյունոտ ցարի վոտտիկանական սեփմը և  
հավատով նայում ու փնտում էր «փրկության ուղիները», թեև  
նա լիովին չկարողացավ դանել ճշմարիտ ուղին, պրոլետարիատի  
հեղափոխական ուղին՝ դեպի լավագույն ազագան:

«Մենք զգվում ենք ինկվիզիցիայի ստոր արարքներից և  
միևնույն ժամանակ հիանում և սքանչանում այրվողների հո-  
գու վսեմությունից: Յես այն հույան ունեմ, վոր աշխարհքից կան-  
հետանան բոլոր անիրավ հարձակմունքները և յերկրի վրա կտի-  
րի ընդհանուր յեղբայրություն, վոխադարձ սեր և հարգանք,  
այդ ժամանակ միայն մարդը կլինի մարդ, իսկ այժմ նա մի  
կիսագաղան է: Հավատացած եմ սակայն, վոր մարդն այս աստի-  
նանին հասնել կարող չե առանց կովի: Այս կովի մեջ նա կհան-  
դիսանա հայրոդ, ում ձգտումը վոր կլինի հասնել մարդու այդ  
բարձր կատարելիությանը, իսկ կշախջախվի նա, ով վոր հակա-  
ռակ կհանդիսանա գրան, թեկուզ ըստ յերևույթին նա շատ գո-  
րեղ թվա»<sup>1)</sup>:

Հենց այս հավատի ուղիով է անցել Աղայանն իր կյանքի  
ավելի քան 70-ամյա ճանապարհը, — միշտ համակիր ու պաշա-  
պան լինելով իր ժամանակի մտավոր ու հասարակական-քաղա-  
քական այն շարժմանը, այն ուղղությանը, վորը ժողովրդին  
առաջնորդում է դեպի իսկական ազատություն, իսկական «բար-  
ձր կատարելություն»:

Այդ խորը հույսով, խորը հավատով էր, վոր նա արճամար-  
հելով և հեռու մնալով նացիոնալիզմից, միանգամայն հավատա-  
բիւմ գյուղացիական զեմոկրատիզմին, 900-ական թվականներին  
կանգնեց դեպի հեղափոխությունը տանող ճանապարհի վրա:

Իր հիշողություններում, մեր պրոլետարական գրականու-  
թյան հիմնադիր, բուլեղիկ սրտե Հակոբ Հակոբյանը Ղ. Աղայանի  
մասին հետևյալն է գրել.

«Ցարի հոկանդերիցան մանիֆեստից հետո Ղազարոսն ար-  
դեն մեղ հետ էր, վորպես համակրող: Նա կանոնավոր, համար-  
յա ամեն օր մամանակցում էր այն մասսայական բացողյա մի-

<sup>1)</sup> Ղազարոս Աղայան. — «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», էջ՝ 111:

տինգներին, վար կազմակերպում էյինք մենք, բուլղերիկներս, վի-  
րայում, աղյուսի գործարանի մոտ: Նա յերբեք չէր հաճախում  
մենչևիկների միտինգները, վոր տեղի ունեյին Նախարարկա-  
յի հրապարակներում: Վերջապես, 1906—1907 թ. թ. մեզ հա-  
մակըողը, 5-րդ քաղաքամասում մտավ մեր ընտրական պատ-  
գամավորական ցուցակի մեջ, վորպես պատվիրակ պետական  
գումայի ընտրությունների»<sup>1)</sup>: Յեվ ապա վերջում, Հ. Հակոբյանն  
ավելացնում է, «վոր իմ կարծիքով Աղայանը սրտանց համա-  
կրում էր մեր գործին և մի շարք ուրիշ գրողների նման խորթ  
ու թերահավատ չէր վերաբերվում դեպի Սոցիալ-դեմոկրատա-  
կան Բանվորական Կուսակցության ձախ թիւը, դեպի բուլղերիկը»:

Ճիշտ է արդյոք պրոլետարական, ժողովրդական պոետ  
Հ. Հակոբյանի այդ կարծիքը: Դ. Աղայանի կես դարի պատմու-  
թյունն ունեցող զբաղման ու հասարակական գործունեյությունն  
այդ հարցին զբաղման պատասխանի հիմք է տալիս: Այն, ճիշտ է  
այդ կարծիքը: Դ. Աղայանի վողջ 50-ամյա գործունեյության հե-  
տևողական գեմոկրատական ուղղությունը չէր կարող չհանգել  
միակ հետևողական հեղափոխական, միակ բուն ժողովրդական  
ազատագրական շարժմանը համակերպուն, շարժում, վորը հեաա-  
գայում՝ 1917 թ. հոկտեմբերին (նոյեմբերին) անվերադարձ խոր-  
տակեց ժողովուրդների բանաը և նրա ավերակների վրա ան-  
պարտելի ուժով ու ամբությամբ կանգնեց աշխատավոր ու ճընշ-  
ված մարդկության հարազատ հայրենիքը՝ ԽՍՀՄ-ն:

Յեվ յեթի Աղայանը բախտ ունենար ապրելու մինչև Սո-  
ցիալիստական Հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և  
Անդրկովկասում, ապա նա յել իր «Ասլան բալայի», հայ ժողո-  
վրդի մեծ բանաստեղծ անմահ Թումանյանի նման ու նրա հեա  
միասին՝ սրտանց կվողջունեի խորհրդային կարգերի հաղթանա-  
կը և իր կյանքի վերջին օրերը յերջանկությամբ կանցկացներ,  
վորպես խորհրդային հայրենիքի ազնիվ, հարազատ քաղաքացի:


1938 թ.  
1940 թ.



<sup>1)</sup> Հ. Հակոբյան. — Կազարոս Աղայան, (հիշողություններ), «Գրական  
թերթ», 1936 թ., 11/ VII, № 48.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |           |     |
|--|-----------|-----|
| Ներածություն                             | • • • • • | 5   |
| I. Կյանքը                                | • • • • • | 12. |
| II. Գրական գործունեյությունը             | • • • • • | 30  |
| III. Մանկավարժական գործունեյությունը     | • • • • • | 100 |
| IV. Յերկու խոսք հրապարակախոսության մասին | • • • • • | 125 |



*[Faint, illegible text and stamps at the bottom of the page, likely bleed-through or secondary markings.]*



807

2

« Ազգային գրադարան



NL0377407

69.098

0722 5 0

30984

ԱՇ. ԱՏԱՏՐԻՈՒ

ԳԱՅԱՐՈՍ ԱԴԱՅԻՆ

ԽՅԱ. ՓԵՃԱԴՐՈՂԻՉ. ԻՆՏԻՏՄԻՒՏԻ  
ԵՐԵՎԱՆ 1940 Վ